



**Գ Լ Ո Ր Բ Ո Ւ Մ**

*ԱԶԳԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ*

**3(7)**

ԵՐԵՎԱՆ

2009

# ԳԼՈՒԲՈՒՍ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 3 (7), 2009

**ԳԼՄԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**  
*Գազիկ Հարությունյան*

**ԳԼՄԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ**  
*Աննա Շամակոյան*  
*Ռուբեն Մելքոնյան*

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**  
*Էդուարդ Դանիելյան*  
*Լուսինե Քաղրամյան*  
*(պատասխանատու քարտուղար)*  
*Խոնարհիկ Քարաուղլանյան*  
*(պատասխանատու խմբագիր)*  
*Սնակ Սարուխանյան*  
*Տիգրան Հարությունյան*

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՐՎԱԾՔ**  
*Դիանա Գալստյան*

### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<b>Գազիկ Հարությունյան</b> «Ուղեղային կենտրոններ» և ազգային անվտանգություն .....	3
<b>Արեստակես Միմավորյան</b> Թուրքական վերլուծական կենտրոններ. տեսություն և արդիականություն .....	8
<b>Կլոդ սեղան</b> «Հոգևոր անվտանգության խնդիրների շուրջ» .....	20
<b>Իզոբ Բաղիրյան</b> Հանրային գիտակցության կառուցումը. իշխանություն և էլիտա .....	37
<b>Մամիկ Մարտիրոսյան</b> Տեղեկատվական պատերազմում սոցիալական ցանցերի օգտագործումը Իսրայելի կողմից .....	53
<b>Ռուբեն Մելքոնյան</b> Թուրքիայի հայության խնդիրների շուրջ .....	63

**«ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ» ԵՎ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

***Գազիկ Հարությունյան***

Արդի ժամանակաշրջանում քաղաքակրթական-ազգային և պետական համակարգերի անվտանգությունը, մասնավորապես՝ արդյունավետությունն ու մրցունակությունը, առավել քան նախկինում պայմանավորված են այդ համակարգերի ունեցած մտավոր ռեսուրսների քանակով, որակով, դրանք կազմակերպելու և իրենց շահերին համապատասխան նպատակաուղղված կիրառելու ունակությամբ: Հայտնի է նաև, որ բացի ավանդական գիտակրթական կառույցներից, ակադեմիական բնույթի ինստիտուտներից և բուհական հաստատություններից, մտավոր ռեսուրսների կազմակերպման կարևոր ձևաչափ են հանդիսանում նաև հատուկ հետազոտական կենտրոնները: Նման կառույցները հայկական տեղեկատվական դաշտում ընդունված է անվանել «ուղեղային կենտրոններ» (ՈւԿ): Հատկանշական է, որ Արևմուտքում ՈւԿ-ները ավելի հաճախ կոչվում են «մտքի ֆաբրիկաներ», «ազգային շահ արտադրող» կամ «գաղափարախոսություն ստեղծող» կազմակերպություններ՝ այդպիսով վերագրելով դրանց ավելի դինամիկ իմաստ: Բնորոշ է նաև, որ կայացած ՈւԿ-ների կառուցվածքում հաճախ տեղ են գտնում նաև կրթական կենտրոններ, որոնց նպատակն է ազգային ընտրանին համալրել գաղափարապես, ստեղծագործ և մասնագիտորեն լավ պատրաստված կադրերով:

***Դասական «ուղեղային կենտրոնների»  
խնդիրները և կառուցվածքը***

Դասական ՈւԿ-ների (որպես այդպիսին ավանդաբար ընդունված է համարել Երկրորդ համաշխարհայինից հետո ստեղծված և իրենց հանրությունում արդեն ինստիտուցիոնալ կարգավիճակ ձեռք բերած ՈւԿ-ները) խնդիրն է ազգային անվտանգության (ԱԱ) համատեքստում նորարարական գաղափարներ, հեռանկարային նախագծեր, հայեցակարգեր, տարաբնույթ ռազմավարական-մարտավարական մշակումներ, փորձագիտական խորհրդատվություններ տրամադրել պետական-քաղաքական (հաճախ՝ նաև հոգևոր) կառույցներին և ազգային ուղղվածություն ունեցող կապիտալը ներկայացնող ընկերություններին: Օրինակ, ամերիկյան ՌԵՆԴ-ին են պատկանում, մասնավոր-

րապես՝ «տեղեկատվական պատերազմ», «ցանցակենտրոն-տեղեկատվական համակարգ» հասկացությունների ձևավորումը, դրանց հետագա հայեցակարգային կատարելագործումը և կիրառական տեխնոլոգիաների վերածումը: Համարվում է, որ նաև նման մշակումների շնորհիվ է, որ Միացյալ Նահանգներն առաջատար դիրքեր է գրավում գլոբալ հարթությունում:

ՈւԿ-ների արդյունավետ գործունեությունը հնարավոր է միայն այն հանրություններում, որտեղ առկա են, մասնավորապես, հետևյալ պայմանները.

1. Պետական-քաղաքական և տնտեսական համակարգում *ՄՄ* համատեքստում մտավոր ռեսուրսների գործոնի կարևորության ըմբռնումը, այդ ոլորտին անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու կամքը և կարողությունը<sup>1</sup>,
2. պետական-քաղաքական համակարգի կողմից ՈւԿ-ների գործունեությունն ազգային շահերին համաձայն ուղղորդելը<sup>2</sup>, ինչպես նաև ՈւԿ-ներից ստացված արդյունքները գործնական հարթությունում կիրառելու այդ համակարգի կազմակերպչական ունակությունը,
3. ՈւԿ-ները սնուցող համապատասխան ակադեմիական և բուհական միջավայրի առկայությունը,
4. ՈւԿ – պետություն, ազգային կապիտալ – ակադեմիական և բուհական գիտություն օղակների փոխհարաբերություններն ապահովող արդյունավետ մեխանիզմների առկայությունը:

Որպես կանոն, սովյալ պետության ՈւԿ-ները կազմում են համացանց և գործում են փոխլրացման սկզբունքների համաձայն. արդարացիորեն համարվում է, որ նման համագործակցությունը խիստ արդյունավետ է և հաճախ հանգեցնում է սիներգետիկ էֆեկտների:

Նկատենք, որ ՈւԿ-ների համակարգի ստեղծումը աշխատատար և երկարատև գործընթաց է. այն պահանջում է համապատասխան «դպրոցների» և ավանդույթների ձևավորում, կրեատիվ կադրերի պատրաստման տարաբնույթ մեթոդիկաների կիրառում (օրինակ, ամերիկյան ՌԵՆԴ կորպորացիան շտրեհայի հետազոտողների «բացահայտումը» նախընտրում է սկսել դպրոցներից) ու, թերևս ամենակարևորը, հանրության կողմից նման ՈւԿ-ների անհրաժեշտության գիտակցությունը:

<sup>1</sup> Դա չի բացառում, որ որոշ ՈւԿ-ներ կայացման և զարգացման որոշակի փուլում իրենց ինովացիոն մշակումների հիման վրա սկսում են իրագործել նաև կոմերցիոն նախագծեր կամ նման նախագծերի համար ստեղծում են համապատասխան մասնաճյուղեր կամ ընկերություններ: Մասնավորապես, շրջանառության մեջ գտնվող համակարգչային «ռազմավարական խաղերի» մի մասը նման գործունեության արդյունք է:

<sup>2</sup> Հատկանշական է, որ վերլուծաբանական գրականությունում կարելի է հանդիպել այն տեսակետին, թե որոշ երկրների ՈւԿ-ներին այսօր հատուկ են նաև կորպորատիվ շահեր, որոնք որոշ պարագաներում կարող են ավելի գերադասվել, քան ազգային շահերը:

Պետք է նաև ամրագրել, որ ՈւԿ-ների համակարգը հիմնվել և առավել զարգացած ու ինստիտուցիոնալ բնույթ է ընդունել Միացյալ Նահանգներում: Միևնույն ժամանակ, այսօր գրեթե բոլոր կայացած երկրներում հիմնվել են նմանատիպ կառույցներ, որոնք կրում են իրենց հանրություններին բնորոշ առանձնահատկություններ:

Համաձայն փորձագիտական մոտեցումների, ՈւԿ-ների համակարգի կայացվածությունը տվյալ հանրության *ԱԱ* կարևորագույն ցուցիչներից է: Եթե անգամ նման պնդումը դիտարկենք ֆորմալ տեսանկյունից, ապա այն արդարացված է. մտավոր ռեսուրսները տեղեկատվական անվտանգության (*SU*) գլխավոր բաղադրիչներից են, իսկ *SU* գործոնի անտեսումը տեղեկատվական դարաշրջանում խիստ խոցելի է դարձնում ցանկացած հանրության *ԱԱ* համակարգը:

### ***Խորհրդային և հետխորհրդային իրողություններ***

Նպատակ ունենալով դիտարկել հայկական մտավոր ռեսուրսների կազմակերպման խնդիրները՝ հնարավոր չէ չանդրադառնալ խորհրդային գիտական համակարգին, որի մասն էին կազմում ՀՀ-ում գործող հետազոտական կառույցները:

ԽՍՀՄ-ում գործում էին մի շարք կազմակերպություններ, որոնք, կրելով խորհրդային համակարգին բնորոշ յուրահատկությունները, այս կամ այն չափով իրագործում էին ՈւԿ-ներին բնորոշ գործունեություն: Որոշ պարագաներում նման կառույցները ներկայացնում էին ակադեմիական ինստիտուտներ. այդպիսին է, օրինակ, Ռուսաստանի ԳԱ ԱՄՆ և Կանադայի ինստիտուտը, որը հաջողությամբ գործում է առայսօր: Այդօրինակ ՈւԿ-ները, գլխավորապես տեղակայված լինելով Մոսկվայում, անմիջականորեն սպասարկում էին տերության քաղաքական ղեկավարությանը՝ «կենտրոնին», որը բացարձակ մենատեր էր արտաքին և ներքին քաղաքականության ոլորտում: Միութենական հանրապետությունների ղեկավարությունը ընդամենը կատարում էր «կենտրոնի» դիրեկտիվները և ՈւԿ-ների կարիքը չունեւր և, անգամ ցանկության ու կարիքի պարագայում, թերևս չէր էլ կարող ունենալ նման կառույցներ: Այդպիսով՝ ՈւԿ-ների տիպի կառույցների ստեղծման և գործունեության կազմակերպման մշակույթը, բացառությամբ սակավաթիվ դեպքերի, միութենական հանրապետություններում, դրանց թվում՝ Հայաստանում, չէին ձևավորվում<sup>3</sup>: Այդ համատեքստում առանձնահատուկ տեղ էին գրավում ուսումնասիրությունները հայկական Մփյուռքի ուղղությամբ, որի կարևորությունը «կենտրոնն» ըմբռնում էր, և, բնականորեն, ոլորտի «պատվերները» Երևանին էին «իջեցվում»:

<sup>3</sup> Հարկ է նշել, որ իրադրությունն այլ էր, օրինակ, բնագիտության ոլորտում, որտեղ առանձին անհատների և ազգային հատկանիշների շնորհիվ, Երկրորդ հանրապետությունում գործում էին համամիութենական, իսկ երբեմն անգամ՝ համաշխարհային մակարդակի առաջատար գիտական կենտրոններ:

### **ՈւԿ-ները Երրորդ հանրապետությունում**

ԽՍՀՄ փլուզմանը զուգընթաց, կազմալուծվեց նաև խորհրդային գիտական համակարգը: Բավական է նշել, որ Երրորդ հանրապետությունում այսօր գիտությանը հատկացվում է \$20-30 մլն, մինչդեռ նախորդ դարի 80-ականներին ոլորտի ֆինանսավորումը կազմում էր շուրջ \$600 մլն<sup>4</sup>: Մինևույն ժամանակ, այսօր հանրապետությունում գործում են ՈւԿ-ների տիպի ավելի քան 30 հաստատություններ, որոնք, սակայն, պատվերներ և համապատասխան նյութական աջակցություն ստանում են այլ երկրներից և միջազգային կազմակերպություններից: Նման հաստատությունների աշխատանքները նպատակաուղղված են դեպի իրենց պատվիրատուները և, այսպիսով, միշտ չէ, որ կարող են սպասարկել մեր ազգային շահերը: Սակայն դա չի նշանակում, թե պետք է անտեսել այդ կենտրոնների գործունեությունը և չփորձել օգտագործել դրանք հանուն մեր պետական շահերի. դա հատկապես վերաբերում է սոցիոլոգիական և տնտեսագիտական ոլորտի հետազոտություններին, որոնց արդյունքների համալիր վերլուծությունը պետք է որ օգտակար լինի: Այլ խնդիր է, որ այդ արդյունքները միշտ չէ, որ հասանալի են հանրությանը:

2000-ից, երբ հանրապետության տնտեսությունը սկսեց վերականգնվել, իշխանության որոշ օղակների և ընտրանու առանձին ներկայացուցիչների նախաձեռնությամբ հիմնվեցին նաև ազգային պատվերներ կատարող ՈւԿ-ներ: Նշենք, որ դրանց գործունեության սկզբնական փուլում կային բազմաթիվ անբարենպաստ գործոններ, որոնցից նշենք մի քանիսը.

1. պետական - ազգային - քաղաքական մարմինների, ինչպես նաև բիզնես կառույցների թերահավատությունը մտավոր, հատկապես՝ հայրենական<sup>5</sup> մտավոր «արտադրանքի» նկատմամբ,
2. ազգային գիտության անբավարար վիճակը, հատկապես *ԱԱ* տեսանկյունից հրատապ ոլորտներում, ինչն իր հերթին պայմանավորում է վերլուծաբանական հանրության ոչ այնքան բավարար մակարդակը,

<sup>4</sup> Մինևույն ժամանակ, տպավորությունն այնպիսին է, որ անգամ այդ սուղ միջոցները, մասնավորապես՝ հումանիտար ոլորտում, միշտ չէ, որ նպատակաուղղված են տնօրինվում: Երբեմն ֆինանսավորվում են հետազոտություններ, որոնք հրատապ չեն և նույնիսկ մարզինալ բնույթ են կրում, իսկ սփռված Հայության հիմնախնդիրների հետազոտություններն անտեսվել են և միայն վերջերս են սկսել վերականգնվել շնորհիվ նորաստեղծ Սփյուռքի նախարարության ջանքերի: Հատկանշական է նաև, որ չնայած ֆինանսավորման ծավալների նվազմանը, բնավ չի պակասել գիտական կոչումներ ստացողների թիվը. այդ գործընթացն այսօր ակնհայտորեն այլ, ոչ գիտական իմաստավորում է ստացել:

<sup>5</sup> Նման իրողությունը փորձագիտական հանրությունում ընդունված է որակել որպես «ներմուծողի» հոգեբանության արտահայտություն: Սակայն Հայության պարագայում այդօրինակ թերահավատությունը բնորոշ է նաև Սփյուռքի ազգային և տնտեսական կառույցների ներկայացուցիչներին:

3. ՈւԿ կառույցների ձևավորման և ղեկավարման մշակույթի ընդհանուր պակաս քաղաքական էլիտայում և փորձագիտական հանրությունում:

Ներկայումս իրավիճակը մասամբ բարելավվել է, չնայած որոշ անբարենպաստ հանգամանքներ (հատկապես ազգային գիտության անմխիթար կարգավիճակը) շարունակական բնույթ են կրում: Միննույն ժամանակ, արձանագրված առաջխաղացումը դեռևս դժվար է բավարար համարել: Եղած հիմնախնդիրներից առանձնացնենք հետևյալները.

- ՈւԿ-ների մշակումների արդյունքները, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, էական ազդեցություն չեն գործում պետական-քաղաքական էլիտայի ու հասարակության գործունեության վրա, այսինքն՝ Հայրենական ՈւԿ-ները դեռևս չեն վերածվել ինստիտուցիոնալ կառույցների,
- ՀՀ-ում գործող ՈւԿ-ների թեմատիկ ուղղվածությունն ազգային շահերի համատեքստում երբեմն օպտիմալ չէ, նրանց ընդհանրական գործունեությունը դժվար է անվանել համակարգված: Չնայած իրենց սակավությանը՝ ՀՀ ՈւԿ-ները միմյանց հետ անբավարար են համագործակցում, իսկ համացանցային աշխատանքը դեռևս չի ձևավորվել,
- ԱԱ համատեքստում իրագործվող տեսական-գործնական մշակումների արդյունավետությունն այսօր պայմանավորված է տարաբնույթ մեթոդների յուրացման և կիրառման հնարավորությունով, մինչդեռ դրանց ձեռքբերումը և համապատասխան կադրերի պատրաստումը խիստ ծախսատար գործընթացներ են, որոնց համար միշտ չէ, որ հնարավոր է ստանալ պետական աջակցություն,
- ազգային կապիտալի ներկայացուցիչների մի զգալի մասի մոտ դեռևս չի ձևավորվել ՈւԿ-ների անհրաժեշտության և կարևորության գիտակցությունը:

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### *Արեստակես Միմավորյան*

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխությունները, որոնք անմիջականորեն անդրադառնում են հասարակությունների ու պետականությունների վրա, վերլուծվում և գնահատվում են ոչ միայն ակադեմիական կառույցների կողմից: Դրանով զբաղվում են նաև վերլուծական կենտրոնները, որոնք արևմտյան հասարակությունում ստացել են «*think-tank*»<sup>1</sup>, այլ կերպ՝ «ուղեղային կենտրոն» անվանումը (այսուհետ՝ ՈւԿ): ՈւԿ-ների հետազոտության ոլորտներն այնքան բազմազան են, որ մասնագիտական գրականությունում շատ անգամ հնարավոր չի լինում այդ կառույցներին կոնկրետ սահմանում տալ<sup>2</sup>:

Թուրքիայի ՈւԿ-ներն այսօր ուսումնասիրում են բազմաթիվ բնագավառներ՝ քաղաքագիտականից մինչև սպորտային, իսկ համացանցային և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, գիտակրթական նորանոր ձեռքբերումների հետ միասին մատչելի դարձավ նաև տեղեկություն ստանալը, ինչն առաջ բերեց նաև տեղեկատվական հոսքերի ընդգրկուն տիրույթ: Եվ շատ դեպքերում կենտրոնները հիմնվեցին այդ տիրույթում եղած տեղեկատվական նյութի հայթայթման, մշակման, վերահսկման և վերլուծման համար: Սակայն նման կառույցների հիմնումը միայն վերոհիշյալ գործոնների հետ չէր կապ-

<sup>1</sup> 1950-ական թթ. «*think tank*»-ը «ուղեղային տրեստ» էր համարվում, որը երբեմն համարժեք էր դառնում «*brain trust*» արտահայտությանը: 20-րդ դ. առաջին կեսին տերմինը գլխավորապես օգտագործվում էր պետական վերլուծական կառույցների համար: Հայտնի նման «տրեստներից» էր ԱՄՆ նախագահ Ֆ.Դ. Ռուզվելտի վերլուծական կենտրոնը: «*Think tank*» տերմինը սկսեց օգտագործվել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, որով առավելապես նշվում էին բրիտանական և ամերիկյան պետական ռազմավերլուծական կառույցները: Պատերազմից հետո տերմինի նշանակությունը լայնացավ, այն բնութագրում էր արդեն ցանկացած քաղաքագիտական-փորձագիտական կառույց (Федор Войтоловский, «Производство» интеллектуального пространства мировой политики, <http://www.intertrends.ru/eleventh/008.htm>).

<sup>2</sup> ՈւԿ դիպուկ ձևակերպում կա ՄԱԿ փաստաթղթերից մեկում. «Ուղեղային կենտրոնը» կազմակերպություն է, որը կատարում է հետազոտություն և քաղաքական տարբեր ասպեկտների համար առաջարկություններ ի հայտ բերում: Նմանատիպ կառույցները «կամուրջ» են գիտական շրջանակների և իշխանության միջև» (А.И. Сенаторов, Японские «мозговые центры», <http://www.japan-assoc.ru/publikacii/nauka/japon-opyt-2007-1/japonskie-mozgovye-centry.html>).



ված. դրանց ի հայտ գալուն նպաստում էին նաև աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումները:

Ավանդաբար ՈւԿ-ների առաջացումը շաղկապվում է ԱՄՆ պետության պատմության հետ, որի ձեռքբերումներն այս ոլորտում շոշափելի են: Այսօր ԱՄՆ-ը տարրադրաբար հետազոտություններ կատարող ՈւԿ-ների առաջատար երկիր է: ՈւԿ-ն համարվում է ամերիկյան հայտնագործություն, առաջատար համարվող կենտրոնների փորձագիտական մտքի հետ հաշվի են նստում ԱՄՆ պետական համակարգի պաշտոնյաները: Դրանք ազդեցիկ դերակատարում ունեն հասարակության կարծիքի ձևավորման հարցում: ԱՄՆ փորձը դասական օրինակ դարձավ մի շարք եվրոպական երկրների համար, որոնք աստիճանաբար անցան ՈւԿ-ների ամերիկյան մոդելին՝ այն հարմարեցնելով իրենց պետական ռազմավարական հիմնահարցերին:

Հետ չմնաց նաև Թուրքիան, որի վերլուծական կենտրոնների հիմնադրման մեջ մեծ դերակատարում ունեցան ԱՄՆ առանձին գերատեսչություններ, հատկապես ռազմական ոլորտի փորձագետները: Թուրքիայի ՈւԿ-ների ստեղծման պատմությունը ներկայացնենք երկու մասով:

### ***1. Առաջին սերնդի թուրքական վերլուծական կենտրոնները***

Թուրքիայի վերլուծական կենտրոնների՝ «թինկ-թանկ»-երի ծագման ուսումնասիրությունը միայն վերջերս է հայտնվել թուրքական գիտավերլուծական շրջանակների ուշադրության կենտրոնում: Այդ ուսումնասիրություններն ընդամենը մի քանիսն են<sup>3</sup>, որոնցում ավելի շատ անդրադառնում են դրանց գոյության, տեսակների և քանակի, այլ ոչ թե կազմակերպչական, կառավարման և այլ բնույթի հարցերին: Այսօր Թուրքիայում ռազմավարական հետազոտություններ իրականացնող ավելի քան 50 կենտրոն կա, սակայն ոչ բոլորն են, որ կարողանում են իրենց անվանը համարժեք գործունեություն ծավալել: Մասնավորապես՝ այն կենտրոնները, որոնք զբաղվում են քաղաքական, սոցիալական, տնտեսական, ռազմական և այլ խնդիրներով, աշխատում են ձեռք բերել հետազոտական կենտրոնի համբավ երկրի ներսում, այլապես բավական արագ հեղինակագրվում են և «դադարում» գործել: «Առաջին սերնդի» թուրքական կենտրոնների ի հայտ գալը պայմանավորված էր մի շարք գործոններով, դրանք բազմաթիվ թելերով կապված էին միջազգային և տարածաշրջանային կարևոր փոփոխությունների, Մերձավոր Արևելքում տեղի ունեցող արաբա-իսրայելական պատերազմների և, անկասկած, Կիպրոսյան խնդրի հետ:

<sup>3</sup> *Fatih Keskin*, Modern Demokrasilerde Yeni Politik Seckinler: Think Tanklar ve Politikadaki Rollerini, Sosyo-Ekonomi Dergisi, Ocak-Haziran, 2005, Ankara, Murat Bilhan, Stratejik Araştırma Merkezleri, Stratejik Rapor NO: 30, Eylül, 2008, Istanbul.

Տարածաշրջանային այս երկու խնդիրներն անմիջական ազդեցություն ունեցան թուրքական պետականության ռազմավարական նոր մտքի ձևավորման վրա և դարձան առաջին կենտրոնի՝ *DPE-ի*<sup>4</sup> (*Diş Politika Enstitüsü* - Արտաքին քաղաքականության ինստիտուտ) ստեղծման նախահիմքը: Բայց պետական նշանակության խնդիրների քննարկմամբ, վերլուծմամբ Թուրքիայում զբաղվում էին մտավոր հզորություններով չզիջող Ազգային անվտանգության, պաշտպանության նախարարության և արտգործնախարարության հատուկ «անալիտիկ» խմբերը, որոնց համապատասխան աշխատանքը պետության միակ վստահելի աղբյուրն էր: Այսպիսի խմբերը միայն 90-ական թվականներին կարողացան ըմբռնել կենտրոն ունենալու կարևորությունը, ընդ որում՝ այդ քայլին գնացին պետության անմիջական հրահանգով:

1974թ. ստեղծված Արտաքին քաղաքականության ինստիտուտի մեկնարկային աշխատանքը, որն արևմտյան նորույթ էր Թուրքիայի համար, սկզբում չխրախուսվեց պետության կողմից: Վերջինս խիստ մոտեցում ուներ արտաքին քաղաքականությանն առնչվող ցանկացած խնդրի հանդեպ և համարում էր, որ նման վերլուծությունները միայն իր և մասնավորապես ԱԳՆ-ի խնդիրն է: Կենտրոնի հիմնադրման գործում մեծ էր նաև արտաքին քաղաքականության գծով ԱՄՆ խորհրդի դերը, որին մասնակցություն ունեցավ ներկայումս գործունեությունը դադարեցրած իտալական հետազոտական մի ինստիտուտ: Վերջիններիս մեթոդաբանական մշակումները ներդրվեցին *DPE-ի* աշխատանքային կանոնակարգման մեջ<sup>5</sup>:

Եթե Թուրքիայի արտաքին քաղաքական խնդիրները գերատեսչական մարմիններին վերապահված ֆունկցիաներ էին և փակ համակարգով էին գործում, ապա *DPE-ն* իր «մտավոր արտադրանք»-ին հաղորդակից դարձրեց հասարակության լայն խավերին՝ դառնալով 70-ական թվականներին հիմնված միակ ու նաև առաջին ինքնաֆինանսավորվող կենտրոնը: Այն այսօր էլ սերտ գիտական կապեր ունի Իսրայելի (Բար-Իլանի համալսարանի «Բեզին Սադաթ» ռազմավարական հետազոտությունների կենտրոն) և ԱՄՆ-ի հետ<sup>6</sup>, նաև ակտիվ համագործակցում է Թուրքիայի միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամի (*Türkiye Uluslararası İlişkiler ve Stratejik Araştırmalar Vakfı*) հետ: Տեղակայված է Անկարայում գտնվող Բիլքենթի համալսարանում և վերջինիս ենթակառույցն է:

<sup>4</sup> Այս կենտրոնի ստեղծման հիմք է հանդիսացել «*Foreign Policy*-Արտաքին քաղաքականություն» ամսագիրը, որը հրատարակվում է 1971 թվականից: Բազմաթիվ կենտրոններ անցել են այսպիսի ճանապարհ, մասնավորապես՝ Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը և այլն:

<sup>5</sup> *С.В. Кизюков*, *Внешнеполитические концепции республиканской Турции*, Бишкек, 2006, с. 148.

<sup>6</sup> *С.В. Кизюков*, նույն տեղում, с. 150.

Բիլքենթի համալսարանի հետ համատեղ աշխատելն ունի իր բացատրությունը: Սովորաբար համալսարանների ենթակայության տակ են անցնում այն կենտրոնները, իհարկե, սեփական նախաձեռնությամբ, որոնք մի քանի տարի գործելուց հետո սկսում են կորցնել իրենց հաստատուն դիրքերը նմանատիպ կառույցների կողքին (շատ դեպքերում ոչ ճիշտ աշխատանքային կազմակերպման, ոչ ակտուալ թեմաների ուսումնասիրության և սուղ ֆինանսական միջոցների պատճառով) և նախընտրում են իրենց «ինտելեկտուալ ռեսուրսների» վերաբաշխման գործում ապավինել համալսարաններին: Հատկապես ֆոնդային բուհերի համար սա ընդունված կարգ է, այն շահավետ «գործարք» է դառնում՝ բարձրացնելով համալսարանների վարկանիշը, ինչպես նաև պատրաստի գիտական կադրերին ներգրավում կենտրոնների աշխատանքին: Կամ հակառակը՝ ոչ հայտնի կենտրոնները, ճանաչում ունեցող համալսարանների միջոցով փորձում են ամրապնդել իրենց հեղինակությունը: Բայց նույնիսկ այս պարագայում աշխատանքներն ուսումնասիրում են ոչ այնքան պետական առաջնահերթ խնդիրներ, այլ ավելի շատ հիշեցնում են ռեֆերատներ կամ դիպլոմային աշխատանքներ: Նման մեթոդիկական աստիճանաբար ՈւԿ-ին հեռացնում է իր առանցքային խնդիրներից: Այն դառնում է «հարմարվող», փոխակերպվում «ամբիոնի» կամ որևէ «ուսումնասիրող բաժնի» իր գործունեությամբ դառնալով սակավ արդյունավետ:

Հենց սկզբից *DPE-ի* նկատմամբ պետության բացասական դիրքորոշումն ակնհայտորեն կասեցրեց նոր կենտրոնների ստեղծման հնարավորությունները: Այս իրավիճակը պահպանվեց ընդուպ մինչև 80-ականների կեսերը: Սակայն առաջին նախադեպը որոշակի հետաքրքրություն առաջացրեց առանձին պետական և մասնավոր կազմակերպությունների շրջանում, որոնք տարբեր ճանապարհներով փորձեցին ստեղծել իրենց սեփական կենտրոնները: 80-ականներին, թերևս, կային հիշատակման արժանի մի քանի կենտրոններ: Ճիշտ է թուրքական աղբյուրները նշում են, որ դրանք այն ժամանակներում «թինկ-թանկ» չեն կոչվել<sup>7</sup>, այդուհանդերձ, երկար ճանապարհ են անցել և այսօր միանշանակ ձեռք են բերել «թինկ-թանկ»-ին բնորոշ աշխատանքային ոճ:

*DPE-ից* հետո ստեղծվեցին մի քանի հետաքրքիր կենտրոններ, առաջին անգամ սկսեցին ուսումնասիրվել նոր ուղղություններ: Սկզբնապես արտաքին քաղաքականության թեմատիկական գերակա էր: 1984թ. «թինկ-թանկային» համակարգով սկսեց աշխատել Թուրքիայի ԱԳՆ կառույցում հիմնված Թուրքարաբական ուսումնասիրությունների հիմնադրամը, այն 1991թ. (այլ տվյալներ

<sup>7</sup> «Թինկ-թանկ»-ի վերաբերյալ մանրակրկիտ ուսումնասիրություն կատարած Մուսա Չաքմաքը նշում է, որ Թուրքիայում գործող «մտավոր կառույցները» իրենց աշխատանքային գործունեությամբ ամենևին էլ արևմտյան նմանատիպ կազմակերպությունների հետ չեն կարող համեմատվել: *Hasim Söylemez, Murat Uçar, Ne kadar demokrasi o kadar bilgi, Aksiyon Dergisi, sayı 287, http://www.aksiyon.com.tr/detay.php?id=14345*

րով՝ 1992 թվականից<sup>8</sup>) վերափոխվեց Մերձավորարևելյան և բալկանյան հետազոտությունների հիմնադրամի (*OBIV- Ortadoğu ve Balkan İncelemeleri Vakfı*), որի ստեղծմանը մեծապես նպաստել է Թուրքիայի այդ տարիների արտգործնախարար Վահիթ Մելիհ Հալեֆօղլուն:

Այս կենտրոնի աշխատանքային ղեկավարումն ամբողջապես դիվանագիտական կորպուսի ձեռքում էր: Այն հիմնականում աշխատում էր պետական համակարգի համար, բայց այդ հանգամանքը չէր խանգարում, որպեսզի հասարակությունը հաղորդակից դառնա վերջինիս աշխատանքներին: Կենտրոնը հետագայում ունեցավ նոր մրցակից հանձին 1995թ. հիմնադրված *SAM-ի (Stratejik Araştırmalar Merkezi-Ռազմավարական հետազոտությունների կենտրոն)*, որը նույնպես ԱԳՆ-ին ենթակա կառույց է: Այն իր արագ և որակյալ աշխատանքով ստվերում թողեց *OBIV-ի* հնացած աշխատանքը: Շատ դեպքերում պատճառը նաև տարածաշրջանային հետազոտությունների պահանջարկի բացակայությունն էր: Այս ամենը հանգեցրեց նրան, որ *OBIV-ը* անջատվեց ԱԳՆ-ից և սկսեց գործել անհամեմատ ավելի բաց կարգով՝ վերջինիս հետ պահպանելով նախկին հարաբերությունները: Սա դասական օրինակ է, որը ցույց է տալիս, որ նույն ոլորտներն ուսումնասիրող և միևնույն համակարգից «սնվող» կենտրոնները, անկախ իրենց կամքից, դառնում են մրցակիցներ, ինչի արդյունքում մեկի «ճակատագիրը» կանխորոշված է լինում՝ կամ կազմալուծվում է, կամ մյուսի հետ միանալով՝ շարունակում է աշխատանքը:

Հաջորդ էական փոփոխությունը բնավ քաղաքագիտական կամ տարածաշրջանային հետազոտություններ կատարող կառույցի հետ կապված չէր, ինչը սովորաբար նորաստեղծ «թինկ-թանկերի» համար համարվում էր ուսումնասիրվող ոլորտների անբաժանելի մաս: Խոսքը ժողովրդավարական արժեքների ներմուծման և տարածման համար նախատեսված կազմակերպությունների մասին է: 1980-ականների վերջին թուրք հասարակությանը եվրոպական արժեքներին ծանոթացնելու և դրան ինտեգրելու քայլեր ձեռնարկվեցին, որին իրենց մասնակցությունն ունեցան որոշ ոչ պետական պատվերային սկզբունքով աշխատող հիմնադրամներ:

Հայտնի է, որ ժողովրդավարացման ծրագրերով գործող բազմաթիվ եվրոպական կազմակերպություններ (բնականաբար՝ սեփական ֆինանսավորմամբ) այսօր մասնաճյուղեր են բացել տարբեր երկրներում՝ դրանք դարձնելով «դեմոկրատիայի գործիքներ»: Առաջ եկավ պատվերով աշխատող հիմնադրամների առաջին սերունդը: 1987թ. հիմնադրվեց Թուրքիայի դեմոկրատիա հիմնադրամը (*TDV-Türkiye Demokrasi Vakfı*)՝ «Քոնրադ Ադենաուր» հիմնադրամի անմիջական աջակցությամբ: Թվում էր, թե արտաքին կազմակերպությունների կողմից ազատամիտ գաղափարների ներմուծումն անհաջո-

<sup>8</sup> <http://www.obiv.org.tr/tarih.html>

դության կմատնվի, սակայն շատ չանցած նույնատիպ «առաջադրանքով» ստեղծվեց ևս մեկ կենտրոն: Այս անգամ «Ֆրիդրիխ Էբերտ»-ի հիմնադրամի ուժերով ստեղծվեց *TÜSES-ը (Türkiye Sosyal Ekonomik Siyasal Araştırmalar Vakfi)* Թուրքիայի սոցիալական, տնտեսական, քաղաքական հետազոտությունների հիմնադրամը:

Այս երկու հիմնադրամների ստեղծումը բավական ուշագրավ հարցադրումներ է առաջ բերում. հաշվի առնելով, որ վերջիններիս «մտավոր արտադրանք»-ը միայն ժողովրդավարական սկզբունքների վրա էր հենված, ապա դրանց ստեղծման ժամանակահատվածը պետք է որ պատահականորեն ընտրված չլիներ:

Դիտարկելով թուրքական հասարակության դանդաղ տեմպերով ընթացող փոփոխությունները՝ կարելի է պնդել, որ արդյունավետության տեսանկյունից «արևմտագաղափարակիր» այդ կառույցների դերը բավական մեծ է եղել: Թեև այս երկու կենտրոնները շարունակում են գործել, սակայն նախկին հեղինակությունն ու ազդեցությունը չունեն: Նրանց փոխարինելու եկան ավելի բազմաշերտ հիմնահարցերով զբաղվող, նույն գաղափարներով առաջնորդվող կազմակերպություններ, առաջ քաշվեցին այնպիսի խնդիրներ, որոնք նախկինում ուղղակի դեմ էին համարվում Թուրքիայի ազգային շահերին: Մասնավորապես՝ վտանգավոր էր խոսել քրդական հարցի, Հայոց ցեղասպանության, Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված խնդիրների մասին: Այս խնդիրներից առաջինի և վերջինի վերաբերյալ ծավալվող զարգացումների շուրջ դրական քննարկումներ կատարում է միայն *TESEV*<sup>9</sup>-ի՝ Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի դեմոկրատացման նախագծով խնդիրների ուսումնասիրման բաժինը, որի ղեկավարը Թուրքիայում հայ կաթոլիկ համայնքը ներկայացնող և «Ա-կոս» թերթի գլխավոր խմբագիր Էթիեն Մահչուփյանն է:

Այս սերնդի ՈւԿ-ների մեջ մեծ ճանաչում ունի նաև 1985թ. հիմնված Մարմարայի խմբի ռազմավարական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը (*Marmara Grubu Stratejik ve Sosyal Araştırmalar Vakfi*): Առաջին հայացքից թվում է, թե այս հիմնադրամը միայն սոցիալական ռազմավարության հետ կապված ծրագրերի հայեցակարգային մշակումներով է զբաղված: Իհարկե, այս գործոնը կա, բայց դա միայն իրական աշխատանքն ստվերելու միջոց է: Այստեղ կենտրոնացված մարդկային ռեսուրսները «չափավոր քեմալականներ» են, այսինքն՝ «հանրապետականության» ջատագովներ:

<sup>9</sup> Հիմնադրամը (հիմն. 1994թ.) ֆինանսավորվում է միանգամից մի քանի երկրների՝ Նիդեռլանդների, Մեծ Բրիտանիայի, մի շարք կազմակերպությունների՝ Սորոսի «Բաց Հասարակություն» հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից, *TESEV Başkanı Can Pakerden ilginç açıklamalar*, <http://haber10.com/haber/26315>

Հետաքրքիր է, որ ներկայումս Մարմարայի խումբը (այսուհետ՝ ՄԽ) ակտիվ կապեր է հաստատում այնպիսի երկրների հետ (Ադրբեջան, Մոնղոլիա), որոնք հնարավորություն են ունենում տեղեկատվության փոխանակման և միասնաբար կազմակերպված նեղ հավաքների միջոցով հաղորդակցվել «թյուրքական աշխարհի վերջին նվաճումների» հետ:

Չնայած ՄԽ-ն ոչ պետական կազմակերպություն է, սակայն ՄԱԿ Սոցիալական և տնտեսական խորհրդում ներկայացնում է Թուրքիան՝ որպես խորհրդատու: Բացի դրանից, հավատարմագրված կարգով համագործակցում է ԵԱՀԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի պես կազմակերպությունների հետ, նաև Բալկանյան քաղաքական ակումբի անդամ է: ՄԽ-ն Թուրքիայի առևտրային պալատի և Արդյունաբերողների և գործարարների հիմնադրամի համատեղ գնահատականներով ճանաչվել է 2004 և 2005թթ. Թուրքիայի լավագույն ոչ պետական կազմակերպություն: Այն կարելի է դասել այնպիսի ՈւԿ-ների կազմում, որն առաջին անգամ փոփոխություն մտցրեց կադրային քաղաքականության մեջ<sup>10</sup>:

Հատկանշական է, որ *DPE-ում*, *OBIV-ում* հասկանալի պատճառներով մշտապես ընդգրկվում էին ԱԳՆ գործող կամ պաշտոնաթող դիվանագետներ, ՄԽ պարագայում, որը սոցիալական հետազոտություններով էր զբաղվում, աստիճանաբար աշխատանքներին ներգրավվեցին թուրքական բանակի սպայակազմի ծառայողներ, որոնց ներկայությունն ու մասնագիտությունը չէին համապատասխանում կազմակերպության ուսումնասիրած ոլորտներին: Ռազմական, պաշտպանական համակարգի աշխատակիցների ներգրավումը ոչ պետական ՈւԿ համակարգ ունի խորքային պատճառներ: Այն մինչ օրս էլ պետության «ուժեղ ձեռքի» կողմից կենտրոնը ներսից վերահսկելու և աշխատանքները «ճիշտ կազմակերպելու» համար ձեռնարկված գործընթաց է: Կենտրոնների ազատությանը հակադրելու պրակտիկան դարձել է ոչ միայն այս ոլորտի անբաժանելի մասը, այլև տարիների ընթացքում հղկվել և ձեռք է բերել որոշակի ձևաչափ: Այսինքն՝ կենտրոններն աստիճանաբար կախվածության մեջ են հայտնվում՝ դառնալով «ռազմական խունտայի» փաստացի կամակատարը, որտեղ քաղաքացիական աշխատանքային իրավունքներին փոխարինելու է գալիս զինվորական կանոնադրությունը: Եվ սա բնական է, քանի որ Թուրքիայի քաղաքական կյանքում զինվորականության դերն ու նշանակությունը բավական մեծ են:

ՄԽ-ին պատկանում է ևս մեկ նորամուծություն. առաջին անգամ թուրքական «ուղեղային կենտրոնի» կառուցվածքային համակարգում ստեղծվեց Ակադեմիական խորհուրդ, որը զբաղվում էր ներսում գիտական կադրերի

<sup>10</sup> <http://www.marmaragrubu.org/hakkimizda.htm>

պատրաստման աշխատանքներով: Հետագայում այս նորամուծությունը որևէ կերպ չարտացոլվեց այլ ՈԻԿ-ների աշխատանքային համակարգում, դրա փոխարեն ստեղծվեցին միայն գիտական կամ փորձագիտական խորհուրդներ, որոնց գործառույթները բոլորովին այլ էին:

Հիմնականում այսպես է ընթացել 1970-1990թթ. թուրքական կենտրոնների կայացման առաջին փուլը: Այս ընթացքում ստեղծվեցին մի քանի կենտրոններ, որոնց ուսումնասիրություններն ու հետաքրքրություններն ընդգրկում էին քաղաքագիտականից մինչև իսլամական հետազոտություններ:

## **2. «Երկրորդ սերնդի» թուրքական վերլուծական կենտրոնները**

Առաջին կենտրոններն այդպես էլ չընկալվեցին որպես «թինկ-թանկ»-եր, քանի որ դրանց մեջ չէին տեսնում ամերիկյան ճանաչված կազմակերպությունների հզորությունը: Թուրքական նոր կենտրոններ հիմնելու գաղափարը միանշանակ կապվում է այդ երկրի նախագահ Թուրգույթ Օզալի անվան հետ: Օզալն այս գաղափարը փայփայում էր դեռ 80-ականներին: Հայտնի է, որ թուրքական վերնախավը և հատկապես պետնախարարները, մշտապես մեկնելով ԱՄՆ, որոշակի հետաքրքրություն էին ցուցաբերել «մտավոր» կենտրոնների նկատմամբ: Այսպես՝ նախկին պետնախարար Հասան Ջելալ Գյուզելը 1970թ. վերջին աշխատանքային այցով մեկնել է վաշինգտոնյան մի վերլուծական կենտրոն, ներկա գտնվել «սեմինար» կարգով ընթացող ԽՍՀՄ հնարավոր փլուզման թեմայի քննարկմանը: Բավական տպավորված այդ քննարկումից՝ անմիջապես Թուրքիայում նմանատիպ կենտրոն հիմնելու գաղափար է հայտնել այն ժամանակ վարչապետի տնտեսական խորհրդական Օզալին: Օզալը հարցին չափավոր մոտեցում է ունեցել և ասել, որ ամերիկյան տիպի կառույցների հիմնումը Թուրքիայում հնարավոր չէ<sup>11</sup>:

«Երկրորդ սերնդի» վերլուծական կենտրոնների հետ կապված զարգացումները սկսվեցին 90-ական թթ. սկզբին: Օզալը, որն արդեն Թուրքիայի նախագահն էր և ուներ մեծ լիազորություններ, նաև լիբերալացման ու քաղաքացիական հասարակության ձևավորումը համարում էր անհրաժեշտություն Թուրքիայի համար, աջակցեց ՈւԿ-ների ստեղծմանը: Ժամանակը պատահականորեն չէր ընտրված: Նախ՝ տեղի էին ունեցել մի քանի տարածաշրջանային և աշխարհառազմավարական շրջադարձեր. ԽՍՀՄ և Բալկանյան սոցճամբարի փլուզումը, իրաքյան առաջին պատերազմն այն հիմնական գործոններն էին, որոնք արագացրին ՈւԿ-ների ստեղծումը: Այս ամենին գուզահեռ՝ Թուրքիան ուներ որոշ կազմակերպչական հարցեր գիտակրթա-

<sup>11</sup> *Muhsin Öztürk-Mesut Çevikalp*, Ankara'nın yeni aktörleri, Aksiyon dergisi, Sayı: 715 - 18.08.2008, <http://www.aksiyon.com.tr/detay.php?id=30964>

կան համակարգի հետ կապված: Նման կենտրոնների գործունեության համար անհրաժեշտ էր գիտության ձեռքբերումների օգտագործում, առանց որի՝ ՈւԿ-ների համակարգային-կառուցվածքային կազմակերպումը, նույնիսկ սաղմնային վիճակում, հնարավոր չէր պատկերացնել:

Հայտնի է, որ Միացյալ Նահանգներն այն տերությունն է, որը, թերևս, լավագույնն է ըմբռնել գիտելիքների կարևորությունը և այն օգուտները, որ կա-րելի է ստանալ գիտական հետազոտությունները գործնական կյանքում ներդնելու արդյունքում: Գերտերության հզորությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն բարձր կարգավիճակով, որ ունի գիտաստեղծագործական գործունեության ոլորտն ամերիկյան հանրությունում<sup>12</sup>:

Վերոհիշյալից ելնելով՝ նշենք, որ Թուրքիան երբեք գիտության կազմակերպման հարցերում նախաձեռնություն չի ցուցաբերել (բացի Աթաթուրքի բարեփոխումներից), և դա էր պատճառը, որ ՈւԿ առաջին փորձը դրական ուղիով չընթացավ, քանի որ «ինտելեկտուալ հասարակություն» հանրապետական Թուրքիայում որպես այդպիսին չկար: Միայն 1992թ. Թուրքիայի տարբեր քաղաքներում բացվել են առնվազն 45 համալսարան՝ պետական և ֆոնդային կարգավիճակով: Համալսարանների և ՈւԿ-ների հիմնադրման ժամանակահատվածները համընկնում են. եթե սա պետական քաղաքականություն է՝ ուղղված այն բանին, որ երկուսի հարաբերակցությունը տարիներ անց չթուլանա, այլ զուգահեռ սերտաճի, ապա երևույթն առանձին ուսումնասիրության կարիք ունի: Ընդ որում՝ այսպիսի միտում նկատելի էր նաև 2003-2008թթ., երբ երկու նոր հիմնադրված համալսարանների դիմաց բացվում էր մեկ ռազմավարական հետազոտական կենտրոն: Մինչև 2000թ. ընկած ժամանակահատվածում ստեղծվեցին շուրջ տասը ռազմավարական հետազոտական կենտրոններ, հիմնադրամներ:

Օգալի մահից (1993թ. ապրիլի 17) հետո նրա գաղափարներն իրականացնելու գործընթացը հանձն առավ պետնախարար և կառավարության խոսնակ Յիլդրըմ Աքթունան: 1993թ. հուլիսին հարցը մտավ օրակարգ, որոշվեց, որ ԿՀՎ-ին մոտ կանգնած ամերիկյան հայտնի մասնագետների օժանդակությամբ պետք է ստեղծվի վերլուծական կենտրոն: Տեղի և ամերիկացի մասնագետների դոնփակ քննարկումից հետո հիմնվեց *PPM-ը (Politik Psikolojik Merkezi)* «Քաղաքական հոգեբանական կենտրոն»-ը: ԿՀՎ ներգրավվածությունը նախագծում կասկածի տեղիք տվեց: Աշխատանքները չսկսած՝ հասարակությունում սկսվեցին բացասական քննարկումներ, որոնց առանցքային թեման էր, թե ում է ծառայում այն՝ Թուրքիայի, թե ԱՄՆ

<sup>12</sup> Գ.Տեր-Հարությունյան, «Ուղեղային» կենտրոնների մասին, 23. 05. 2006 <http://www.noravank.am/am/?page=analitics&nid=227>



շահերին<sup>13</sup>: Կենտրոնը մի քանի ամիս անց սկսեց գործել Անկարայի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի հովանու ներքո՝ դրանով իսկ վերջ դնելով իր գործունեությանը:

1990-ական թթ. ՈւԿ-ների մեջ կարևոր դերակատարում ուներ հայտնի *ASAM-ը*՝ Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որի հիմնադրման մտահղացումը Թուրքիայի ակադեմիայի աշխատակիցներին էր պատկանում. գիտության մարդկանց կողմից կենտրոնն հիմնվում էր առաջին անգամ: 1994թ. այն հանդես եկավ «Եվրասիա» հիմնադրամ անունով, 1999թ. սկսեց գործել ներկայիս անվանումով և անջատվելով վերջինիս համակարգից՝ Ստամբուլից տեղափոխվեց Անկարա: Հետաքրքիր է, որ կառույցը հասարակ ամսագրից վերածվել է «ուղեղային կենտրոնի» և իրենց բնորոշմամբ՝ Թուրքիայի առաջին խոշոր «թինկ-թանկն» է: Կենտրոնի ստեղծումը թուրքական «թինկ-թանկ»-երի պատմության մեջ մտել է «Փետրվարի 28-ի օժանդակություն»<sup>14</sup> անունով: Նշենք, որ օժանդակության թիկունքին կանգնած էին Թուրքիայի կարևոր կառույցները, մասնավորապես՝ զինված ուժերի գլխավոր շտաբը: Կենտրոնի հիմնադրման գործի կազմակերպիչն էր «երիտոռեֆորմիստ» Ումիթ Օզդաղը<sup>15</sup>-ը, ով կրթություն ստանալով արտասահմանում՝ յուրացրել էր տեղի ՈւԿ աշխատանքային ռազմավարությունը: Սակայն կենտրոնն այդպես էլ անկախ չգործեց. հստակ է, որ Ումիթ Օզդաղի անհատական գործուն (Ազգայնական շարժում կուսակցության և «Գորշ գայլեր» խմբակցության անդամ է) նաև իր բացասական հետքը թողեց *ASAM-ի* աշխատանքի վրա: Այն դարձավ Թուրքիայի ռազմական ուժերի և Ազգայնական շարժում կուսակցության ակտիվիստների համար նախատեսված քարոզչական մեծ ապարատ, որի գլխավոր զենքը Հայկական հետազոտությունների ինստիտուտն (*Ermeni Araştırmaları Enstitüsü*) էր. այն գործում էր կենտրոնին կից: Կենտրոնի գործունեությունն ու հեղինակությունը Թուրքիայի համար անգամ ռազմավարական նշանակություն ուներ, այն պետության «փափուկ ուժ»-ն էր, միայն թե վերջին շրջանում կենտրոնը ծանր ֆինանսական դժվարություններ է կրում և փակման եզրին է:

<sup>13</sup> Hasim Söylemez-Murat Uçar, Ne kadar demokrasi okadar bilgi, Aksiyon dergisi, Sayı: 287 - 03.06.2000, <http://www.aksiyon.com.tr/detay.php?id=14345>

<sup>14</sup> Սա, ըստ երևույթին, կապված է 1997թ. փետրվարի 28-ին զինվորականների հայտնի հայտարարության հետ, որի հետևանքով հրաժարական տվեց իսլամիստական կողմնորոշում ունեցող վարչապետ Նեջմեթին Էրբաքանի կառավարությունը: Այս հայտարարությունը որոշ մասնագետներ համարում են Թուրքիայում զինվորականության՝ քաղաքականությանը միջամտելու հերթական քայլ:

<sup>15</sup> Օզդաղի կենսագրության մասին մանրամասն տե՛ս *Միմալորյան Ա.*, «21 դար թուրքական ինստիտուտի վերաբերյալ», «Գլոբուս. Ազգային անվտանգություն» տեղեկագիր, նոյեմբեր, 2008թ., № 4:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որի նախնական ազդակներն ի հայտ եկան 2008թ. աշնանը, անդրադարձան նաև Թուրքիայի տնտեսության վրա: Ամբողջ երկու շաբաթ թուրքական որոշ իշխանամետ թերթեր և համացանցային վերլուծական-տեղեկատվական կենտրոններ փորձում էին հասկանալ, թե ինչու նմանատիպ կառույցների շարքում տուժեց հատկապես *ASAM*-ը: Կենտրոնը ֆինանսավորող «Ուլքեր» կոնցեռնը այլևս չհատկացրեց տարեկան մեկուկես միլիոն դոլարի օժանդակությունը<sup>16</sup>: Ներկայումս կենտրոնը դադարեցրել է ակտիվ աշխատանքները, մասնավորապես՝ Հայկական հետազոտությունների ինստիտուտն ազատ է արձակել աշխատակիցներին:

Ժամանակակից թուրքական վերլուծական կենտրոնների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանցից յուրաքանչյուրը գաղտնի կամ բացահայտ կերպով այս կամ այն կուսակցության, պետական որոշ համակարգերի գաղափարախոսությունն ու տեսակետները տարածողն է: Այդպիսի իրավիճակ գերակշռում է հատկապես հետևյալ կենտրոններում (ներկայացնում ենք աղյուսակի տեսքով).

Կենտրոնի անվանումը	գաղափարախոսական կողմնորոշումը	համագործակցող ուժը
21 դար թուրքական ինստիտուտ	ազգայնամոլական	Ազգայնական շարժում կուսակցություն, Գորշ գայլեր
<i>ASAM</i> -Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն	ազգայնամոլական	զինվորականություն (ուլտրաազգայնական ձախ թևի հետ)
<i>SETA</i> -քաղաքական, տնտեսական, հասարակական հետազոտությունների հիմնադրամ	պահպանողական	մոտ է պետական ապարատին, մասնավորապես իշխող Արդարություն և զարգացում կուսակցությանը

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, կենտրոնների համագործակցության շրջանակները լայն են, ամեն կենտրոն ունի իր աջակիցն ու համախոհը: Այս ամենը հետաքրքիր է հատկապես նրանով, թե, ի վերջո, կենտրոններն են դիմում այս քայլին՝ հետապնդելով որոշակի շահեր, թե պետական համակարգն է փորձում օգտագործել այդ ներուժը: Երկուսի առկայությունն էլ կա, տեղ-տեղ ուժեղ կամ թույլ արտահայտված: Բայց մեծ մասամբ կենտրոնի ղեկավարներն իրենք են գնում այդ համագործակցությանը, քանի որ դա երբեմն դեպի քաղաքական իշխանություն տանող միակ ու

<sup>16</sup> *Muharrem Sarikaya*, *Kriz` düşünceyi` de vurdu...* Sabah, 11-18-2008:

դյուրին ճանապարհն է:

Կան կենտրոններ, որոնք երբեմն քաղաքական հետազոտություններ իրականացնելիս, համապետական ընտրությունների ժամանակ ակամա դառնում են որևէ կուսակցության լոբբիստական աշխատանքների մասնակիցը: Այսպիսով հասկանալի է դառնում, որ ազատ վերլուծություններ, որպես այդպիսին, չեն լինում, ինչը հեղինակագրկում է կենտրոնի սովորական աշխատանքը:

Ամփոփելով՝ հավելենք, որ 2000թ. սկսած, տարեկան միջին հաշվով Թուրքիայում բացվել են երեք-չորս կենտրոններ:

## ԿԼՈՐ ՍԵՂԱՆ «ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ»

Ս.թ. մարտի 6-ին «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը և «Առանցք» վերլուծական կենտրոնը համատեղ կազմակերպել էին քննարկում «Հոգևոր անվտանգության խնդիրների շուրջ» թեմայով: Ձեկուցողներն էին «Նորավանք» ԳԿՀ տնօրեն Գագիկ Հարությունյանը, ազգագրագետ Հրանուշ Խառատյանը, ՀՀ Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Աշոտյանը, Մայր աթոռ Մբ. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ներկայացուցիչ Հովակիմ վարդապետ Մանուկյանը, «Քայքայիչ պաշտամունքից տուժածների վերականգնողական և օգնության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Ալեքսանդր Ամարյանը: Քննարկմանը ներկա էին լրագրողներ, հրավիրված փորձագետներ: Իրենց տեսակետները հայտնեցին «*Hoeb Kover*» և «7 օր» թերթերի լրագրող Արեն Վարդապետյանը, «Հայոց աշխարհ» օրաթերթի լրագրող Արթուր Հովհաննիսյանը, «Առանցք» վերլուծական կենտրոնի ղեկավար Արմինե Միմոնյանը:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում քննարկման մասնակիցների զեկուցումներն ու արտահայտած տեսակետները:

**Գագիկ Հարությունյան.** - Հոգևոր անվտանգությունը տեղեկատվական անվտանգության բաղադրամասն է: Այսօր հոգևոր անվտանգության խնդիրները խիստ հրատապ են: Գլոբալ մակարդակում սկսում են գերակայել քառտիկ գործընթացներն ու պատահական դեպքերը, իրադարձությունները տեղի են ունենում արագ: Այս պայմաններում միակ առանցքը, որը կարող է պահպանել հասարակությունը, հոգևոր ներաշխարհն է, արժեքային համակարգը: Ամերիկյան փորձագետները գտնում են, որ ազգային անվտանգության հիմնական խնդիրը հենց արժեքային համակարգի պահպանումն է: Ի տարբերություն տեղեկատվական անվտանգության խնդիրների՝ հոգևոր անվտանգության վերաբերյալ աղոտ պատկերացումներ ունեն նույնիսկ փորձագետները, քանի որ այն, ինչ հոգևոր է, փոքր-ինչ իռացիոնալ բնույթ է կրում և դժվար է ենթարկվում ձևակերպումների ու սահմանումների: Հոգևոր անվտանգության վերաբերյալ հստակ ձևակերպումներ չկան: Նույն հարցի շուրջ առկա են բազմաթիվ մոտեցումներ, ինչը բարդացնում է խնդրի լուծումը: Հաճախ մեզանում հոգևոր անվտանգության խնդիրները նույնացվում են կրոնականի հետ: Կրոնական

խնդիրները, անշուշտ, հոգևոր անվտանգության մի մասն են կազմում, սակայն դրանով չեն սահմանափակվում: Կարելի է խոսել զանազան հանգամանքների մասին, որոնցից են, օրինակ, տեղեկատվական հոսքերը, աղանդները, որոնք կարող են ազդեցություն ունենալ հոգևոր անվտանգության վրա: Ցավոք, այս խնդիրների վերաբերյալ սակավ են փորձագիտական մոտեցումները: Մինչև նույն ժամանակ ճիշտ չէր ասել՝ մեր երկրում չկա փորձագիտական հասարակություն: Բիարկե, կան անհատներ, խմբեր, կազմակերպություններ, որոնք զբաղվում են նման խնդիրներով: Դրական եմ գնահատում այս ուղղությամբ ձեռնարկվող ցանկացած քայլ, ինչպիսին է, օրինակ, «Կրոն և հասարակություն» ամսագրի հրատարակումը: Սակայն, այս ամենով հանդերձ, փորձագիտական հասարակությունը տրոհված է, առկա է իրազեկման խնդիր ոչ միայն փորձագիտական հանրության, այլև հասարակության շրջանում:

Հոգևոր անվտանգության խնդիրները ներկայումս տարաբնույթ են: Դրանց ճշգրիտ ըմբռնումը և լուծումը ենթադրում են հետևողական ու համակարգված հետազոտական աշխատանք գիտության տարբեր ոլորտներում:

**Հրանուշ Խատասյան.** - Հոգևոր անվտանգություն հասկացության հետ առաջին անգամ բախվեցի այն ժամանակ, երբ կրթության մասին օրենքում կարդացի, որ ՀՀ-ում դպրոցական կրթությունն աշխարհիկ է, և Հայ Առաքելական եկեղեցին մեր կրթական հաստատություններում՝ դպրոցներում, կարող է մասնակցել հոգևոր դաստիարակությանը և կրթությանը: Ուզում էի հասկանալ, թե ինչ են հոգևոր անվտանգությունը և հոգևոր կրթությունը: Տվյալ պարագայում՝ բացառապես իրավական հակասության և զուգահեռականության իմաստով: Արդյոք ի՞նչ է այդ հոգևոր կրթությունը, և ի՞նչ է կրոնական կրթությունը: Կրոնական կրթությունից զատ հայ եկեղեցին ա՛յլ դաստիարակություն է տալիս: Բիարկե, կա բարոյական դաստիարակություն, սակայն արդյո՞ք դա ևս դրվում է Հայ Առաքելական եկեղեցու վրա: Ընդհանրապես, դպրոցում հոգևոր կրթությունը տրվում է գրականության, պատմության, գեղագիտական առարկաների, նույնիսկ ֆիզիկական դաստիարակության միջոցով: Եվ ինձ հետաքրքրեց, թե գիտական հանրությունը Հայաստանում և Հայաստանից դուրս սովորաբար ինչպես է մոտենում խնդրին: Առանձնացրի որոշ հասարակագիտական դիսցիպլինների կողմից հասարակության բարոյականության և մաքուր հասարակական արժեքների ձևակերպումներ, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են որևէ հանրության, տվյալ դեպքում՝ ՀՀ բնակչության արժեքներին: Դիսկուրսն ընթանում էր թվում է թե պարզագույն, բայց իրականում ամենաբարդ խնդիրների շուրջ, որոնք այդ դիսկուրսը տեղափոխում էին դասագրքային մակարդակի ձևակերպումների: Սկզբունքորեն կանգ առա ֆրանսիացի սոցիոլոգ Անրի Մենդրայի ամփոփիչ աշխատանքի վրա, որը մի քանի հրատարակումներ

է ունեցել, և շատ երկրներում դա որպես բուհական դասագիրք է ծառայում, որը մի շարք հետազոտությունների հիման վրա հանգում է մի եզրակացության. Ժամանակի ընթացքում հասարակությունները, ճիշտ է, իրենց արժեքների փոփոխություններ ունենում են, բայց բուն արժեքների շարունակականություն կա: Բուն արժեքները, նրանց սոցիոլոգիական բնորոշմամբ, ոչ թե այնպիսի արժեքներն են, ինչպիսին են լեզուն, կրոնը, այլ թե ինչն է համարվում «լավ» կամ «վատ» այդ հասարակությունում, ինչ ճանապարհով է բնորոշվում այդ «լավը» և «վատը», ինչպես է կատարվում «լավի» և «վատի» միջև ընտրությունը: Ըստ Անրի Մենդրայի՝ ֆրանսիական հասարակությունում պետական հարկերից խուսափելը հասարակության կողմից բացասաբար չի ընկալվում, եթե նույնիսկ մարդը հարկերը թաքցնելու համար ձեռքակալվում է, նրա բարոյական կշիռը չի նվազում տվյալ հասարակության մեջ, քանի որ դա ամոթալի չի համարվում: «Ամոթի» և «ոչ ամոթի», «լավի» ու «վատի», «ճշմարտության» և «ստի» ըմբռնումները տարածվում են ոչ այնքան օրենքների միջոցով, որքան այդ հասարակություններում հարաբերվելու հիմքերով, թե մարդիկ ինչ բազային արժեքների շուրջ են կառուցում իրենց հարաբերությունները:

Հայաստանում մեր հոգևոր, հասարակության բարոյականության ընդհանուր խնդիրների վերաբերյալ քննարկումները, կարծիքների արտահայտումը, հետազոտությունները գործնականում իսպառ բացակայում են: Հնարավոր է՝ մեզնից յուրաքանչյուրը սուբյեկտիվ մոտեցումներ ունենա «լավի» ու «վատի» գնահատման մասին, բայց հասարակական ընդհանուր մոտեցում չունենք: Միջին հասարակական շերտի համար մենք բավական հեղհեղուկ ենք: Սա մի առանցքի կորուստ է նշանակում, հետևաբար մնացյալ դիսկուրսը այս պարագայում թերի կամ սուբյեկտիվ կմնա: Նույնիսկ ազգային անվտանգության հայեցակարգը, որն ընդունվեց, սկզբունքորեն շրջանցել է այս խնդիրը: Այնինչ, սա առանցքային խնդիրներից մեկն է: Կա հասարակագիտական մտքի ձևակերպած օրենք, կա օրինաչափություն, որը հետևյալն է. ցանկացած խմբում, լինի 3, 30 հոգանոց, թե 3 միլիոնանոց խմբային միավոր, արժեքների ձևավորման առանցքը տվյալ խմբի էլիտար շերտում է: Հաճախ ասում են. «Ինչպիսի հասարակություն, այնպիսի իշխանություն»: Ըստ հասարակագիտական օրենքի՝ գործնականում ապացուցվում է ճիշտ հակառակը: Եթե իշխանությունը դիտարկենք որպես էլիտա և իշխանության հետ զուգահեռ էլիտա համարենք որակական և քանակական խմբերին, ապա հիմնական վարքի կանոնները ձևավորվում են այդ միջավայրում և, այս կամ այն չափով ձևավորվելով, տարածվում են հասարակության մեջ: Բհարկե, դրանք արդեն նույնը չեն լինում, ինչ ձևավորման շերտում և շրջանում էին: Ընդհանուր առմամբ, հասարակության մեջ իշխող գաղափարները գալիս են այդ շերտից, և դա շրջանցել մենք չենք կարող: Չափազանց կարևոր է, որ մենք հեռանկար

կառուցենք այս երևույթի շուրջ՝ հաշվի առնելով հասարակական օրինաչափությունները: Ըստ հասարակագետների՝ իշխանություն - հասարակություն հարաբերություններում երեք տարբերակ կա. երբ իշխանությունը՝ ի դեմս մեկ-երկու անձի, խարիզմատիկ է, երբ իշխանությունը բռնապետական է իր վարքով և երբ իշխանություն - հասարակություն հարաբերություններն անդեմ են, և գործում են միայն օրենքները, այսինքն՝ իշխանությունը՝ որպես դեմք, անձ, կերպար, որակ, հասարակության հետ չի հարաբերվում, այլ հասարակության հետ հարաբերությունները բացառապես կառավարվում են օրենքներով: Այս երեք տարբերակներն էլ լինում են ամենատարբեր որակական և քանակական բնութագիր ունեցող հասարակություններում, որոնցից յուրաքանչյուրից բխում են իրենց բնորոշ օրինաչափություններ: Օրինակ՝ բռնապետական հասարակարգում կարող են ձևավորվել դրական իշխանություն - հասարակություն հարաբերություններ կամ՝ ընդհակառակը, խարիզմատիկ իշխանությամբ հասարակարգում կարող են ձևավորվել բացասական իշխանություն - հասարակություն փոխհարաբերություններ և այլն: Հետևաբար կարևոր է, որ մեր հոգևոր և հասարակական արժեքների գնահատման իմաստով մենք օբյեկտիվ չափորոշիչներով հանգենք ընդհանրության:

**Արմեն Աշոտյան.** - Հոգևոր անվտանգության հարցի քննարկման ժամանակ հանդիպում ենք երկու ծուղակի: Նախ չի կարելի պրոյեկտել խնդիրը: Հասարակագիտական առարկաները ճկուն հատկություն ունեն սահուն կերպով անցնել մեկից մյուսին և կարող են անցնել մինչև քաղաքական համակարգեր, սոցիոլոգիական առանձնահատկություններ, բազմաթիվ այլ ոլորտներ: Այս խնդիրը թույլ է տալիս տարածվել, հետևաբար՝ թուլացնել կոնցենտրացիան կոնկրետ հարցի վրա, և սա վտանգավոր է: Եթե հոգևոր անվտանգությունը սփռվի ողջ հասարակագիտական դաշտով, սա թույլ չի տա հասնել արդյունքի և կդառնա հերթական ընդհանրական խոսակցությունը: Եվ երկրորդ՝ չի կարելի ակնկալել հստակ դեֆինացիաներ: Սա այն ոլորտն է, որտեղ չի կարելի այս կամ այն հասկացության ոչ միայն բառարանային, այլ նաև իրավական իմաստը սահմանել, բայց դա չի նշանակում, որ պետք է զերծ մնալ խնդրի նկատմամբ իրավական ակտերի կիրառումից և փաստաթղթային մոտեցումներից:

Հաճախ հոգևոր անվտանգությունը կրոնականի հետ է նույնացվում: Հայաստանի ազգային անվտանգության դոկտրինում կան հստակ հիշատակումներ, թե ազգային անվտանգության գործոնների մեջ ինչքան է կարևորվում ազգային ինքնության պահպանման խնդիրը և ճիշտ հակառակը՝ ներքին սպառնալիքների մեջ որքան մեծ է ինքնության խաթարման սպառնալիքը: Հոգևոր անվտանգությունը մեր էթնոտարածքային միավորի շրջանակներում ծագած արժեքների և այդ արժեքների պահպանմանը միտված ինստիտուտ-

ների պահպանման խնդիրն է, քանի որ արժեքները գոյություն ունեն և անվիճարկելի են: Կան արժեքներ, դրա վերարտադրման հնարավորություններ, կա հասարակություն, որը դրա կարիքն ունի, և կա պետություն, որը դրանով նաև ամրապնդում է իր ազգային անվտանգությունը:

Իրավական տեսանկյունից խնդիրը դիտարկելիս պատկերը հետևյալն է. ՀՀ Սահմանադրության մեջ հստակ ամրագրված են խղճի ազատությունը և Հայ Առաքելական եկեղեցու գործառույթներն ու սուրբ առաքելությունը երեք հիմնական ոլորտներում՝ ազգային ինքնության ու ազգային մշակույթի պահպանման, նաև հայ ազգի հոգևոր դաստիարակության հարցերում:

Նորմատիվ դաշտի հաջորդ բաղկացուցիչը միջազգային պայմանագրերն ու կոնվենցիաներն են: ՀՀ մոտեցումները կրոնական, հոգևոր անվտանգության, խղճի ազատության դաշտին ամբողջապես նույնական են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետ: Ավելին, այդ իրավունքների սահմանափակման դեպքերը նույնիսկ ավելի մեղմ են թվարկված, քան Եվրոպական կոնվենցիայում:

Հայաստանում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխության նախաձեռնությունը մեծ աղմուկ բարձրացրեց, որը մոդելավորված էր կոնկրետ վիրտուալ «կանալների» կողմից: Այդ ալիքը բարձրացվեց ԱՄՆ դեսպանատանը հաղորդակից քաղաքացիական և քաղաքական ինստիտուտների կողմից: Մինչդեռ փոփոխությունները, որոնք առաջարկվել էին նախագծում, լիովին տեղակայվում են ԵՄ անդամ երկրների իրավական դաշտի տրամաբանության մեջ: Օրենքը թարգմանվել և ուղարկվել է Վենետիկյան հանձնաժողով, կից ուղարկվել են նաև բոլոր այն երկրների նախադեպերը, որոնք հիմք են ծառայել օրենքում փոփոխություններ կատարելու համար, դրանք են՝ Ֆրանսիան, Ավստրիան, ԱՄՆ-ը: Ընդ որում՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 2007թ. դեկտեմբերի 6-ի բանաձևը կոչվում է «Քրիստոնեական հավատքի կարևորության և Սուրբ ծնունդի կարևորության մասին»: Սա նշանակում է, որ օրենսդիրն արդեն իսկ մտել է այս դաշտ իռացիոնալ ձևակերպումներով, որոնք պետական մտածողություն ունեցող քաղաքական էլիտայի համար ընկալելի հասկացություններ են: Հոգևոր անվտանգության համատեքստում կարևոր են նաև երաժշտությունը, գրականությունը, սպորտը, բայց դա դիսպերսիայի վտանգ կարող է առաջացնել:

Կա մի խնդիր, որը հետևյալն է. արդյո՞ք եկեղեցին պատրաստ է հոգևոր «շուկայում» զրկվել իր իրավական մենաշնորհից և պայքարել ժամանակակից մեթոդներով այդ «շուկայում սպառողների» կրիտիկական թիվը պահպանելու համար: Պատրաստ չէ: Առաքելական եկեղեցին դեռ չի մտել 21-րդ դարի տեղեկատվական պատերազմների տրամաբանության մեջ և աշխատում է արխայիկ, ստերեոտիպային մոտեցումներով, ըստ որի՝ պետք է հոտը գնա եկեղեցու հետևից, այլ ոչ թե եկեղեցին պայքարի հոտի համար:



**Հովակիմ վարդապետ Մանուկյան.**– Հոգևոր անվտանգությունը միայն կրոնական կազմակերպությունների բնագավառի վրա չի տարածվում, այն ավելի լայն ընդգրկում ունի: Հարցը հոգևոր անվտանգության արժեքների մեջ է, իսկ արժեքների պահպանման համար անհրաժեշտ են հեղինակություններ, որպիսիք կարող են լինել անհատները, ինստիտուտները, որոնց խոսքը հասու կլինի հասարակությանը:

Այսօր եկեղեցին լուրջ փոխակերպման գործընթացի մեջ է, և եթե կան խնդիրներ, օրինակ՝ ռեսուրսների բացակայության պատճառով եկեղեցին ավելի ընդգրկված ձևով չի կարողանում մտնել ժամանակակից գործընթացների մեջ, ապա ժամանակի ընթացքում, հասարակության աջակցության շնորհիվ այդ խնդիրը կլուծվի: Եկեղեցին պատրաստ է իր արժանի տեղը գրավելու և իր խոսքն ասելու:

Հոգևոր անվտանգության տեսանկյունից անպայման անհրաժեշտ է անդրադառնալ աղանդների խնդրին: Ռուս հեղինակներից մեկի՝ ժամանակակից աղանդագետ Ալեքսանդր Դվորկինի գրքում խոսվում է աղանդների տարածման պատճառների մասին. այդ պատճառներից մեկը տերմինաբանության խնդիրն է և այն միտումներն ու գործընթացները, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում աղանդների տարածման համար: Նշվում է այսպիսի մի օրինակ. բոլշևիկյան քարոզչական մեքենայի գործունեության տարիներին երեխան մոտենում է պապիկին և հարցնում, թե ինչ են նշանակում Աստված, եկեղեցի, շնորհ: Պապիկը պատասխանում է, որ դրանք հնացած տերմիններ են, արդեն գոյություն չունեն, դրանց փոխարեն երեխային հորդորում է սովորել, թե ինչ են՝ պիոներ, աշխատանքային պլան, ընկեր և այլն: Այսպիսով, լեզվի միջոցով մարդկանց մտածողությունից վերացվում է այն ամենը, ինչ հոգևոր է:

Պետք է խոսել նաև այն հարցերի մասին, որոնք հարվածում են եկեղեցու հեղինակությանը, ոչնչացնում ավանդական արժեքները: Օրինակ՝ բացահայտ կերպով ՁԼՄ-ը հարձակվում են եկեղեցու վրա, հեղինակագրկում են, փորձում երևակայությունը ներկայացնել որպես իրականություն: Սա հոգևոր անվտանգության խնդիրն է, քանի որ այս քայլերը վնասում են մի ինստիտուտի, որը լուրջ առաքելություն ունի ժողովրդի կյանքում, իսկ վնասելով եկեղեցուն՝ դաշտ են ստեղծում աղանդների տարածման համար:

Ուսումնական հաստատություններում Հայ եկեղեցու պատմության դասավանդման ճանապարհով բարոյականության արժեքներ են սերմանվում մեր զավակների հոգիներում: Կարևոր է ամրագրել հայ եկեղեցու իրավունքները և թույլ տալ լայն հասարակական գործունեություն ծավալել: Եվ հայ եկեղեցուն իրավունքներ տալը չի նշանակում նսեմացնել այլ կրոնական կազմակերպությունների իրավունքները:

**Ալեքսանդր Ամարյան.** - Հոգևոր անվտանգության հարցերն այժմ չափազանց ակտուալ են, բայց դրանք միայն քննարկվում են տեսական հարթույթի վրա, գործնական որևէ քայլ չի ձեռնարկվում: Ցավալի է, որ մենք չենք հետևում այն իրադարձություններին, որոնք կատարվում են մեր երկրում, փոխարենը խոսում ենք այլ երկրների մասին: Այս խնդրում մեր երկրի բացթողումներից է կրոնական կառույցները ստուգելու հնարավորություն ընձեռող օրենքի բացակայությունը: Իրավապահ մարմինները, սակայն, չեն զբաղվում դրանով, քանի որ կրոնական կառույցներն ունեն հզոր իրավական բազա: Օրինակ՝ Եհովայի վկաների դատավարություններին նույնիսկ Կանադայից հատուկ փաստաբաններ են ժամանում: Հայաստանում նման կարգի մասնագետներ չեն պատրաստվում: Անհրաժեշտ է պատրաստել փորձագիտական բազա, մասնագետներ՝ հոգեբան-կրոնագետներ, իրավաբան-կրոնագետներ, որոնք պետք է կարողանան որակել՝ արդյո՞ք հանցագործությունը կատարվել է կրոնական հողի վրա, թե՞ ոչ:

Համաձայն Եվրախորհրդի որոշման, Եհովայի վկաների կրոնական կառույցը պետք է գրանցվեր: Մյուս որոշման համաձայն, պետք է ստեղծվեր անկախ կենտրոն, որը տեղեկատվություն կտարածեր բոլոր կրոնական կառույցների մասին: Եհովայի վկաների կառույցը գրանցվեց, սակայն վերոնշյալ կառույցն այդպես էլ չստեղծվեց:

Անպայման պետք է ուշադրություն դարձնենք այն գործընթացներին, որոնք տեղի են ունենում Հայաստանում: Պետք է խոսել այն ազգային գենցիդի մասին, որը կատարվում է հեռուստատեսության, ՋԼՄ-ի միջոցով, որի հետևանքով կորցնում ենք մեր ինքնությունը: Այժմ բազմիցս նշվում է, որ մեր եկեղեցին անջատված է պետությունից, բայց եկեղեցու հետ է կապվում մեր ժողովրդի պատմությունը:

Նշենք մի հետաքրքրական փաստ. նույնիսկ բոլշևիկները վերցնում էին քրիստոնեության գաղափարները, վերափոխում բոլշևիկյան գաղափարների: Օրինակ՝ Սուրբ Երրորդությունը վերափոխվել էր Մարքս, Էնգելս, Լենինի, Սուրբ գիրքը՝ «Կապիտալի», առաքյալները՝ Քաղբյուրոյի անդամների:

2007թ. աշնան վերջին «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցավ համակարգչային խաղի շնորհանդես, որը կոչվում էր «Ուզում եմ դառնալ նախագահ»: Մա հետաքրքրաշարժ խաղ էր, սակայն դրա վերջում կար այսպիսի մի հատված. ինչ պետք է անել, եթե գիտես, որ ընտրվել ես, բայց չես անցնում: Եվ խաղում նշվում է գունավոր հեղափոխությունների գաղափարախոս Ջին Շարփի «ոչ բռնի հեղաշրջման փորձի» քայլերի մասին: Ընդ որում՝ ֆինանսավորումը կատարվել էր Բրիտանիայի դեսպանատան կողմից: Նույնիսկ խաղի շապիկը ծիրանագույն էր, ինչը ևս խորհրդանշական էր, քանի որ Հայաստանում հեղափոխությունը ծիրանագույն էր կոչվելու: Այս խաղը թողարկվել էր

բազմահազար օրինակով և բաժանվում էր երիտասարդների շրջանում: Համակարգչային խաղերի նկատմամբ երիտասարդության մեջ հետաքրքրությունը հաշվի առնելով՝ պարզ է դառնում, թե ինչ նպատակներ էր դա հետապնդում:

Ինչ վերաբերում է Հայոց եկեղեցու պատմությանը, ապա այն դպրոցում պետք է դասավանդի Հայ Առաքելական եկեղեցին: Ուրիշ ո՞վ պետք է դասավանդի՝ Եհովայի վկանե՞րը: Ես, իհարկե, կընդունեի կրոնական կառույցների իսկությունը, եթե նրանք ցույց տային, որ մտածում են ժողովրդի մասին: Այն-ինչ, օրինակ, 12 տարեկան մի աղջնակ ինքնասպանություն է գործել: Ուսումնասիրություններից պարզվեց հետևյալը. աղջիկն ապրում էր մի փոքր սենյակում, որը պատուհաններ չուներ: Սենյակում կրոնականից բացի այլ գրականություն չկար: Հայրն ամբողջ օրն աշխատում էր, մայրը գտնվում էր Թուրքիայում: Իսկ երեխայի մասին հոգ տանող բարեկամները, որոնք հոգեգալստական կրոնական կառույցի հետևորդ էին, աղջկան իրենց հետ տանում էին կրոնական հավաքների: Եվ այդ դեպքից հետո ոչ ոք հոգևոր անվտանգության մասին չխոսեց: Քննիչը նշեց, որ չի կարող ասել, թե արդյոք կրոնական հիմք կա տվյալ գործում: Իսկ այդ սենյակում առկա գրականությունը պետք է ուղարկվեր փորձաքննության:

Աղանդների մասին խոսելիս առաջինը պետք է նշել հետևյալը. աղանդավոր բառը անպատիվ բառ չէ: Աղանդավորները պարզապես այն մարդիկ են, որոնց հավատքը, գաղափարախոսությունը տարբերվում են ավանդական եկեղեցուց:

Ռուսաստանում կա «Էքստրեմիզմի մասին» օրենք, ըստ որի՝ պատիժներ են նախատեսվում է նաև հոգևոր անվտանգության խախտման դեպքերում: Պետք է նշել, որ հոգեբանական էքստրեմիզմը ֆիզիկականից ավելի վտանգավոր է, քանի որ հոգևորի դեպքում ազգն է ոչնչանում: Հնարավորինս պետք է պայքարել դրա դեմ: Պետք է ընդունվեն օրենքներ, որոնք կպայքարեն ազգային ինքնությունը ոտնահարող երևույթների դեմ:

**Հրանուշ Խատատյան.** Ինչ վերաբերում է աղանդներին, ապա պետք չէ ամեն ինչ մեր հասարակությանը հրամցնել որպես սարսափ, եթե մենք ուզում ենք ոչ թե վախեցնել, այլ լուծումներ գտնել:

Կրթության ոլորտի հարցերի վերաբերյալ պետք է ասել, որ եկեղեցու պատմություն պետք է դասավանդվի, քանի որ այն հայոց պատմության մի հատվածն է, պետք է ուժեղացվի հենց այդ հատվածը, այլ ոչ թե զուգահեռ երկու պատմություն դասավանդվի: Դրա փոխարեն պետք է դասավանդվի աշխարհի տարբեր կրոնների վերաբերյալ «կրոնի պատմություն» ակադեմիական առարկա, որը կընդգրկի նաև քրիստոնեությունն ու Հայ եկեղեցու պատմությունը, որպեսզի հասարակությունը իմացություն ունենա այս խնդիրների վերաբերյալ, որպեսզի մարդիկ հեշտությամբ թակարդը չընկնեն:

Իսկ մենք Սահմանադրությամբ ինքնություն ենք ձևակերպել, դա անհեթեթություն է: ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է Առաքելական եկեղեցու սուրբ առաքելությունը երեք հիմնական ոլորտներում՝ ազգային ինքնության ու ազգային մշակույթի պահպանման, նաև հայ ազգի հոգևոր դաստիարակության: Այդ ո՞ր ապացույցների հիման վրա է գրված: Եթե ես՝ որպես քաղաքացի կամ հետազոտող, այդ խնդիրը վիճարկեմ, ես իրավական հարվածի տա՞լ կընկնեմ: Հենց հիմա ես վիճարկում եմ այդ խնդիրը: Հայ Առաքելական եկեղեցու վերաբերյալ շատ հարցերում իրականում չունենք ռեալ պատկերացումներ: Իմ կարծիքով, երբ Հայ Առաքելական եկեղեցին հակաքաղկեդոնական կեցվածք ձևավորեց, դրանով իսկ հայությանը մասնատեց երկու հատվածների: Քաղկեդոնիկ հայերի ուժացման և հայահալած քաղաքականության հետևանքով մասնատվեց մեր ժողովուրդը, և ձևավորվեց քրիստոնեության մեջ մեր ինքնության հակադրվողական կերպար: Մենք ոչ թե պարզապես քրիստոնյա ենք, այլ առաքելական և հակաքաղկեդոնիկ քրիստոնյա ենք: Ես ունեմ լուրջ վերլուծություններ, որոնք չեմ հրապարակում, բայց որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ մենք մեր ինքնության ձևավորման և այլոց ինքնության հետ հարաբերվելու հարցում լուրջ հարված ենք կրել: Փաստորեն, եթե ես դրանք հրատարակեմ, ինձ կարող են դատի տալ:

Կամ, օրինակ, Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկած օրենքում գրված է, թե ում կարելի է համարել քրիստոնյա: Եվ եթե մի օր Վրաստանը օրենք ընդունեց, թե քրիստոնեական պետք է հասկանալ քաղկեդոնիկ եկեղեցին, ի՞նչ է, մենք Վրաստանի հետ պետք վիճարկենք, թե ո՞վ է քրիստոնյա: Կարծում եմ՝ աշխարհիկ օրենքները չեն կարող կրոնական բանավեճի մաս դառնալ: Եվ եթե ուզում ենք պաշտպանել եկեղեցին, պետք է զբաղվենք եկեղեցու իսկական հասարակական կշռի բարձրացմամբ, այլ ոչ թե օրենք ընդունենք, որը կարող է հարվածի տակ դնել բուն եկեղեցու իրավունքները: Առաքելական եկեղեցու հեղինակության պահպանումն առաջին հերթին նրա հասարակական դերակատարման մեջ է, որը, ցավոք, չի իրականացվում: Եկեղեցու հեղինակությունը պահողը նրա բարոյական նկարագիրն ու գործունեությունն է: Եկեղեցին կրավորական կեցվածք չպետք է ընդունի:

**Արմեն Աշոտյան.**Քիչ թվով երկրներ կան, որոնք իրենց օրենսդրության մեջ ամրագրում են դավանաբանական մոտեցումներ: Դրանցից է, օրինակ, Հունաստանը, որի Սահմանադրությունը սկսվում է «հանուն Սուրբ Երրորդության» բառերով: Հաջորդը ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի բանաձևն է, որտեղ գրված է. դեկտեմբերի 25-ը Սուրբ Ծնունդն է: Մինչդեռ ամերիկահայ առաքելականները Սուրբ Ծնունդը նշում են հունվարի 6-ին,

ուղղափառ ամերիկացիները՝ հունվարի 7-ին, սակայն դա չի նշանակում, որ նրանք օրենքից դուրս են: Ուղղակի Կոնգրեսը հաստատում է, որ իր ավանդական պատմության մեջ ԱՄՆ ժողովուրդը ձևավորվել է այնպես, որ կաթոլիկ-ավետարանական ուղղվածությունը՝ Սուրբ Ծնունդի ամսաթվի հետ կապված, գերակայել է:

Հայաստանում կրոնի մասին գործող օրենքը թերի է: Բայց գոնե օրենքը աշխատեր, և ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը ժամանակին ճիշտ կիրառեր այն, օրինակ՝ «պատմականորեն կանոնացված Սուրբ գիրք» հասկացությունը կիրառվեր այնպես, ինչպես հարկն է: Իսկ դուք գրանցել եք Մորմոնական կազմակերպություն, որոնց գիրքը Մորմոնի գիրքն է, արդյոք դա պատմականորեն կանոնացված գիրք է: Օրենքում կան անտրամաբանական խնդիրներ: Կրոնի վարչությունը գրանցում է կրոնական կազմակերպությունների կանոնադրությունը, այնինչ կրոնական կազմակերպությունները պետք է գրանցվեն պետքեզիստրում: Օրենքում գրված է հետևյալը. պետության և կրոնական կազմակերպությունների միջև առկա այն խնդիրների շուրջ, որոնք չեն կարգավորվում օրենսդրությամբ, կրոնի վարչությունը և կրոնական կազմակերպությունները պետք է փոխադարձ քննարկմամբ համաձայնության գան: Որ նորմալ երկրում այսպիսի բան պետք է գրված լինի օրենքում: Հասունացել է փոփոխություն կատարելու ժամանակը: Կարծում եմ՝ պետք է փոփոխություններ կատարել իրավական դաշտում՝ վերցնելով եվրոպական երկրների մոդելը, այլ ոչ թե ամերիկյան, քանի որ ամերիկյան հասարակությունը ձևավորվել է այլ մշակութային պայմաններում: Բնականաբար, այս ուղղությամբ քաղաքական ճնշումներ լինելու են: Որքան մեր հասարակությունը պառակտված, տարակարծիք լինի ներսում, այնքան այդ ճնշումներն ավելի արդյունավետ են լինելու:

**Հովակիմ վարդապետ Մանուկյան.** - Թույլ տվեք պատասխանել եկեղեցուն առնչվող հարցադրումներին, որ հնչեցին: Եկեղեցի - պետություն և եկեղեցի - հասարակություն հարաբերությունները պատմության ընթացքում տարբեր երկրներում տարբեր ճանապարհներով են զարգացել՝ համապատասխան իրենց հոգևոր մշակութային ժառանգության, հոգեկերտվածքի, պատմության: Հայ եկեղեցին գոյություն ունի իր ավանդական հնարավորություններով և արժեքներով և պետք է հզորանա: Եթե եկեղեցուն իրավունքներ են տալիս, դա չի նշանակում, թե նսեմացնում են այլ կրոնական կազմակերպությունների իրավունքները: Եկեղեցին միայն նշում է վերջիններիս վնասակար ազդեցությունները, որոնք պետք է վերացնել ազգային անվտանգության նկատառումներով:

Հայ եկեղեցու պատմությունը պետք է դասավանդվի հայոց պատմությանը զուգահեռ: Իսկ ինչ վերաբերում է ակադեմիական կրոնների պատմու-

թյանը, կարելի է ձեռնարկ պատրաստել և համապատասխան կառույցներում, դասախոսությունների, բանախոսությունների միջոցով, բարձրացնել երիտասարդների հասարակական իրազեկությունը տվյալ խնդիրների վերաբերյալ:

**Ալեքսանդր Ամարյան.**- Հայաստանում կրոնի մասնագետները քիչ են, այդ պատճառով դպրոցներում այլ կրոնների դասավանդման գործը պետք է ստանձնեն Կրոնի և ազգային փոքրամասնությունների վարչությունը: Պետք է պատրաստվեր համապատասխան գրականություն: Մակայն այդ քայլերը չձեռնարկվեցին:

Հոգևոր անվտանգության պահպանման տեսակետից կարևոր հանգամանք է հեռուստատեսության վերահսկողությունը: Անհրաժեշտ է վերահսկել նաև այն կրոնական գրականությունը, որը հրամցվում է հասարակությանն աղանդավորների կողմից:

**Արթուր Հովհաննիսյան.**- Մեր երկրում հոգևոր անվտանգությունը զրոյական կամ գրեթե զրոյական մակարդակի վրա է, և այս առումով գործնական քայլեր չեն ձեռնարկվում: Բացառություն կարելի է համարել վերջերս կրոնի մասին օրենքի մշակումը և քննարկումը: Մակայն, ինչպես հայտնի է, այդ նախագծի դեմ հայտնի ուժերի կողմից կազմակերպված հարձակումներ սկսվեցին:

Հոգևոր անվտանգությունը պետք է բաժանել ոլորտների, որոնցից մեկն օրենսդրականն է: Անհրաժեշտ է տեսնել, թե ինչ բացթողումներ կան այս դաշտում և փորձել լրացնել այդ բացերը: Թերևս, թերություններ կան նաև կրոնի մասին վերոնշյալ օրենքում, և սա բնական է: Ուստի, այս խնդրով շահագրգիռ անձանց և կազմակերպությունների խնդիրը պետք է լինի հնարավորինս օգնել նախագծի հեղինակներին, որպեսզի վերամշակման ընթացքում այն շտկվի և ծառայի իր նպատակին:

Թերանում ենք նաև մյուս՝ տեղեկատվական դաշտում: Այս ոլորտում աշխատանքները համակարգված բնույթ չեն կրում: Անհրաժեշտ է ընտրություն կատարել հեռուստատեսությամբ ցուցադրվող տեսանյութերի միջև: Կան տեսանյութեր, որոնք ավելի մեծ լսարանի համար են նախատեսված և ավելի վտանգավոր հետևանքներ կարող են ունենալ, քան մամուլի հրապարակումները: Անհրաժեշտ է համակարգել այն տեսանյութերը, որոնք պատրաստվել են, սակայն ինչ-ինչ պատճառներով չեն ցուցադրվել հեռուստատեսությամբ: Այդ նյութերը զանազան տեղեկություններ են պարունակում աղանդների մասին: Այդ փաստերի հիման վրա հնարավոր կլինի իրազեկել հասարակությանն այս խնդիրների վերաբերյալ, խոչընդոտել աղանդների գործունեությանը, սահմանել համապատասխան պատժամիջոցներ, որոնք կկիրառվեն մեղավոր անձանց նկատմամբ:

**Գագիկ Հարությունյան.** - Քանի որ հոգևոր անվտանգությունը տեղեկատվական անվտանգության բաղկացուցիչ մասն է, դրանք վաղ թե ուշ խաչաձևվելու են: Անցյալ տարի ՀՀ նախագահի կողմից հնչեցվեց տեղեկատվական անվտանգության խնդրի կարևորության մասին, այդուհանդերձ, եղան նաև այլ հայտարարություններ, որոնց արդյունքում հանրությունում հետաքրքրությունն այս խնդրի վերաբերյալ աճեց:

Պետք է ասել, որ այժմ որոշակի քայլեր կարծես թե ձեռնարկվում են այս ուղղությամբ: Վերն ասվածի ապացույց կարող են հանդիսանալ տեղեկատվական անվտանգության հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծումը և համապատասխան հայեցակարգի մշակումը: Սա կլինի այն տեսական քայլը, որը խիստ անհրաժեշտ է: Նման հայեցակարգի ստեղծումը կնպաստի այս խնդրին գործնական լուծումներ տալուն:

**Արեն Վարդապետյան.** - Աղանդների մասին խոսելիս անհրաժեշտ է փորձել հասկանալ Առաքելական եկեղեցու և աղանդների տարբերությունը: Չի բացառվում, որ կան մարդկանց որոշակի խմբեր, որոնց չի գոհացնում եկեղեցու գաղափարախոսությունը, և նրանք ինքնուրույն են փորձում հասկանալ կյանքի իմաստը կամ այլ հարցեր, հավաքվում են, Ավետարան են կարդում: Սակայն մի խնդիր կա. եթե այդ կազմակերպությունը եկեղեցուց դուրս է գտնվում, ապա անպայման հայտնվում է մեկը, որը փորձում է տվյալ կառույցը ծառայեցնել իր շահերին:

Աղանդներն առավել լավ են տարածվում նպաստավոր պայմանների առկայության դեպքում: Պետք է հոգևորը տարանջատել աշխարհիկից: Եկեղեցին խնդիրներ ունի իր ներսում, քանի որ եկեղեցու ներսում շատերն ավելի շատ աշխարհիկ մտածողության տեր են, քան հոգևոր: Այս խնդրին լուծում տալու համար եկեղեցին պետք է հասու լինի հասարակությանը:

**Գագիկ Հարությունյան.** - Հոգևոր անվտանգության համատեքստում կարելի է դիտարկել նաև այլադավան հայերի խնդիրը, որը շատ ակտուալ է, քանի որ Հայությունն իր պատմության ընթացքում բազմաթիվ կրոնական, դավանաբանական սեզմենտների է բաժանվել: Դրանք ոչ միայն իսլամացած հայերն են, այլև աղանդավոր հայերը, որոնց խնդիրը կա նաև Սփյուռքում և որն ուսումնասիրված չէ: Սա, հավանաբար, Սփյուռքի նախարարության խնդիրն է, որի լծակները, հնարավորությունները թույլ կտան պատկերացումներ կազմել, թե ինչպիսին է այս խնդիրը Սփյուռքում: Կան նաև կաթոլիկ, ուղղափառ, բողոքական հայեր, նրանք բոլորն էլ հայեր են, պետք չէ օտարել նրանց:

Եթե մենք մտածում ենք ազգի մասին՝ որպես հոգևոր կառույցի, անշուշտ, «ազգ» հասկացությունը սակրալ իմաստ ունի, պետք է մտածել նաև

դարձի մեխանիզմների մասին: Դա օրենքով չի լինելու, օրենքը կարող է միայն նպաստել կամ չնպաստել խնդրի լուծմանը: Հոգևոր ոլորտը, իհարկե, կարիք ունի իրավական սահմանումների, սակայն կան խնդիրներ, որոնք իրավական դաշտի սահմանումներով չեն լուծվում:

**Հովակիմ վարդապետ Մանուկյան.** - Համաձայն եմ, որ աղանդավորներին պետք է համարել մեր մոլորված եղբայրները և ջանք ու եռանդ չխնայել նրանց հետ բերելու համար: Այնուամենայնիվ, չպետք է աչքաթող անենք այս խնդիրը և պայմաններ ստեղծենք, որպեսզի աղանդավորական կառույցներն ազատ գործեն:

Հոգևոր անվտանգության մասին խոսելիս պետք է կարևորել նաև հեռուստատեսության խնդիրը, այն երգերը, սերիալները, որոնց ցուցադրությունն ապականում է մեր բարքերը, ազգային արժեքները: 90-ական թթ. ոչինչ չունենալով՝ հայերը հաղթեցին, քանի որ ապրում էին գաղափարներով, արժեքներով. արժեքներ կրող համայնք էին: Հեռուստատեսությամբ հնչում էին հայրենասիրական երգեր, ցուցադրվում էին պատրիոտիզմը գորացնող ֆիլմեր: Այսօր իրավիճակն այլ է: Այս խնդիրը ևս վերաբերում է հոգևոր անվտանգությանը:

**Հրանուշ Խատասյան.** - Պետք է ընդունել այն փաստը, որ քրիստոնեական հավատքը մեր 1700-ամյա գոյության ձևն է՝ իր բոլոր հակասություններով, և՛ դրական, և՛ երբեմն բացասական փորձով: Մեր պատկանելությունը քրիստոնեական կրոնին մեր ինքնության առանցքային մասն է կազմում: Թեև խոսում ենք մեր ինքնության փնտրտուքների մասին, այնուամենայնիվ, ինքնության լուրջ ճգնաժամ չունենք, կրում ենք այդ ինքնության բաղադրիչը: Արդեն այդ ընտրությունը կատարվել է. քրիստոնեական արժեքների համար կոտորվել ենք, քրիստոնյա աշխարհի օգնությունն ենք ակնկալել, քրիստոնյա արժեքների մաս ենք կազմում, այժմ հավակնում ենք այդ աշխարհաքաղաքական դաշտում լինել: Դրանով հանդերձ, մեր եկեղեցին գոնե վերջին հարյուրամյակում գտնվել է բարդ իրավիճակում: Կիլիկիայի կաթողիկոսության գոյությունը բարդացնում է միասնական համալիր ծրագրային գործողությունների ծավալման գործընթացը: Բացի այդ, մենք չենք կարող բավարար կրթված դաս ունենալ, քանի որ կորցրել ենք այդ դպրոցը. չնայած Գևորգյան ճեմարանի շարունակական գոյությանը՝ իրավական և փաստական խիստ սահմանափակ հնարավորություններ կան հասարակական զարգացումներին համընթաց քահանա պատրաստելու այնպես, որ քահանան ճկուն արձագանքի թե՛ անհատի պահանջներին, թե՛ հասարակության գլոբալ զարգացումներին:

Առկա է լուրջ խնդիր: Հայ Առաքելական եկեղեցին աջակցության կարիք ունի թե՛ հասարակական կարծիքում իր համապատասխան կշիռն ունենալու հարցում, թե՛ ներքին կառուցողական աշխատանքներում: Այս ամենին գու-



գահեռ, պետք է ասել, որ Հայ Առաքելական եկեղեցին հասարակական օժանդակություն ստանալ չի ցանկանում: Ինչո՞ւ Առաքելական եկեղեցին չի համապատասխանում հասարակայնորեն սպասելի իր դերին: Բհարկե, կան պատճառներ, որոնց մեղքը եկեղեցունը չէ, սակայն որոշ պատճառներ կան, որոնց մեղքը եկեղեցին իր ներսում պետք է փնտրի:

Հոգևոր անվտանգության մասին խոսելիս անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք Հայաստանի Հանրապետության ներսում ուզում ենք որպես մարդկանց խումբ՝ կրոնական համայնք լինել, թե ուզում ենք քաղաքացի լինել: Սա կարևոր կոնցեպտուալ հարց է: Արդյո՞ք մեր խմբային համակեցությունն արդյունքում կրոնական համայնքային գաղափարախոսություն պետք է ունենա, թե՞ օրենքներով կառավարվող աշխարհիկ պետության քաղաքացիների:

Հոգևոր անվտանգության խնդիրներին վերադառնալով՝ պետք է նշենք, որ չկան և վերլուծված չեն միջին՝ այն իդեալական կերպարները, որոնց կուզենալինք, որ մեր սերունդը հետևեր և որոնց վրա մեր բարոյահոգեբանական գաղափարախոսությունը կառուցեինք: Նույնիսկ բանավեճի մակարդակով չունենք այդ միջին իդեալականացված կերպարը: Կա մի խնդիր ևս. հաճախ մեր երիտասարդներին հորդորում ենք, որ անհրաժեշտ է առաջնորդվել մեր պատմությամբ: Սակայն երիտասարդներն իրենց աչքի առաջ ունեն օրինակներ, երբ հաջողության հասնում են հանցավոր հեղինակությունները՝ մարդիկ, որոնք պատմության հետ առնչություն չունեն: Բացի այդ, կան հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ այն խմբերը, որոնք «կաշկանդված են պատմության կաղապարներով», որպես կանոն, առաջընթաց չունեն: Արդյո՞ք մենք խնդիր չունենք այդ պատմությունը մատուցելու կամ այդ պատմությունը վերանայելու:

Ինչ վերաբերում է աղանդ բառի խնդրին, ապա նույն տրամաբանությամբ այն պետք է գործածենք ոչ միայն կրոնական, այլև ամբողջ քաղաքական - հասարակական ոլորտում: Աղանդը՝ որպես ձև, իմաստ, բովանդակություն և կյանքի որակ, շատ բնորոշ է թե՛ ՀՀ քաղաքական կուսակցություններին, թե՛ հասարակական խմբերին:

**Գազիկ Հարությունյան.** Երբ խոսում ենք հերոսների, իդեալական կերպարների մասին, պետք է հիշել ամերիկյան բազմամիլիոն դոլարներ արժեցող նախագիծը, որը կոչվում է «*Россия без героев*»: Այդ նախագիծը այս կամ այն չափով գործել է նաև հետխորհրդային այլ հանրապետություններում, որոնք նույնպես «զրկվել են հերոսներից»: Բայց միայն այն քաղաքակրթություններն են հասել հաջողությունների, ինչպես, օրինակ՝ անգլոսաքսոնական, չինական, որոնք հենվել են իրենց պատմության վրա և ճիշտ մեկնել այն ու առաջ գնացել: Պետք է պահպանել անցյալը և դրա հիման վրա գնալ առաջ: Ցանկացած խզում անցյալի և ներկայի միջև, որն այսօր նկատվում է, հղի է վտանգներով: Այսօր

խոսում ենք, որ չունենք եկեղեցու արժանավոր սպասավորներ, չունենք պետության արժանավոր սպասավորներ, գիտական վերարտադրման համակարգը ջարդվել է, խզում է տեղի ունեցել անցյալի և այսօրվա միջև, ինչը սպառնալիք է անվտանգությանը:

**Արմինե Միմոնյան.**– Ես կարծում եմ, որ ճիշտ չէ աղանդավորների մասին խոսելիս նրանց կոչել կրոնական կազմակերպություններ, պետք է պարզապես դրանք անվանել աղանդավորական կառույցներ: «Կրոն» ասվածը նրանց համար պարզապես քող է աշխարհաքաղաքական, քաղաքական նպատակներ իրականացնելու համար: Աղանդավորական կառույցների իրավունքները հաճախ ներկայացվում են խղճի ազատության համատեքստում, սակայն այս կառույցների գոյության խնդիրը պետք է դիտարկել պետության ազգային անվտանգության տեսանկյունից: Այս կառույցները, օգտվելով մարդու իրավունքների, խղճի ազատության, ժողովրդավարության դրոշից, կատարում են քայքայիչ գործունեություն մեր երկրում: Օրինակ՝ Եհովայի վկաների գաղափարախոսության առանցքում դրվում է պետությանը, հասարակական, պետական ինստիտուտներին չենթարկվելու, սահմանադրությունը մերժելու հստակ քարոզչություն: Մորմոնների քննարկման ժամանակ, որին անձամբ մասնակցել եմ, Արգենտինայից ժամանած մի մորմոն իր ելույթում ասում էր. «Միրելի ժողովուրդ, ձեզ ոչ ոք օգնել չի կարող, դուք վտանգի եք ենթարկվում ամեն թույլ փողոց դուրս գալով, փորձեք քիչ շփվել հասարակության հետ: Ձեր պետությունը, կառավարությունը երբեք չի կարող օգնել ձեզ, օգնություն ստանալու համար մեր եկեղեցու միջոցով պետք է գնալ դեպի Աստված: Ուրեմն մտեք ձեր տուն, փակեք դռները, նայեք երկինք»: Մա մարդուն հասարակությունից օտարելու և պետության դեմ ուղղված հստակ քարոզչություն է: «Ինչո՞ւ եք գնում թատրոն, օպերա, դրանք սատանայական երևույթներ են». սա արդեն ազգային մշակույթից հասարակությանը օտարելու ձև է: Նշեմ մեկ այլ օրինակ ևս, որը վերաբերում է «Կյանքի խոսք» եկեղեցուն, որի ղեկավարը՝ Արթուր Միմոնյանը, ակտիվորեն զբաղվում է արտաքին քաղաքականության խնդիրներով, քննարկում է ցեղասպանության հարցը, կասկածելի հանդիպումներ է ունենում Թուրքիայում: Այս ամենը կատարվում է հրապարակավ: «Կյանքի խոսք» եկեղեցում բուն քարոզչության գործընթացը սկսվում է բարձր երաժշտությամբ: Այնուհետև մարդիկ ընկնում են հատակին և կրկնում են քարոզողի խոսքերը: Հետո դույլերի միջոցով գումար է հավաքվում: Կատարվում է նաև «Կյանքի խոսք» եկեղեցու ղեկավար Արթուր Միմոնյանի գրած գրքերի վաճառք:

**Հովակիմ վարդապետ Մանուկյան.** - Մարդկանց լեզվամտածողությանը տիրելով՝ տիրում են մտածողությանը և ղեկավարում այն: Եթե աղանդավորական կառույցներից Եհովայի վկաներն ընդհանրապես մեկուսացված են, ապա մորմոններն ակտիվորեն ընդգրկված են պետության կյանքում: Օրինակ՝ ամերիկյան հետախուզական ծառայությունը հրաշալի կերպով օգտագործում է նրանց հնարավորությունները՝ հաշվի առնելով լեզուներ սովորելու նրանց ունակությունները:

**Արթուր Հովհաննիսյան.** - Ինչ վերաբերում է կրոնի մասին վերոնշյալ նախագծին, ապա այն թերություններ ունի: Ո՞րն է մեր նպատակը. որ այն լինի կատարյալ ազգային անվտանգության պահպանման տեսանկյունի՞ց, թե՞ դառնա հերթական ձևական օրենքը և մարդու իրավունքների պաշտպանության կեղծ կարգախոսի տակ չճառայի իր նպատակին: Տեղեկատվական, հոգևոր և ազգային անվտանգության օրակարգում պետք է լինի ոչ միայն կրոնական կառույցների խնդիրը, այլ նաև հեռուստատեսությունը, որը, իրոք, վտանգավոր կարող է լինել: Գործնականում այս խնդիրների հաղթահարմանն ուղղված ոչ մի քայլ չի կատարվում: Այս խնդիրներին գործնական մոտեցումներ են պետք, դրանք պետք է կարգավորվեն օրենսդրորեն:

**Ալեքսանդր Ամարյան.** - Հոգևոր անվտանգության խնդիրներն ավելի հաճախ քննարկման կարիք ունեն: Հայ Առաքելական եկեղեցուն մենք չէ, որ մենիշխանական իրավունքներ ենք տվել, դա տեղի է ունեցել դարերի ընթացքում: Հայ ժողովրդի ինքնության պահպանման երաշխիքը մշտապես հայ եկեղեցին է եղել: Ոչ մի ազգ չպետք է մոռանա իր անցյալը: Եվ չպետք է հիշել միայն վատը: Ժամանակին կային ֆիլմեր, որոնք վկայում էին մեր հերոսական անցյալի մասին: Այժմ իրավիճակն այլ է: Հեռուստատեսությունում գերակշռում են հանցագործություններ պատկերող ֆիլմերը:

Ինչ վերաբերում է ՋԼՄ ազատությանը, քանի դեռ դրանք պատկանում կամ հովանավորվում են տարբեր հայացքների տեր անձանց կողմից, ազատության մասին խոսել չի կարելի:

Մեծ վտանգի առջև ենք կանգնած, քանի որ փորձում ենք վերցնել այն, ինչ մերը չէ, այն ամենը, ինչ պարտադրաբար հրամցնում են մեզ: Ուղեղների արտահոսք է տեղի ունենում, հիմնականում գրանտների միջոցով, որոնք տրամադրվում են գերազանցապես այլ երկրների կողմից: Աղանդները մեզանում նոր երևույթ չեն: Առաջին անգամ Եհովայի վկաները Հայաստանում հայտնվել են 1972թ., իսկ առաջին հայ եհովականը հանդես է եկել 1975-ից: Դրանք եղել են նաև խորհրդային իշխանության տարիներին, սակայն ազատ գործել չեն կարողացել, քանի որ հսկողություն է եղել: Այժմ այդ հսկողությունը

վերացել է: «Հավատքի համար հետապնդվող» մարդիկ կանաչ լույս են ստանում արտերկրում, նրանց ֆինանսավորում են, կրթություն տալիս, քարոզում են և հետ ուղարկում՝ որպես «հոգևոր հովիվներ»: Աղանդավորական կառույցների մասին ժողովրդին անհրաժեշտ է տեղեկատվություն տրամադրել: Տեղեկատվության ազատություն պետք է լինի, բոլոր ցանկացողներին պետք է հնարավորություն ընձեռվի ցանկացած տիպի տեղեկատվություն ստանալ:

**Պագիկ Հարությունյան.** - Հոգևոր անվտանգության խնդիրների շուրջ բանավեճերը, նաև այս բանավեճը, վկայում է տվյալ խնդրի ակտուալության մասին: Այս խնդիրները լուծելու համար դեռ բազում քայլեր պետք է ձեռնարկվեն: Առաջին հերթին կարևոր է հստակ ձևակերպել, թե ինչպիսին են լինելու այս խնդիրների հաղթահարմանն ուղղված հաջորդ քայլերը՝ թե՛ տեսական, թե՛ գործնական իմաստներով: Տեսականը ևս շատ կարևոր է, քանի որ ոչ մի ճշգրիտ քայլ չի կարելի ձեռնարկել, եթե այն չունենա տեսական հիմք: Չնայած նրան, որ տարածված է այն կարծիքը, թե հասարակագիտությունը չունի հստակ ձևակերպված սահմանումներ, դա այնքան էլ չի վերաբերում տեղեկատվական անվտանգությանը: Այս խնդիրը բավական բարձր գիտական մակարդակով մշակված է մի քանի երկրներում: Սա բավարար է՝ գոնե փորձելու խուսափել որոշ սխալներից մեր հանրությունում:

**ՀԱՆՐԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿՑՈՒՄԸ.  
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԼԻՏԱ**

***Իգոր Բաղիրյան***

***1. Էլիտաների կառուցվածքը որպես հասարակության  
գիտակցության վիճակի որոշիչ գործոն***

Փորձագետներն առանձնացնում են էլիտայի երկու հիմնական հատկանիշ.

- իմաստի գեներացիա, արտադրություն
- հասարակայնորեն նշանակալի իշխանական որոշումների վրա ազդելու ընդունակություն:

Այս մոտեցման համաձայն, կուսակցությունների ինստիտուտին, որոնք դիտարկվում են որպես էլիտա խմբավորումների կազմակերպական-իրավական կազմավորում, ներկայացվում են գաղափարախոսության առկայության որոշակի պահանջներ և իշխանության ձգտում:

Էլիտա հասկացության մեկնության ամենաբարձր մակարդակում (ֆունդամենտալ, բազիսային էլիտա) իմաստի արտադրությունը նշանակում է ոչ թե պարզապես գաղափարախոսություն, այլ *կյանքի իմաստ*: Հենց նման ֆունդամենտալ էլիտաների շնորհիվ է հասարակությունը գտնվում կյանքի իմաստների որոշակի կառույցի դաշտում: Այդ իմաստները նույնպես, ինչպես և դրանց համապատասխան ֆունդամենտալ էլիտաները, կրում են արտածամանակային, մշտական բնույթ: Փոխվում են միայն դրանց տեսակարար կշիռները հասարակությունում:

Յուրաքանչյուր համեմատաբար երկար ժամանակային հատվածում առավել մեծ տեսակարար կշիռ բաժին է ընկնում էլիտաներից մեկին, և հասարակությունում գերիշխում է համապատասխան կյանքի իմաստը:

Հնդեվրոպական քաղաքակրթությունն ուսումնասիրող գիտության շրջանակներում ընդունված է առանձնացնել ֆունդամենտալ էլիտաների երեք տեսակ՝ կյանքի իրենց իմաստներով (առաքելություններով): Դրանք պայմանականորեն կարելի է անվանել տնտեսական, պետական-բյուրոկրատական, կրոնափիլիսոփայական: Ընդ որում՝ վերջինի տակ հասկանում են ոչ թե հայտնի կրոնների (քրիստոնեություն, մահմեդականություն, բուդդայականություն և այլն) կոնկրետ ինստիտուցիոնալ կազմավորումները, այլ դրանց հոգևոր հիմքը կրողներին:

Դրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական կյանքի վրա, որպես կանոն, կրում է ծածուկ, ոչ ակնհայտ բնույթ՝ մակերևույթին հայտնվելով հոգևոր զարգացման պարադիգմերի փոփոխության հասման կետում:

Անցյալի տեսանելի ժամանակահատվածում հասարակական-քաղաքական զարգացման դինամիկան պայմանավորվում էր առաջին երկու էլիտաների՝ պետական-բյուրոկրատականի և տնտեսականի դիմակայությամբ:

Հայտնի հնդեվրոպաբան Դյումեզիլը ապացուցում է, որ եվրոպական աշխարհամասում ժամանակագրական առումով առաջինը գերիշխում էր պետական-բյուրոկրատական (զինվորական) էլիտան: Այս էլիտայի գերիշխանությունը մեր օրերում փոխվել է, տնտեսական էլիտայի գերիշխանությամբ: Էլիտաների փոփոխման գործընթացը հրահրել է բուրժուական հեղափոխությունների հորձանք:

Որպես ներքին կյանքում պետական-բյուրոկրատական էլիտայի իդեալ, փոքր-ինչ չափազանցված ձևով, հանդես է գալիս բարեկարգ, հստակ աշխատող գորանոցը: Առավել նշանակալի ինստիտուտներն են անվտանգությունը, բանակը, ռազմարդյունաբերական համալիրը: Արտաքին քաղաքական առումով որպես նպատակ հանդես է գալիս տարածքն իր հաղորդակցություններով, ռեսուրսներով և բնակչությամբ:

Գիտության ոլորտում նախապատվությունը տրվում է բնական գիտություններին, որոնց մշակումները կարելի է արագ փոխակերպել ռազմականի:

Բարոյաէթիկական ոլորտում անհատից պահանջվում է լինել հասարակության օգտակար անդամ՝ *համակարգի օգտակար տարր*: Ընդ որում՝ հաստատվում է *համակարգի տոտալ առավելությունը անհատի նկատմամբ*:

Բնական է, որ տնտեսական էլիտան, որ իշխանության է գալիս պետական-բյուրոկրատականի հետ դիմակայության գործընթացում, ի գիտություն է ընդունում անձի ազատության կարգախոսը, որը նույնացվում է դեմոկրատիայի և լիբերալիզմի հասկացությունների հետ: Այդ կարգախոսները համապատասխանում էին տնտեսական էլիտաների (որին դիմակայում էր պետական ապարատը) հաստատման սկզբնական փուլին:

Երկրորդ փուլում տնտեսական էլիտան էլ ավելի է սերտաճում պետական ապարատին: Մի շարք փորձագետների կարծիքով՝ ամերիկյան համակարգի կարճ բանաձևը պետության և խոշոր բիզնեսի միասնական կադրային տարածքն է՝ գումարած «ուղեղային կենտրոնների» համակարգը: Կառավարման մեթոդներն ավելի շատ են հենվում ոչ թե մտրակի և բլիթի ուղղակի մեխանիզմներին (պետական-բյուրոկրատական էլիտա), այլ մարդու հոգեբանության վրա ազդեցության անուղղակի հնարքներին: Համապատասխանաբար՝ կրթության ոլորտում առաջնահերթությունները տրվում են իրավագիտությանը, էկոնոմիկային, հոգեբանությանը: Այս փուլում տնտեսական էլի-

տայի գաղափարախոսությունը սկսում է կրել էլ ավելի ագրեսիվ բնույթ՝ պետական-բյուրոկրատականի համեմատ էլ ավելի մեծ ինտենսիվությամբ ճնշելով անձի ազատությունը:

Գալով իշխանության՝ տնտեսական էլիտան, ինչպես և նախորդը, ակտիվորեն օգտագործում է առասպելաբանության գործիքանին՝ հասարակության գիտակցությունը փոխելու («ուղեղների լվացում») և իր իշխանությունը հաստատելու համար: Առասպելի նպատակը մեկն է՝ գիտակցության մեջ մտցնել այն փաստը, որ հասարակական-քաղաքական կարգի առկա ձևն ամենալավն է այն իմաստով, որ գրկված է նախորդների թերություններից և թույլ է տալիս էվոլյուցիոն զարգացում: Տնտեսական էլիտայի արդի գաղափարախոսները ոչնչով չեն տարբերվում ինչպես Հեգելից, որն իդեալականացնում էր կառավարման այն ժամանակվա ձևը (պրուսական միապետություն), այնպես էլ Խոբսբերդային Միության գաղափարախոսներից:

Թուրինի համալսարանի պրոֆեսոր Ալեսանդրո Պիցերնոն արդի դեմոկրատիան բնութագրել է որպես արևմտյան պետությունների նոր կրոն՝ իր ծեսերով՝ ընտրություններ, օրհներգեր, արարողություններով ու խաչակիրներով, որ պատրաստ են ոչնչացնել հակադեմոկրատական չարիքն աշխարհում:

Քանի որ շուկան՝ որպես առքուվաճառքի տոտալ տարածքի խոբսբերդանիշ, հանդես է գալիս միջանցիկ գաղափարախոսությամբ, ապա քաղաքականությունը պարտադրվում է ապրանքի գովազդի ձևով: Արդյունքում՝ ռեալ իրավունքը խիստ կապված է տնտեսական էլիտայի մոտ կենտրոնացված ֆինանսա-կազմակերպատեղեկատվական ռեսուրսի հետ:

Արդի դեմոկրատիայի ակնհայտ թերությունների չեզոքացման համար ակտիվորեն օգտագործվում է նախադասությունների կառուցակցման հոգեբանական հնարքը՝ բաղկացած երկու մասից. առաջին մաս – դեմոկրատիայի՝ որպես հասարակական-քաղաքական կարգի քննադատություն, երկրորդ մաս – պնդում, թե մյուսներն ավելի վատն են: Այստեղ օգտագործվում է հոգեբանության մեջ լայնորեն հայտնի՝ գիտակցության մեջ կեղծ ինֆորմացիայի ներդրման մեթոդը: Գիտակցությունը բացվում է ճշմարտացի ինֆորմացիային ընդառաջ առաջին մասում և ներս է թողնում երկրորդին՝ կեղծը: Ավելի համոզիչ լինելու համար այդ առաջարկները միշտ վերագրվում են շատ հայտնի անձանց, օրինակ՝ Ու.Չերչիլին:

## ***2. Իշխանությունը և գիտակցության վիճակների փոփոխության մեթոդները***

Իշխանությունը որոշակի ուղղությամբ և առկա նպատակին համապատասխան հասարակության շարժը իրականացնելու ընդունակությունն է: Արդի ժամանակահատվածը բնութագրվում է նրանով, որ իշխանական էլի-

տաները հստակ հասկանում են, որ իրենց համար ցանկալի ուղղությամբ շարժվելու անհրաժեշտությունը պետք է *գիտակցաբար կիսեն բավական լայն հասարակական շերտեր*:

### **2.1 Իշխանության իրականացումը՝ որպես հասարակության գիտակցության վիճակի փոփոխություն**

Իշխանությունը կարելի է սահմանել որպես *հասարակությանը գիտակցության փոփոխված վիճակի մղելու կարողություն*, որում իշխանական էլիտաների նպատակները կներկայացվեն որպես ցանկալի: Այս հանգամանքը 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ պայմանավորեց մարդու հոգեկանի վրա ներգործության մեթոդների ամենաարագ, առաջանցիկ զարգացումը:

Այստեղ հարկ է արժանին մատուցել Նոբելյան մրցանակակիր Ջ.Գելբրեյթին՝ պետության և առանձին հասարակական ինստիտուտների մակարդակով հոգեբանական հնարքների ապագա տոտալ օգտագործման մասին մոայլ հոռետեսական կանխատեսման հեղինակին: Անցյալ դարի 60-ականների սկզբին արված այդ կանխատեսումն այսօր արդեն իրականություն է:

Հոգեբանական ներգործության օգտագործվող բոլոր մեթոդների հիմքում ընկած է գիտակցության վիճակների ամբողջ սպեկտրի գոյության մասին պատկերացումը: Ընդ որում՝ անհատների ճնշող մեծամասնությունը ժամանակի յուրաքանչյուր տվյալ պահի կարող է գիտակցել գիտակցության միայն մի մակարդակ: Յուրաքանչյուր նման մակարդակի, այսինքն՝ գիտակցության վիճակի հետ կապվում է իրականության տեսլականի որոշակի տեսակը և դրա զգացողությունը: Գիտակցության մեկ այլ (փոփոխված) վիճակի օրինակ է սովորական քունը:

Գիտակցության ընթացիկ (կենցաղային) տիրապետող վիճակը առանձնանում է մարդկային բիոհամակարգչի ռացիոնալ բաղադրիչի ակտիվ գործառնությամբ: Ակտիվ գործառնություն ասելով նկատի է առնվում մուտքային տեղեկատվության վերլուծությունը տրամաբանության դիրքերից, անցյալի փորձին համապատասխանությամբ: Արդյունքում՝ տեղի է ունենում տեղեկատվության սելեկտիվ ընտրություն և դրա ներկառուցում կենսափորձի արդեն ձևավորված մատրիցայում:

Գիտակցության փոփոխված վիճակներում այս ռացիոնալ ծրագրերը զգալիորեն թույլ են աշխատում կամ էլ ամբողջովին անջատված են: Արդյունքում՝ տեղեկատվությունը ոչ քննադատաբար գրանցվում է հիշողության մեջ:

Հաշվի առնելով այն հիմնարար հանգամանքը, որ գիտակցության վիճակների բոլոր մակարդակների միջև ամբողջ ընթացքում տեղի է ունենում տեղեկատվության պատճառահետևանքային փոխանակություն, նշանակում է՝ անհատի գործողությունները դուրս են գալիս ռացիոնալ գիտակցության կողմից չվերահսկվող մակարդակ:



Այսպիսով, հոգեբանական ներգործության ընդհանուր խնդիրը հանգեցվում է երկու առանձին խնդիրների լուծմանը. անհատին բերել գիտակցության փոփոխված վիճակի և որոշել տեղեկատվության տեսակը, որն այդ վիճակի մեջ կընկալվի որպես արտաքին սուբյեկտների համար ցանկալի գործողությունների անվերապահ հրաման: Հենց այս ուղղությամբ են տարվում առավել ինտենսիվ, հիմնականում՝ փակ հետազոտությունները:

Հասանելի գրականության մակարդակով այսօր կարելի է խոսել գիտակցության վիճակների փոփոխված մակարդակների վրա դուրս գալու հետևյալ մեթոդների և դրանց օգտագործման մասին:

## 2.2 Հիպնոս

**Ցիկլիկ, կրկնվող գործողություններ և տեղեկատվություն.** հիպնոսի գոյություն ունեցող տեսությունը, մեղմ ասած, հեռու է ավարտուն լինելուց: Ըստ էության, առկա են ընդամենը առանձին փորձարարական փաստերի ընդհանրացումներ:

Առաջին հերթին դրանց է վերաբերում այն փաստը, որ ցիկլիկ, պարբերական գործողությունները, ինչպես և պարբերաբար կրկնվող տեղեկատվությունը անհատին բերում է գիտակցության այլ, փոփոխված, տրանսային վիճակի: Բաց աչքերով հարթմնի քնի նման մի բան: Նման ցիկլիկ գործողություններ են, օրինակ, շուրջպարերը, ռիթմիկ երաժշտությունը, պարբերաբար կրկնվող արարողությունները: Այս փաստը հատկապես լայնորեն օգտագործվում է բանակում և ուժային այլ կառույցներում, նախևառաջ՝ ամեն օր միևնույն ժամին կրկնվող արարողությունների ձևով:

Ուշագրավ է այն հիմնարար փաստը, որ մարդկանց ճնշող մեծամասնությունը յուրաքանչյուր առավոտն սկսում է գրեթե նույն գործողություններով: Այսպիսով, ստեղծվում է ասես գիտակցության միևնույն վիճակի մեջ հայտնվելու բնական նախադրյալ:

Այս մասին շատ պատկերավոր արտահայտվել է ավստրիացի գրող Գ.Մանրիկի «Գուլեմ» ստեղծագործության հերոսներից մեկը: Էությունը մոտավորապես հետևյալն է. իրավիճակի տրագիկոմիզմն այն է, որ առավոտյան արթնանալով՝ *մարդուն թվում է, թե իսկապես արթնացել է, այնինչ, նա հայտնվում է էլ ավելի ամուր քնի վիճակի մեջ:*

Հենց այս պատճառով է, որ հնդեվրոպական բոլոր կրոնները մարդու հոգևոր զարգացումը կապում են *քնից վերջնական արթնացման հետ* (Բուդդա՝ նշանակում է արթնացած): Այս հանգամանքի հետ է կապված նաև քնի թագավորության և այն արթնացրած հերոս արքայազնի մասին ժողովրդական հեքիաթների սյուժեն:

Հիպնոսի տեսության մեջ նշվում է, որ գիտակցության փոփոխված վի-

ճակներում (գիտակցության ընթացիկ, կենցաղային վիճակներից տարբեր վիճակներ) գոյություն ունեն տեղեկատվության ձևեր, որոնք ընկալվում են որպես հրաման: Տեղեկատվության նման ձևերի որոնումը հետազոտության ամենախնտենսիվ ուղղություններից մեկն է:

ԱՄՆ-ում հիպնոսի առաջատար մասնագետներից մեկը՝ Չարլզ Թարտը, գրել է այն մասին, որ իր վրա միշտ ամենաճնշիչ տպավորություն է թողնում այն փաստը, որ գիտակցության փոփոխված վիճակում գտնվող անհատին տրված հրամանը հետո արդեն նա, վերադառնալով սովորական, կենցաղային վիճակի, համառորեն ջանում է կատարել, ավելին՝ հարցերի դեպքում դրա համար ռացիոնալ բազա է բերում:

**Տարածության կառուցվածքային ձևավորում.** գիտակցության փոփոխված վիճակին հասնելու մեկ այլ եղանակ է անհատների շուրջ որոշակի տարածքային կառուցվածքի ստեղծումը: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը նման կառուցվածքի օրինակ է հատյալ բուրգը: Նրա հիմքի մոտ գտնվող անհատները, անկախ բուրգի գագաթին գտնվող անձանց որակից, սկսում են նրանց ընկալել որպես բնական, խարիզմատիկ լիդերներ:

Նույն էֆեկտի ստեղծմանն են ուղղված նաև T-ատիպ հսկայական սեղանները պետերի աշխատասենյակներում: Սեղանի այս ձևը, զուգահեռ գծերի նեղացման էֆեկտի հաշվառմամբ, այդ նույն հատյալ բուրգի հարթ տեսակն է: Արդյունքում՝ սեղանի հետևում նստած պետն արդեն սովորական անձավորություն չի ընկալվում, այլ մեկը, որ հրամաններ տալու բնական իրավունք ունի:

Ուշադիր անհատը ուշադրություն կդարձնե այն հանգամանքին, որ ընկերասեր, վստահելի խոսակցության տրամադրված պետը հաճախ վեր է կենում սեղանի առջևից և նստում խոսակցի դիմաց՝ սիմետրիկ դիրքով:

### **2.3 Ընթացիկ գիտակցությամբ չվերահսկվող հրամայական տեղեկատվության ներմուծում**

Մարդկային բիոհամակարգիչն ունի նաև հիմնարար մի հատկություն, որը կապված է նրա իներցիոնության հետ. արտաքին տեղեկատվությունը մշակելու և, որպես արդյունք, այն գիտակցելու համար որոշակի ժամանակ է պետք: Պատկերավոր ձևով սա կարելի է ներկայացնել որպես տեղեկատվության ընկալում առանձին կադրերի ձևով:

Առանձին կադրի մշակումը ժամանակի որոշակի միջակայք է պահանջում: Այդ միջակայքի ներս թափանցող ողջ տեղեկատվությունն անցնում է գիտակցության այլ մակարդակներ (ենթագիտակցություն), որը չի վերահսկվում գիտակցության ընթացիկ մակարդակով:

Եթե այդ տեղեկատվությունը ծրագրային կարգադրության բնույթ կրի, ապա անհատը, չգիտակցելով դա, կձգտի կատարել այն: Այս հնարքն արդեն օգտագործվում է գովազդի համար՝ ապրանքի ենթագիտակցական պարտադրմամբ: Մեկ այլ, անհամեմատ ավելի վտանգավոր տարբերակ է գաղափարների, լիդերների, քաղաքական շարժումների գովազդը:

#### **2.4 Ապագայի փոփոխությունն սկսվում է անցյալի փոփոխությունից**

Մարդկային բիոհամակարգչի ծրագրային ապահովումն ունի մշակվող տեղեկատվության գծային էքստրապոլյացիայի հիմնարար հատկություն:

Այս հատկությունն իր արտահայտությունն է գտել տվյալների ժամանակային շարքերի մշակման հետ կապված համակարգչային ծրագրերում: Առավել շատ օգտագործվող ծրագրերը իրենցից ներկայացնում են կա՛մ ժամանակային շարքի նկարագրման շարունակությունն ապագայում (որպես կանոն՝ գծային), կա՛մ ռեգրեսիվ հավասարում, որում պատճառահետևանքային կապի (հավասարման ձևը և գործակիցը) տեսակը փոխադրվում է ապագա:

Այսպիսով, ինչպես առանձին անհատի, այնպես էլ հասարակության համար ընդհանրապես *ապագան երևում է որպես անցյալի գծային շարունակություն*: Ավելի ճիշտ՝ *գծային շարունակության սցենարն ընկալվում է առավելագույն հավաստով, ինչն էլ այն առավել հավանական է դարձնում*:

Այս արդեն բավական վաղուց հայտնի փաստը դրսևորվում է երկու հիմնարար հետևանքներում:

Դրանցից մեկը կապված է այն հանգամանքի ըմբռնման հետ, որ որակական (ոչ էքստրապոլյացիոն) կանխատեսումը կապված է միայն ինտուիցիայի հետ և չի կարող ստացվել ռացիոնալ մեթոդների հիման վրա: Վերջինները կարող են լրացնել և մեկնաբանել ինտուիտիվ տեսլականը:

Այս հանգամանքը պայմանավորեց մարգարենների, գուշակների ինստիտուտի ի հայտ գալը, որոնք օժտված էին ապագայի սցենարները տեսնելու ընդունակությամբ:

Մյուս հետևանքը կապված է *անցյալի պատկերացումը փոխելու անհրաժեշտության հետ այն իմաստով, որպեսզի նոր գծային էքստրապոլյացիան դուրս բերի դեպի ցանկալի ապագա*:

Այս նպատակի համար առավել արդյունավետ է առասպելաբանության գործիքանին:

Առասպելը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- կրի որոշակի գաղափարախոսություն, որը թույլ է տալիս նրա գծային էքստրապոլյացիան ապագայում
- իր կառուցվածքով լինի արքետիպային՝ համապատասխան Կ.Յունգի տեսության: Դա նշանակում է, որ առասպելի հիմնական գործող անձինք

պետք է ընդգրկված լինեն արքետիպերի կազմում, այդ թվում՝ հերոս, թշնամիներ, դավաճաններ, հավատարիմ ընկերներ, սիրող կանայք (հավատարիմ ընկերուհիներ) և այլք

- լինի ինքնաբավ, այսինքն՝ բացատրության համար չպահանջի արտաքին տեղեկատվություն
- որոշակի սիմվոլիկա կրի:

*Առասպելաբանության համատեքստում զարգացումը մի առասպելից մյուսին անցումն է:* Այդ անցումը ներառում է հին առասպելի կործանման և նորի ստեղծման փուլերը:

Տեսանելի անցյալում հին առասպելի կործանումն իրականացվում էր հին հերոսների և սիմվոլիկայի պսակազերծման հաշվին, ընդ որում՝ ավելի հաճախ նրանց ուղղակի նսեմացնելու և սովորականի մակարդակի իջեցնելու հաշվին: Այս գործիքի օգտագործման ցայտուն օրինակ են ոչ վաղ անցյալի պատմական իրադարձությունները: Խորհրդային Միության հիմնադրման փուլում ստեղծվել էր հերոսների՝ քաղաքացիական պատերազմի առաջնորդների, պետության և որոշակի սիմվոլիկայի առասպել: ԽՍՀՄ փլուզման փուլում լայնորեն օգտագործելով անեկդոտի, շարժի հոգեբանական հնարքները՝ այդ հերոսները և սիմվոլիկան նսեմացվեցին մինչև առավելագույն ցածր սովորականի մակարդակը: Ձուգահեռաբար կառուցակցվում էր նոր առասպել, որ գաղափարայնացնում էր արևմտյան համակարգի որոշ չափով պարզեցված սխեմատիկ պատկերացումը:

Ներկայումս ընթանում է հերթական առասպելի ձևավորման և նախորդի կործանման գործընթացը՝ *նոր աշխարհակարգի անհրաժեշտության հիմնավորման* նպատակով: Դրա համար առավելագույնս օգտագործվում է արհեստականորեն ստեղծված և հրահրված գլոբալ ֆինանսական ճգնաժամը:

Ձուգահեռաբար լայնորեն կիրառվում է ազգային լիդերներին, նրանց անբավարար բանիմացությունը և գործունակությունը թաքուն ծաղրելու և անվանարկելու նախկին հնարքը:

*Նպատակն է՝ հոգեբանորեն հիմնավորել թեզն այն մասին, որ ազգային լիդերներն արդեն ի վիճակի չեն գլուխ հանել ազգային խնդիրներից: Հաջորդ տրամաբանական եզրակացությունն այն է, որ ազգային պետությունը՝ որպես պատմության սուբյեկտ, բարոյապես հնացել է: Այս պատկերացումն արդեն հնչեցվել է բավական բարձր մակարդակներում, և կարծես թե ստիպողաբար կսերմանվի նաև հետագայում:*

### **3. Ֆունդամենտալ էլիտաների կողմից գեներացվող կյանքի իմաստները**

Կյանքի այս իմաստներն առավել արտահայտիչ են դրսևորվում հերոս հասկացության բովանդակության մեջ երեք էլիտաներից յուրաքանչյուրում: Այդ բովանդակությունն արդեն իր պատկերավոր և խորհրդանշական արտահայտությունն է ստացել կինոյում և գրական ստեղծագործություններում, զովագղներում:

**Տեստասկան էլիտա.** այս էլիտայի կողմից գեներացվող կյանքի իմաստը կարելի է արտահայտել հավասարության տեսքով, որի աջ մասը ներկայացնում են հենքային նյութական բարիքները՝ անշարժ գույք՝ ներառյալ հողային տարածությունը, ենթակառուցվածքը, ներառյալ անձնակազմը, տեղեկատվությունը, կանանց (հայրիշխանական հասարակությունում կինը համարվում է հաջողության չափանիշ):

Հավասարության ձախ մասը պետք է արտահայտի աջ մասի հավաք (կոմպակտ) խորհրդանշական համարժեքը՝ փողը: Փող ասելով պետք է հասկանալ ոչ թե ցանկացած ազգային արժույթն իր գործողության սահմանափակ շառավղով, այլ համաշխարհային արժույթը՝ դոլարը, որ վաղուց արդեն փողի համաշխարհային խորհրդանիշն է դարձել:

Նշված հավասարությունը միտումնավոր ներդրվում է սովորական մարդու գիտակցության մեջ ֆիլմաշարերի միջոցով, որոնցում հերոսների շոշափելի նպատակը, որպես կանոն, *կոմպակտ փողքիկ դոլարներով լի ճամպարուկն է, որը շատ հստակ արտահայտիչ ցուցադրվում է էկրանին:* Ինտենսիվորեն ներդրվում է *կյանքի իմաստի տեսողական ասոցիացիան՝ դոլարներով լի ճամպրուկը:* Այս խորհրդանիշը կրող հերոսները համապատասխան կինոնկարներում, կարևոր չէ, թե ինչ գնով ու մեթոդներով, վերջում ստանում են բաղձալի ճամպրուկը:

Կյանքի այս իմաստը որոշակի տեսական լեզվատիմություն է ստացել դասական մեյնսթրիմի կողմից: Վերջինիս հիմքն են կազմում ռացիոնալության սկզբունքը և նրա կրողը՝ հոմո էկոնոմիկուսը: Սկզբունքի էությունն այն է, որ հոմո էկոնոմիկուսի վարքագիծը ենթարկվում է շահույթի մաքսիմիզացման սկզբունքին: Այս տրամաբանական հիմքի վրա կառուցվում են պահանջարկի և առաջարկի հավասարության մակրո- և միկրոհաշվեկշռային սխեմաները, այդ կորերի պարամետրային կապերը:

Ռացիոնալացման սկզբունքի մաթեմատիկական անալոգը կարելի է ներկայացնել որպես նպատակային ֆունկցիայի մաքսիմիզացում կամ մինիմիզացում (եթե խոսքը կորուստների մասին է) որոշումների կայացման սահմանափակ ոլորտում: Առհասարակ, այդ սահմանափակումները կարող են և պետք է կրեն նաև բարոյական բնույթ: Բարոյաէթիկական բնույթի սահմանափակումները պետք է առաջադրվեն այլ ֆունդամենտալ էլիտաների կողմից:

*Հասարակական համակարգի համար գոյություն ունի միայն մեկ կայուն վիճակ՝ կապված կյանքի իմաստների բնական հիերարխիայի և համապատասխան ֆունդամենտալ էլիտաների հետ: Այդ հիերարխիայում տնտեսական էլիտան պետք է զբաղեցնի ամենացածր մակարդակը:*

Տնտեսական էլիտային և ընդհանրապես տնտեսությանը ինքնաբավ իմաստ հաղորդելն անդառնալիորեն տանում է բիզնեսի ոլորտում բարոյական սահմանափակիչների թուլացմանը և վերացմանը:

**Պետական-բյուրոկրատական էլիտա.** այս էլիտայի հիմքը կազմում են ռազմաստրատեգիական մտածողություն ունեցող մարդիկ: Արդեն նշել ենք, որ այս էլիտայի շրջանակներում անհատից պահանջվում է առավելագույնս օգտակար լինել համակարգին՝ պետությանը: Անհատի կյանքի նպատակը, իմաստը պետք է դառնա ժողովրդի բարեկեցությունը, որը սահմանվում է պետության բարձրագույն մարմինների կողմից:

Այս թեմատիկային նվիրված բազմաթիվ ֆիլմերի պլուժենները, որպես կանոն, կառուցվում են Կ.Յունգի արքետիպերի հավաքածուի հիման վրա: Այդ հավաքածուում կենտրոնական հերոսն է երկիրը, քաղաքը, մարդկանց խմբերին կործանումից փրկողը: Հերոսի հակառակորդներն են ներքին կամ արտաքին թշնամիները, որոնք հաճախ միավորվում են: Հերոսն անպայման ունենում է հավատարիմ ընկերուհի և դավաճան մեկը՝ մերձավոր շրջապատից:

Երջանիկ ավարտի դեպքում հերոսին սպասում է վաստակած պարգև պետության կողմից՝ գումարած ընկերուհու սերը: Տխուր ավարտի դեպքում հերոսը զոհվում է, և անպայման առկա է դրական տարր՝ մարդկանց և պետության հիշողության մեջ երախտագիտության ձևով:

Պետական-բյուրոկրատական էլիտայի սերմանած գաղափարախոսության էությունը կյանքի անհատական իմաստի ենթարկեցումն է պետության ռազմավարական շահերին: Այս էլիտայի հետ է կապված ընդհանուր առմամբ պետության և առանձին անհատների գործունեությանը կյանքի միախոնդերական իմաստ հաղորդելու ևս մեկ կարևոր ասպեկտ: Պետական-բյուրոկրատական էլիտան զարգացման գազաթնակետին է հասնում կայսերական պետական կազմավորումներում: Սա բացատրվում է նրանով, որ այդ էլիտային ներհատուկ է *արտաքին էքստենսիվ ինքնահաստատման* գործընթացը: Կայսերական էլիտան պետք է ունենա «Մեծ նախագիծ» քաղաքականության ոլորտում և մի շարք հավակնոտ նախագծեր սոցիալ-տնտեսական ոլորտում:

«Քաղաքականության ոլորտի «Մեծ նախագիծը» բարբարոս-հեթանոսներին (արտաքին աշխարհ) կրոնական բնույթի որոշակի դոգմաների պարտադրումն է. քրիստոնեություն, սոցիալիզմ, դեմոկրատիա, լիբերալիզմ և այլն: Կայսրության յուրաքանչյուր քաղաքացի իրեն պետք է առաքյալ-զինվոր զգա, որ բարբարոսներին է տանում կայսերական դոգմաների լույսը:

**Կրոնափիլիսոփայական էլիտա.** հնդեվրոպական բոլոր կրոնական ուղղությունների հիմքում ընկած է մարդու երկակի բնույթի մասին թեզիսը: Մարդու հիմքը Բարձրագույն Ես-ն է, որը նրան միավորում է Աստծո հետ:

*Անհատի կյանքի իմաստը նրա ընթացիկ և ըստ էության պատրանքային գիտակցության միավորումն է Բարձրագույն Ես-ի գիտակցության հետ: Այդ ակտը կոչվում է երկրորդ, կրկնակի ծնունդ:*

Ասվածը հետևյալ արտահայտություններն է ստացել հայտնի կրոններում.

- Հինդուիզմ. նրա բարձրագույն կաստան են բրահմանները (բրահման նշանակում է կրկնակի ծնված)
- Զրադաշտ (Իրան). մարդու մեջ կա Բարձրագույն Ես, և մարդու խնդիրն է միանալ նրա հետ
- Բուդդայականություն. Բուդդան արթնացումն է: Արթնացումը երկրորդ ծննդի համարժեքն է
- Քրիստոնեություն (Ավետարան). Տիրոջ արքայությանը հասնելու համար անհրաժեշտ է կրկին ծնվել ի վերուստ: «Ես և Հայրս մեկ ենք». Հիսուս Քրիստոսի այս պնդումը, որ աստվածանարություն է համարվել, նրան խաչելու պատճառ է հանդիսացել:

Հստակ պատկերացում է ստեղծվում, որ հնդեվրոպական հայտնի բոլոր կրոնների սկիզբն ընդհանուր կետ ունի: Այդ ընդհանուր կետը հաճախ կապում են Հերմես Տրիսմեգիստի (Գոր) հայտնի կոչի հետ. «Ծանի՛ր զքեզ»: Այս կոչում (որ գրեթե հրաման է) հաստատվում է երկու ես-ի առկայությունը, որոնցից մեկը պետք է ճանաչի՝ ձուլվի մյուսին՝ Բարձրագույն Ես-ին:

Կրոնափիլիսոփայական էլիտայի համար *հերոսը անհատն է, ով գիտակցաբար կանգնել է այդ ճանապարհին՝ իր ներքին Բարձրագույն Ես-ի հետ ձուլման ճանապարհին:* Հերոս հասկացության այս բովանդակությունն առավել ցայտուն արտահայտվել է հին հունական առասպելներում, որոնցում հերոսը բարձրանում է Օլիմպոս՝ Աստվածների մոտ և այնտեղ անմահություն ձեռք բերում: Մարդկության ուսուցիչները կամ ճանապարհի վերջին հասած հերոսներն են, կամ ի սկզբանե Բարձրագույն Ես-ի հետ մեկտեղված անհատները:

Այս դեպքում իրականացվում է այն տարբերակը, երբ «տեսանողներն առաջնորդում են կույրերին»: Այլ էլիտաների կողմից կառավարման մնացած բոլոր դեպքերում տեղի է ունենում *աստվածաշնչյան՝ «կույրերն առաջնորդում են կույրերին» պնդման* իրականացումը, երբ երկուսն էլ անպայման փոսն են ընկնում:

Կյանքի իմաստների վերոնշյալ երեք տեսակների համեմատական վերլուծությունը հանգեցնում է գլխավոր եզրակացությանը. *միայն կրոնափիլիսոփայական էլիտան է ինքնաբավ և ինքնուրույն մյուսներից: Մյուս բոլոր էլիտաները*

պետք է գործեն նրա համատեքստում: Ասվածն իր արտահայտությունն է գտնում հասարակական-քաղաքական համակարգի կառուցվածքում այն դեպքում, երբ խորհրդարանը գտնվում է կրոնափիլիսոփայական էլիտայի վերահսկողության տակ, գործադիր իշխանությունը՝ պետական-բյուրոկրատականի, իսկ տնտեսական էլիտան պետք է զբաղվի իրեն հարազատ բիզնեսով:

Ներկայացվածի համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ գոյություն չունեն ինքնըստինքյան լավ կամ վատ կյանքի իմաստներ (խոսքը պետական-բյուրոկրատական և տնտեսական էլիտաների մասին է): Դրանք հասարակության համար կործանարար բնույթ են ստանում այն ժամանակ, երբ դրանց և դրանց համապատասխանող էլիտաներին ինքնաբավ բնույթ է հաղորդվում:

#### **4. Զարգացման գլոբալիզացիոն սցենարներ**

Կայսրությունների ծագման, հզորացման ու կործանման պատմական դինամիկայի վերլուծությունը հետաքրքիր է դրանց կենսական շրջափուլերը հասարակությունում ֆունդամենտալ էլիտաների գերիշխանության փոփոխման գործընթացի հետ համեմատելու տեսակետից. կրոնափիլիսոփայական→պետական-բյուրոկրատական→տնտեսական:

Մոտ մեկ-մեկուկես տարի առաջ ռուսական հեռուստաալիքներով ցուցադրվում էր ամերիկյան մի ֆիլմ, որն ուսումնասիրում էր վերոնշյալ շրջափուլը Հռոմեական կայսրության դասական օրինակով: Ամենակարճ հատվածը բաժին է ընկնում հասարակությունում նյութական արժեքների գերիշխանության առավել կործանարար փուլին: Հզորության գագաթնակետին կայսրությունը կործանվում է արտաքին երիտասարդ զինվորական էլիտաների կողմից: Ֆիլմի հեղինակները համեմատություն էին անցկացնում ԱՄՆ կենսական շրջափուլի հետ՝ համապատասխան հոռետեսական կանխատեսմամբ:

Գլոբալ զարգացման արդի փուլի ամենավառ գիծը, որ միաժամանակ նաև վերլուծության ելակետային թեզիս է հանդիսանում, այն փաստն է, որ ճոճանակը միանշանակ տնտեսական սկզբից թեքվել է դեպի պետական-բյուրոկրատականի կողմը: Բայց շատ կարևոր է գիտակցել, որ այդ գործընթացը տեղի է ունենում պարուրաձև. ոչ թե ազգային պետությունների, այլ գլոբալ՝ համաշխարհային մակարդակով:

Համաշխարհային պետական-բյուրոկրատական էլիտայի համար հիմնական խոչընդոտներ են հանդիսանում ազգային էլիտաների երկու տեսակները՝ պետական-բյուրոկրատականը և տնտեսականը:

Բայց խնդիրը պետք է լուծել փուլ առ փուլ. առաջին փուլը ազգային պետական-բյուրոկրատական էլիտաներին հոգեբանական և կազմակերպչական լծակներից զրկելն է՝ առավելագույնս օգտագործելով տոտալ էկոնոմիզացման գործընթացը և տնտեսական էլիտաների ռեսուրսները, երկրորդ փուլը ազգա-



յին տնտեսական էլիտաներին հարստությունների իրական աղբյուրներից զրկելն է և նրանց արդյունավետ արտաքին վերահսկողության տակ դնելը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նախապես հզոր հարված հասցվեց եվրասիական աշխարհամասում ամենաուժեղ պետական-բյուրոկրատական էլիտաներին՝ Գերմանիային և Ռուսաստանին:

Առաջինը նացիստական անցյալի հետ ասոցիացիայի ճնշման տակ, ըստ էության, հայտնվեց ամորձատված վիճակում (ցավոք, ավելի համարժեք բառ չեմ կարողանում գտնել): Համանման իրավիճակում հայտնվեց Ճապոնիայի պետական-բյուրոկրատական էլիտան: Երկրորդը (ռուսականը) գտնվում է այդ նույն ինտենսիվ գործընթացում հասարակության տոտալ էկոնոմիզացիայի ճնշման տակ:

Ներկայում ներգործության օբյեկտներ պետք է դառնան երկրորդ էջերնի երկրները, որոնք նշանակալի պետական-բյուրոկրատական (զինվորական) էլիտաներ ունեն. Պակիստան, Իրան, Թուրքիա: Հատուկ սցենար կմշակվի կամ արդեն մշակվել է Չինաստանի համար:

Հասարակության էկոնոմիզացիայի գործընթացը, որ, բնականաբար, իրականացվում է տնտեսական էլիտաների կողմից, շուտափույթ դեգրադացման և Քաոսի հաստատման առավել ինտենսիվ գործոն է հանդիսանում:

Դա համաշխարհային պետական-բյուրոկրատական էլիտայից կարող է կազմակերպչական-կառավարչական մեծ ռեսուրսներ պահանջել: Ուստի, ազգային մակարդակներում կուժգնացվի պլանային-կազմակերպչական սկզբունքը՝ վերազգային մարմինների վերահսկողության տակ:

Համաշխարհային էլիտայի կողմից հրահրված առկա համաշխարհային ֆինանսական ճգնաժամը մի նպատակ ունի. հոգեբանական և կազմակերպչական հիմքեր ստեղծել ֆինանսների կառավարման համաշխարհային համակարգի ձևավորման համար: Շատ հնարավոր է միասնական արժույթների խոշոր գոտիների ստեղծման սցենարը՝ համաշխարհային արժույթի անցման հեռանկարով:

Միասնական համաշխարհային ֆինանսական համակարգից հետո արդեն երկու քայլ կմնա մինչև համատնտեսական և համաքաղաքական համակարգերը: Ուստի, ճգնաճամի տևողությունը և ձևերը կորոշվեն առաջադրված խնդիրներով:

Անհրաժեշտ է ձերբազատվել այն պարզամիտ զգացողությունից, թե ԱՄՆ-ն է համաշխարհային էլիտան: Այդ զգացողությունն առաջ է եկել այն առանցքային դերից, որը վերագրվել է ԱՄՆ պետական մեքենային նոր աշխարհակարգի հաստատման գործընթացում: Այս խնդրի կատարումից հետո ԱՄՆ ճակատագիրը կորոշվի նոր համակարգում գրաված նրա տեղով:

### 5. Եզրահանգումներ Հայաստանի համար

Նախ՝ կրկին պետք է ընդգծել. տնտեսական էլիտան պետք է սահմանափակված լինի պետական-բյուրոկրատականի շրջանակներով: Վերջինս իր հերթին պետք է սահմանափակված լինի կրոնափիլիսոփայական էլիտայի կողմից:

Անսահմանափակ հնարավորությունների տարածք դուրս գալը՝ բոլոր սահմանափակումներից այն կողմ, միշտ անհատական բնույթ է կրում: Պատմության մեջ բազմիցս կրկնվող՝ բոլորով ազատագրվելու միամիտ փորձերը որոշակի էլիտայի մակարդակով միշտ էլ ավարտվել են Քառսով և այլ՝ էլ ավելի դաժան շրջանակներով: Այժմ հենց այս իրավիճակում ենք Հայաստանում:

Հասարակության որոշակի խավերի շրջանում մեծանում է դիմակայությունը տոտալ էկոնոմիզացիայի գործընթացի նկատմամբ: Սա նշանակում է, որ հասարակությունում զսպանակը սեղմվում է, որը պատրաստ է ուղղվել դեպի պետական-բյուրոկրատական (զինվորական) էլիտայի կողմը:

Էլ ավելի նշանային է աճող հետաքրքրությունը կյանքի կրոնափիլիսոփայական իմաստի հանդեպ: Այդ պահանջարկն արդեն առաջարկ է առաջ բերել՝ համապատասխան գրականության ինտենսիվ հոսքի (բացառապես Ռուսաստանից և ԱՄՆ-ից) ձևով: Սա նշանակում է, որ մեծանում է հավանականությունն այն բանի, որ իրեն ճանաչելու ուղին ընտրած հերոսներից մեկը կհասնի վերջին, և ծայրահեղ դեպքում տեղական մակարդակով կույրերն իրենց տեսանողին կունենան: Այս փաստի հետ է կապվում Գարեգին Նժդեհի անձի նկատմամբ աճող հետաքրքրությունը, ով ռազմապետական էլիտայի կարկառուն ներկայացուցիչն է:

Մեր ազգային զարգացման առանձնահատկության բերված փաստերը դիտարկելով վերը նկարագրված համաշխարհային, գլոբալացման գործընթացների համատեքստում՝ անհրաժեշտ է անել հետևյալ եզրահանգումները երկու ոլորտների ուղղությամբ՝ ուժային (այսինքն՝ անվտանգություն) և տնտեսական:

Անվտանգության ծառայությունը պետական իշխանության ամենասրբազան մարմինն է՝ պետականության սկզբունքի կենտրոնացված արտահայտման իմաստով: Այն առաջին անգամ ստեղծվել է, ըստ երևույթին, Հին Եգիպտոսի ժամանակներում, քրմերի կաստայի կողմից, որպես կրոնափիլիսոփայական էլիտայի աշխատանքային գործիք: Այս մարմնի որակի մակարդակն առավել ընդգծված է արտացոլում պետական կառավարման համակարգի որակն ընդհանրապես:

Անվտանգության ազգային ծառայությունը պետք է համապատասխանեցնել համաշխարհային ստանդարտներին: Այն է՝ *դրա կառուցվածքը պետք է նպաստի վերոնշյալ ֆունդամենտալ (կրոնափիլիսոփայական, պետական-բյուրոկրատական, տնտեսական) էլիտաների հետ ուղիղ և հա-*

*կադարձ կապի ստեղծմանը և այդ ռեժիմով աշխատելուն:*

Համապատասխանաբար՝ անվտանգության համակարգում պետք է գործեն *երեք խոշոր ստորաբաժանումներ՝ հոգևոր-հոգեբանական անվտանգության, ռազմաստրատեգիական անվտանգության և տնտեսական անվտանգության:*

Անվտանգության համակարգում պետք է գործեն խոշոր գիտահետազոտական կենտրոններ՝ կապված հետևյալ խնդիրների հետ.

- հոգեբանություն, գիտակցություն, մտածողություն
- հնդեվրոպական և հայկական քաղաքակրթություններ
- ազգային պոտենցիալի կենսագործման կազմակերպական ձևերի մշակումներ բոլոր մակարդակներում և դրանց իրավական ապահովում, մասնավորապես՝ ցանցային մոդելներ
- տարածաշրջանային և համաշխարհային գործընթացների վերլուծություն քաղաքականության և տնտեսության բնագավառներում
- ռազմական դոկտրինների դինամիկայի և բանակային ոլորտի ու զին-ծառայողների հոգեկանի փոխկապվածության վերլուծություն
- էկոնոմիկայի և իրագործման մեթոդների օպտիմալ կառույցների որոնում՝ ազգային հոգեկերտվածքի հաշվառմամբ:

Ոչ հարուստ Հայաստանում գոյություն ունի տեղեկատվական-վերլուծական համարվող կառույցների մեծ քանակություն: Այնինչ, դրանց որակը վերոնշյալ խնդիրների առումով, մեղմ ասած, բարձր չէ: Այս ոլորտի որակի կառավարումն ու վերահսկումը պետք է դառնան անվտանգության ազգային ծառայության խնդիրներից մեկը:

Էկոնոմիկայի բնագավառում անհրաժեշտ է վերականգնել պետական կառավարման երկու առաջատար հենարանները՝ պլանավորումն ու պետական սեփականությունը ռազմավարական ոլորտներում: *Պլանավորման գործառույթն անհրաժեշտ է վերականգնել նոր մակարդակով՝ որպես զարգացման պլանավորում. առաջատար գործառույթ զարգացած երկրների կառավարման համակարգում:*

Պետական սեփականությունը զարգացած երկրներում տատանվում է 12-20%-ի սահմաններից մինչև 40% և ավելի, ինչպես ըստ ժամանակի, այնպես էլ ըստ տարբեր երկրների: Այստեղ կարևոր են ոչ այնքան տոկոսները, որքան պետական սեփականության ընդգրկած ոլորտները: Իսկ դրանք միշտ այնպիսին են, որ որոշում են զարգացման վեկտորը:

Նոր աշխարհակարգի ձևավորման փաստից և ազգային տնտեսությունում դրա ներդրումից ելնելով՝ այդ գործընթացը պետք է վարել քաղաքական առումով բավական կոռեկտ: *Դա նշանակում է, որ Հայաստանի պետական-*

բյուրոկրատական էլիտան պետք է պահպանի համաշխարհային գործընթացների նկատմամբ լոյալության օպտիմալ սահմանը: Այս իմաստով օպտիմալ չի թվում շարունակվող շեշտադրումը մակրոէկոնոմիկայի վրա (հարկային, դրամավարկային խնդիրներ):

Համաշխարհային ճգնաժամից դուրս գալու բանաձևն ունի երկու ունիվերսալ բաղադրիչ.

- ֆինանսական համակարգի բարեփոխում
- տնտեսության կառուցվածքային վերակառուցում:

Առաջին բաղադրիչը լուծվում է ամենաբարձր գլոբալ մակարդակում: Կառավարման ազգային համակարգից պահանջվում է հետևել և կանխատեսել այդ գործընթացները: Ցավոք, սա ենթադրում է շատ ավելի բարձր մակարդակ անկախության տարիներին ձևավորված նոր հեթանոսների համեմատությամբ, ովքեր մտածում են, թե «միագումար պահանջարկ», «միագումար առաջարկ», «արժեթղթերի շուկա» բառերի հաճախակի կրկնությունից առատություն կտիրի:

Երկրորդ բաղադրիչը նշանակում է կառուցվածքային քաղաքականության (արդյունաբերական և նորարարական քաղաքականության) ռեալ անցում իրականացնելու անհրաժեշտություն: Խոշոր բիզնեսի լոյալությունը պետք է գնահատվի՝ ելնելով կառավարության կառուցվածքային նախագծերում նրա ռեալ մասնակցության աստիճանից:

Առկա միտումների շարունակման ամենահոռետեսական տարբերակով Քաոսը կաճի, քանի որ էկոնոմիկացիան դեպի այն տանող ամենաուղիղ և ամենաարագ ճանապարհն է: Այն կխորանա մինչև գործընթացների կառավարելիության լիակատար վերացումը: Ընդ որում՝ հարկ է հաշվի առնել, որ Քաոսը՝ որպես այդպիսին, ազգային չէ, այն գլոբալ, համաշխարհային երևույթ է և ժամանակի որոշակի ընթացքում կընդգրկի բոլոր տարածաշրջանները. այնպես որ՝ փախուստի տեղ չկա:

Ցավոք, հոգուտ վերջին ապոկալիպսիսային սցենարի է խոսում այն փաստը, որ տիեզերածին բնույթի գրական բոլոր հուշարձանները, որ նկարագրում են տիեզերքի ստեղծումը, սկսվում են Քաոսից Կարգուկանոնի առաջացման նկարագրությամբ: Սրանով կարծես հաստատվում է Քաոսի առաջնայնությունը:

Անձամբ կարծում եմ, որ ընտրություն միշտ կա, և այդ ընտրությունը յուրաքանչյուրն անում է իր համար՝ ստեղծելով այն կրիտիկական զանգվածը, որը որոշում է մի կողմից՝ ընդհանուր, մյուս կողմից՝ անձամբ իր ապագան:

## **ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ**

### ***Մամվել Մարտիրոսյան***

Իսրայելի ռազմական «Ձուլածո արճիճ» գործողությունը Գազայի հատվածում ուղեկցվում էր համապատասխան պետական ծառայությունների տեղեկատվական աջակցությամբ, որոնք նման աշխատանք պետք է կատարեին իրենց ծառայության բնույթից ելնելով: Միևնույն ժամանակ, ակտիվորեն գործադրվեցին պետական կառույցների կողմից տեղեկատվության տարածման ոչ պաշտոնական մեթոդները, ինչպես նաև տեղեկատվական պատերազմում ընդգրկվեցին կամավորական սոցիալական ցանցերը, որոնք ի ցույց դրեցին իրենց արդյունավետությունը:

### ***Նախադրյալները***

Իսրայելի քաղաքացիների գիտակցության մեջ Երկրորդ լիբանանյան պատերազմը, որը տեղի է ունեցել 2006թ. ամռանը, մնացել է որպես պարտություն տեղեկատվական ճակատում: Պարտության զգացումը դարձավ համախմբման գործոն: Այս առնչությամբ մարտական գործողությունների հենց սկզբից հայրենասիրական տրամադրություններ ունեցող հրեաները ողջ աշխարհում սկսեցին միավորվել՝ աջակցելու համար Իսրայելին տեղեկատվական պատերազմ մղելու գործում: Պետական կառույցները որոշակի աստիճանով հասարակական կամավորական ջանքերն ուղղորդող գործոն դարձան:

### ***Բլոգերի ոլորտը և սոցիալական ցանցերը, մոնիթորինգ և ակտիվ գործողություններ***

Բոլոր տեսակի սոցիալական ցանցերը սկզբից ևեթ Իսրայելի կողմից տեղեկատվական պատերազմ վարելու գործիք դարձան: Հիմնական աշխատանքը տարվում էր հակառակորդի քարոզչությունը ճնշելու, ուշադրությունն Իսրայելի դիրքորոշման վրա կենտրոնացնելու և այլ ուղղություններով: Միևնույն ժամանակ, ցանցային միջոցներն օգտագործվում էին նաև երկրի ներսում հոգեբանական գործողություններ վարելու համար: Այսպես, գործողության մեջ դրվեց «Զինվորին ժպիտ ուղարկիր» ակցիան. բոլոր քաղաքացիների համար հնարավոր

րություն ստեղծվեց ՑԱԽԱԼ-ի՝ առաջավոր գծում մարտնչող զինվորներին ուղարկել իրենց ողջույնները<sup>1</sup>:

Միննույն ժամանակ Բարայելի համար տեղեկատվական պատերազմի վարման հիմնական ուղղությունը դարձավ, բնականաբար, արտաքին վեկտորը: Արաբա-իսրայելական հակամարտության թեժացման առաջին իսկ պահից ինտերնետում կտրուկ ակտիվացան Բարայելի կողմնակից բլոգերները: ՑԱԽԱԼ-ի «Չուլածո արձիճ» գործողությունն սկսվեց հոկտեմբերի 27-ին: Հոկտեմբերի 29-ին արդեն իսրայելամետ բլոգերներն ամենաշատ այցելուներ ունեցող ռուսալեզու *Livejournal.com* բլոգերի հարթակում բացեցին «gaza2009»<sup>2</sup> ընկերակցությունը (ընկերակցության նախաձեռնողներից ու մոդերատորներից են Մարկ Բիրիչկովը, ով 1999-2006թթ. Բարայելի պաշտպանության նախարարների խորհրդականն էր, և Դավիդ Էյդելմանը՝ «Քաղիմա» քաղաքական շարժման մամլո քարտուղարը):

Սույն ընկերակցության կազմակերպիչները դրա ստեղծման իմաստը բացատրում են հետևյալ կերպ. «Առաջին հերթին աջակցելու և ցանցում համախմբելու համար բոլոր նրանց, ովքեր Բարայելի կողքին են պատերազմական այս ժամանակաշրջանում և շահագրգռված են բացատրական աշխատանք տանել ցանցում ռուսալեզու հատվածի համար՝ ոչ այնքան իրենց՝ իսրայելցիների համար, որքան Բարայելից դուրս: Ընկերակցության գլխավոր ինդիքն է. նախաձեռնել և համակարգել բացատրական աշխատանքը Գազայի հատվածում ահաբեկիչների դեմ պատերազմում Բարայելի դիրքորոշման վերաբերյալ»:

Ընկերակցությունը մի քանի օրվա ընթացքում ավելի քան հազար մշտական ընթերցող բլոգերներ հավաքեց, իսկ ընդհանրապես օրական ընկերակցության այցելուների թիվը հասավ 15-30 հազար մարդու: Այստեղ միայն պարզապես հօգուտ Բարայելի քարոզչական աշխատանք չէ, որ տարվում էր: Ընկերակցության միջոցով տեղեկություն էր հաղորդվում հօգուտ կամ ընդդեմ Բարայելի գործողությունների մասին, որոնք պետք է անցկացվեին մոտակա ժամանակներում, աշխարհի տարբեր անկյուններում, որոնց վերաբերյալ այնուհետև հավաքվում էին փաստական նյութեր և տեսագրություններ: Այլ ֆորումներում կամ նմանատիպ հարթակներում հակաիսրայելական քննարկումների հայտնվելու պարագայում ընկերակցությունը տեղեկացնում և գործի էր դնում նրանց, ովքեր կարող էին ինչպես հարկն է վիճել և ներկայացնել Բարայելի դիրքորոշումը: Բացի այդ, այս և նման այլ ընկերակցությունների անդամները գտնում էին արաբամետ ուժերի կողմից տարածվող մեղիակեղծիքները<sup>3</sup>, վերլուծական աշխատանք տանում, տեղեկագրեր պատրաստում բանավեճեր անցկացնելու համար, ինչը հեշտացնում էր նրանց աշխա-

<sup>1</sup> <http://www.honestreporting.com/a/smilecampaign.html>

<sup>2</sup> <http://community.livejournal.com/gaza2009>

<sup>3</sup> Օրինակ, <http://zhivaia-legend.livejournal.com/330534.html>, <http://lugovsa.net/?p=4629#more-4629>

տանքը, ովքեր պրոֆեսիոնալ գիտելիքներ չունենին հակամարտության պատմության, իրավական և այլ հարցերի վերաբերյալ: Մամուլում ընկերակցությունը քանիցս անվանվել է «ռուսալեզու բլոգերների շտաբ», որը բավական ակտիվ և հաջող էր գործում տեղեկատվական պատերազմում:

«Gaza2009» ընկերակցությունը մտցվեց նաև սոցիալական ցանցեր. *Facebook*, *Контакт.ру*, *Одноклассники.ру*, որոնցում նույնպես հարյուրավոր ընթերցողներ ունեցավ: Հունվարի 14-ին արդեն տեղի ունեցավ «gaza2009» ընկերակցության բլոգերների առաջին հանդիպումը Իսրայելի պետության կառավարության ներկայացուցչի հետ: Ինչպես հաղորդում էր ընկերակցությունը, «հարցազրույց էր տալիս տրանսպարտի ներկայիս նախարարը, ով ժամանակին զբաղեցրել էր պաշտպանության նախարարի և Գլխավոր շտաբի պետի պաշտոնները՝ Իսրայելի Պաշտպանության բանակի պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ Շաուլ Մոֆազը: Բլոգերները ցանկանում էին պարզել, թե ինչ պաշտոնական դիրքորոշում ունի Իսրայելի կառավարությունը, որպեսզի այնուհետև, ընկերակցության և ռուսալեզու ակտիվ բլոգերների միջոցով այդ տեղեկատվությունը հասցնեն ռուսների ընթերցողներին: Մինչև ժամանակ, նրանց խնդիրն էր պարզել որոշ սկզբունքայնորեն կարևոր հարցեր «Ձուլածո արձիճ» գործողության և ընդհանրապես արտաքին քաղաքականության մասին»<sup>4</sup>: Այսպիսով, պաշտոնական շրջանակները միանշանակ աջակցում էին բլոգերների մասնավոր նախաձեռնությունը և բացահայտորեն համագործակցում ընկերակցության հետ:

Բացի այս ընկերակցությունից, որն աչքի է ընկնում նպատակային աշխատանքով, ինչպես նաև դրանում հայտնի լրագրողների, վերլուծաբանների, քաղաքական գործիչների ներգրավվածությամբ, գործի են դրվել նաև սոցիալական ցանցերը, որոնք արդեն կոչված էին աշխատելու ոչ թե կոնկրետ խնդիրների, այլ անհրաժեշտ տեղեկատվության զանգվածային տարածման ուղղությամբ: Այսպես, օրինակ, *Facebook* սոցիալական ցանցում «*I Wonder How Quickly I Can Find 1,000,000 People Who Support Israel...*»<sup>5</sup> (Հետաքրքիր է՝ որքան արագ ես կգտնեմ Իսրայելին աջակցող միլիոն մարդ) ընկերակցությունը հունվարի 15-ին արդեն ուներ մոտ 150 հազար մասնակից: Մեկ այլ՝ «*I Support the Israel Defense Forces In Preventing Terror Attacks From Gaza*»<sup>6</sup> (Ես աջակցում եմ Իսրայելի պաշտպանության ուժերին Գազայից ահաբեկչական գրոհների դեմ պաշտպանությունում) խումբ 80 հազար մասնակից ունեցավ: Նույն ձևով ստեղծվեցին նաև տասնյակ ընկերակցություններ՝ ի պաշտպանություն Գազայի հատվածում Իսրայելի գործողությունների, որոնց ընդհանուր

<sup>4</sup> <http://community.livejournal.com/gaza2009/249022.html>

<sup>5</sup> <http://ru-ru.facebook.com/group.php?gid=9864908381>

<sup>6</sup> <http://ru-ru.facebook.com/group.php?gid=69810300128>

լսարանը կազմեցին հարյուր հազարավոր մարդիկ: Նման ընկերակցությունները թույլ են տալիս անհրաժեշտ հողվածները, լուսանկարներն ու տեսանյութերն արագ առաքել հսկայաթիվ մարդկանց աշխարհով մեկ՝ առաջ բերելով ռեզոնանսային էֆեկտ:

Դատելով ըստ ամենայնի՝ կամավորների գործողությունների արդյունավետությունը սոցիալական ցանցերում հանգեցրեց այն բանին, որ Իսրայելի ղեկավարությունը որոշեց լեզալացնել նման գործունեությունը: Գազայի հովտում կրակի դադարեցման պահին արդեն հետևել էր Իսրայելի աբսորբցիայի նախարար Էլի Աֆլալոյի հայտարարությունն այն մասին, որ Իսրայելի նորագույն զենքը տեղեկատվական ճակատում (*«hasbara»*) «Բլոգերների բանակն է»: Աֆլալոյի խոսքերով՝ արտաքին գործերի նախարարության հասարակության հետ կապերի վարչության հետ համագործակցելով՝ աբսորբցիայի նախարարությունը կամավորականների որոնման միջոցներ է ձեռնարկել, ովքեր կօգնեն Իսրայելին ինտերնետի միջոցով տարբեր լեզուներով կապեր հաստատել տարբեր ընկերակցությունների հետ. «Վերջին տարիներին աբսորբցիայի նախարարությունը շատ միջոցներ է ներդրել կիրեռտարածքում աշխատանքների զարգացման ուղղությամբ՝ ըմբռնելով, որ ինտերնետը ապագայի բանալին է: Ուստի, աբսորբցիայի նախարարությունը որոշել է պատասխանել մարտահրավերին և փորձել ստեղծել տարբեր լեզուների տեր մեկնաբանների ձևաչափ, ովքեր կօգնեն աջակցել Իսրայելին վիրտուալ աշխարհում հանրային կարծիքի ձևավորմանը, և պատասխան տալ Իսրայելի բոլոր թշնամիներին, ովքեր ատելության սերմեր են տարածում»<sup>7</sup>: Օտար լեզուների տիրապետող բոլոր կամավորականներին մամուլի միջոցով առաջարկվեց նաև դիմել նախարարություն՝ «զինվորագրվելու» համար:

Իր հերթին, Իսրայելի ԱԳՆ-ն նույնպես սկզբից կեթ զնաց առավելագույնս դյուրինացված հավաքագրման ճանապարհով: Ցանցում բացվեց <http://rusforums.pr2.co.il/> կայքը, որտեղ զետեղվեց արտաքին քաղաքական գերատեսչության ուղերձը. «Ձեր ձայնը պետք է լսեն ողջ աշխարհում: Իսրայելի հարավում զինված հակամարտության սրացման հետ կապված՝ արտաքին գործերի նախարարությունը՝ նախարար Ցիպի Լիվնիի գլխավորությամբ, ակտիվ բացատրական աշխատանք է ծավալում՝ աշխարհին պարզաբանելով մեր երկրի դիրքորոշումը:

Այդ աշխատանքին միացել են նաև քաղաքական գործիչները, զինվորականները և բարձրաստիճան պետական այրերը: Մենք կոչ ենք անում Իսրայելի բոլոր քաղաքացիներին մասնակցել բացատրական գործունեությանը: Ձեր օգնությամբ այլ երկրների բնակիչները, ովքեր խոսում են ռուսերեն, կարող են հասկանալ, թե ինչ վիճակում է հայտնվել մեր երկիրը: Աշխարհը պետք է հաս-

<sup>7</sup> [http://www.mignews.com/news/society/world/180109\\_172043\\_59115.html](http://www.mignews.com/news/society/world/180109_172043_59115.html)



կանա, որ Իսրայելն իրավունք ունի պաշտպանել իր քաղաքացիներին: Թող ձեր ձայնը լսելի լինի ինտերնետի միջազգային ֆորումներում»: Կայքում ստեղծվեց յուրաքանչյուր օգտվողի անհրաժեշտ հղումն ինքնուրույն ուղարկելու կամ գետեղելու տեխնիկական հնարավորություն: Համապատասխանաբար՝ լուծվում էր կամավորականների պարզունակ համակարգման աշխատանքը տեղեկատվական ճակատում:

Հարկ է նշել, որ բլոգերի ոլորտը որպես արդյունավետ միջոց օգտագործում էին նաև պաշտոնական անձինք: Այսպես, մասնավորապես օգտագործվում էր *Twitter* միկրոբլոգինգի կայքի ռեսուրսը (այսօրվա դրությամբ այսպես կոչված միկրոբլոգինգը ամենատարածված միտումներից մեկն է): ՅԱԽԱԼ-ի<sup>8</sup> խոսնակը և Իսրայելի հյուպատոսությունը Նյու Յորքում<sup>9</sup> ակտիվորեն օգտագործում են միկրոբլոգինգը նյութերի տարածման համար: Բացի այդ, ՅԱԽԱԼ-ի խոսնակն օգտագործում էր նաև իր անձնական բլոգը<sup>10</sup>:

Ռազմական գործողության ավարտից հետո արդեն «Լիքուդի» ղեկավար Բենիամին Նեթանյահուն, ով քարոզչական գործողությունների վարման վարպետ է համարվում, առանձին հանդիպում է ունեցել իսրայելցի ակտիվ բլոգերների հետ և տեղեկատվական պատերազմ վարելու վերաբերյալ խորհուրդներ տվել՝ ներկայացնելով հիմնական թեզիսները: «Հարկ է ներգործել ոչ միայն ընդդիմախոսի բանականության ու տրամաբանության, այլ նաև նրա հույզերի, ասոցիացիաների, երևակայության վրա», - նշել է Նեթանյահուն: Ռուս ընդդիմախոս-ընթերցողների վերաբերյալ Նեթանյահուն խորհուրդ է տվել օգտագործել նույն փաստարկները, որոնցով Ռուսաստանի նախագահները զանգվածներին համոզում էին Չեչնիայում իրենց պատերազմների իրավացիության մեջ, իսկ ամերիկացիների վերաբերյալ նշել է հակաահաբեկչական պատերազմների օրինակներն Աֆղանստանում և Իրաքում: «Երկու դեպքում էլ հարկ է պատասխանել նրանց, ովքեր մեղադրում են Իսրայելին անհամասնության և քաղաքացիական բնակչության մեջ զոհերի չափից ավելի մեծ թվի համար, որ մեր գործողությունները շատ ավելի մեղմ են նրանց համեմատ, ինչ նախաձեռնում էին Ռուսաստանն ու ԱՄՆ-ը իրենց թշնամիների դեմ», - հայտարարել է Նեթանյահուն: «Նա, ով իրավացի է, չի պաշտպանվում, այլ հարձակվում է: Մի արդարացեք, այլ վստահ վեճ վարեք՝ համոզված լինելով ձեր փաստարկների ու բերած փաստերի ճշմարտության մեջ, - մաղթել է Նեթանյահուն հավաքվածներին: - Անհրաժեշտ է լայնորեն բացատրել, որ մուսուլմանական ահաբեկչությունն իսրայելյան կամ մերձավորարևելյան հիմնախնդիր չէ, այլ համաշխարհային մասշտաբի հիմնախնդիր: Անհրաժեշտ

<sup>8</sup> <http://twitter.com/IDFspokesperson>

<sup>9</sup> <http://twitter.com/IsraelConsulate>

<sup>10</sup> <http://idfspokesperson.com/>

է ցանկացած գնով կանխարգելել Իրանի կողմից միջուկային տեխնոլոգիային տիրապետելը: Ատոմային զենքն Իրանի ձեռքին սպառնալիք է ողջ քաղաքակիրթ աշխարհին: Իսկ «Համասը» Թեհրանի փառանգն է»<sup>11</sup>:

Բացի բլոգերների ակտիվությունից, իսրայելյան կողմը օգտագործել է նաև ավելի տեղային գործողության ցանցային շատ խմբեր, որոնք իրենց հերթին օգնել են կամավորների ավելի մեծ զանգվածի աշխատանքներին: Այսպես, իսրայելյան առանձին ցանցային կառույցներ ակտիվորեն զբաղվում են թշնամական քարոզչության մոնիթորինգով՝ այն տարածելով նրանց համար, ովքեր կարող են այդ նյութերն օգտագործել տեղեկատվական պատերազմում: Օրինակ, առավել ակտիվ ռեսուրս է անգլիալեզու ՋԼՄ-ն և ընդհանրապես ցանցը հսկող «HonestReporting»-ը<sup>12</sup>: «NGO Monitor»-ը հետևում է համաշխարհային ոչ կառավարական կազմակերպությունների ակտիվությունը արաբա-իսրայելյան դիմակայության առումով<sup>13</sup>:

Օգտագործելով ինտերնետի արդի հնարավորությունները, որոնք թույլ են տալիս խիստ օպերատիվ ձևով ցանցում տեղակայել նոր կայքեր, իսրայելյան ակտիվիստները տասնյակ կայքեր են բացել, որտեղ նպատակաուղղված ձևով գետնեղվել է «Համասին» վարկաբեկող և Իսրայելի գործունեությունն արդարացնող ողջ տեղեկատվությունը: Օրինակ, «XAMACA-нет» կայքը իսրայելամետ քարոզչի ձեռքն էր հանձնում հսկայածավալ տեքստային և մուլտիմեդիա-նյութեր, որոնցից նա կարող էր օգտվել<sup>14</sup>:

### **Հաքերական գրոհներ**

Այսօրվա դրությամբ յուրաքանչյուր հակամարտություն իր հետևից անհապաղ հաքերական գրոհների ակտիվություն է բերում: Այս պարագայում նույնպես անմիջապես սկսվեցին ուժեղ գրոհներ ինչպես իսրայելամետ, այնպես էլ հակաիսրայելական ուղղության կայքերի վրա, որոնք այս կամ այն կերպ կարող էին օգտագործվել քարոզչության համար: Իսրայելի դեմ գրոհներին մասնակցում էին ոչ միայն արաբ, այլև, օրինակ, թուրք հաքերները, ինչի մասին վկայում է հակասեմիթական հայտարարությունը, որը հայտնվեց իսրայելական կայքերից մեկում՝ թուրք հաքերների կողմից դրա կոտրումից հետո<sup>15</sup>: Ընդհանուր առմամբ, Իսրայելի դեմ գրոհները վարվում էին Մարոկկոյի, Լիբանանի, Թուրքիայի ու Իրանի իսլամական հաքերական խմբերի կողմից:

«Ձուլածո արձիճ» գործողության առաջին իսկ օրերից գրոհների ենթարկվեցին մոտ 10 հազար իսրայելական կայքէջեր՝ ներառյալ խոշոր տեղեկատ-

<sup>11</sup> <http://www.sedmoycanal.com/news.php?id=258133>

<sup>12</sup> <http://www.honestreporting.com/>

<sup>13</sup> <http://www.ngo-monitor.org>

<sup>14</sup> <http://hamasa.net/>

<sup>15</sup> <http://aristocrate.livejournal.com/327637.html>

վական գործակալությունները: Իսրայելյան հաքերական խմբավորումների գրոհը հաջորդեց գրեթե զուգահեռաբար<sup>16</sup>: Նման գործողություններն էական գործոն են հանդիսանում: Տեղեկատվական ճակատի ցանկացած գործողություն կարող է իմաստագուրկ դառնալ դաժան հաքերական գրոհի պայմաններում: Համապատասխանաբար, Իսրայելի պատրաստվածությունը նման գրոհներին և հակազրոհ վարելու կարողությունն այս ուղղությամբ կարևոր գործոններ դարձան: Հաքերական գրոհներն, ընդհանուր առմամբ, կրում էին ստանդարտ բնույթ: Տարբերությունն այն էր, որ ընդգրկված էին մեծ թվով խմբավորումներ տարբեր երկրներից: Բացի այդ, իսրայելյան կողմն ակտիվորեն օգտվում էր կամավորականների ծառայություններից, որոնք հաքերներ չէին (*տե՛ս՝ «Նոր տեխնոլոգիաների օգտագործումը», էջ 52*):

### ***Մուլտիմեդիա նյութերի օգտագործումը***

Ինչպես ցույց է տալիս վերջին հակամարտությունների փորձը, ավելի մեծ նշանակություն է տրվում մուլտիմեդիա-նյութերին՝ լուսանկարներին, տեսա-և ձայնագրություններին: Դրանց ազդեցությունը հանրային կարծիքի վրա գերազանցում է տպագիր նյութի կամ ինտերնետ-բանավեճի հնարավոր ազդեցությանը: Բացի այդ, ինտերնետի արդի հնարավորությունները թույլ են տալիս բազմացնել և տարածել այդ նյութերը հսկայական քանակությամբ, ինչն այդ տեխնոլոգիաները երբեմն ավելի ազդեցիկ է դարձնում, քան ավանդական տպագիր հրատարակությունները և անգամ հեռուստատեսությունը:

Բլոգերի և ֆորումների միջոցով տարածվել է լուսանկարների և տեսանյութերի հսկայական քանակություն, որոնք պետք է կատարեին մի քանի գործողություն. ցույց տալ, որ Իսրայելը հարկադրված է պաշտպանվել, ցույց տալ, որ «Համասը» «թաքնվում» է պաղեստինցի երեխաների թիկունքում, ցույց տալ իսլամական արմատականության վտանգավորությունը, գովազդել իսրայելական բանակի հզորությունն ու մարդկայնությունը և այլն: Օրինակ, պատրաստվում և տարածվում էին քարոզչական տեսահոլովակներ<sup>17</sup>: Այսպիսով, իսրայելական կողմը ջանում էր ազդեցություն գործել տարբեր սոցիալական խմբերի վրա ողջ աշխարհում:

Բացի կամավորական սոցիալական ջանքերի օգտագործումից, մուլտիմեդիա-նյութերի տարածման նոր մեթոդներն օգտագործվում էին նաև պաշտոնական կառույցների կողմից: Այսպես, ՅԱԽԱԼ-ը բացեց իր տեսաալիքը՝ *YouTube.com* - <http://www.youtube.com/idfnadesk>: Ալիքը գրանցվեց դեկտեմբերի 29-ին: 20 օրվա ընթացքում այն դիտել են 2 միլիոն անգամ, ավելի քան 20

<sup>16</sup> <http://www.scmagazineus.com/Web-defacements-escalate-as-Israel-moves-farther-into-Gaza/article/123542/>

<sup>17</sup> "Почему Израиль атакует Газу?" <http://ru.youtube.com/watch?v=yi6Pjsre-fQ>

հազար օգտվողներ դարձան մշտական բաժանորդներ: ՅԱԽԱԼ-ի նյութերը Գազայի հատվածի կետային ուժահարումների մասին նյութերը հայտնվեցին ամենատարածված տեսանյութերի Թոփ-10-ում, *YouTube.com* կայքում: Նման աննախադեպ տարածվածությունը ռեկորդային դարձավ սերվիսի համար: Այսպես, տեսահոլովակը, որում ցուցադրվում էր, թե ինչպես են իսրայելական ՌՕՈւ-ն հարվածում «Համասի» գրոհայինների՝ հրթիռներով բեռնված ավտոմեքենաներին, 20 օրվա մեջ դիտվել է ավելի քան 650 հազար անգամ: ՅԱԽԱԼ-ի մամուլի ծառայությունն օգտվում էր նաև *YouTube.com* նոր սերվիսից, որը հնարավորություն է տալիս տեսանյութերն ուղեկցել տողատակերով, ինչն էլ թույլ տվեց, որ ալիքը դառնա բազմալեզու:

Պաշտպանության նախարարության կայքում զետեղվեցին նաև Կերեմ-Շալոմի հսկիչ անցակետի (որով անցնում են հումանիտար օգնության բեռնատարները) վեբ-տեսախցիկներ, որպեսզի ինտերնետից օգտվողները կարողանան անձամբ համոզվել, որ Իսրայելը չի մարտնչում Գազայի խաղաղ բնակչության հետ և բաց է թողնում բեռները<sup>18</sup>:

Իսրայելյան կողմը որպես քարոզչանյութ ակտիվորեն օգտագործում էր նաև պաղեստինյան հեռուստահաղորդումների, արաբական հրատարակությունների նյութերի թարգմանությունները, որոնք պետք է ապացուցեին հակառակ կողմի արմատականությունը, անհանդուրժողականությունը և ագրեսիվությունը: Մասնավորապես, նման աշխատանքներով է զբաղվում «*Palestinian Media Watch*»<sup>19</sup> կայքը, որն իսլամական ՋԼՄ մշտական մոնիթորինգ է անցկացնում և տարածում է հատկապես անախորժ նյութեր քարոզչական նպատակներով:

Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին լսարանին ուղղված այլ լուրջ քարոզչառեսուրս է մուլտիմեդիական «Միացիր իմ կյանքին» (*Join my life*)<sup>20</sup> կայքը, որում իսրայելցի երեխաները պատմում են իրենց ապրումների մասին «Համասի» ուժակոծությունների ժամանակ: Այդ կայքը դարձավ պաղեստինյան կողմի օգտագործած՝ պատերազմի զոհ դարձած երեխաներին նվիրված հսկայաքանակ նյութերի պատասխանը:

### **Նոր տեխնոլոգիաների օգտագործումը**

Վերջին տեխնոլոգիական նորությունների օգտագործումը տեղեկատվական պատերազմներում հակառակորդի նկատմամբ որոշակի առավելություններ է տալիս որակյալ ու քանակապես ավելի շատ կամավորների հավաքագրման և անհրաժեշտ մարտունակ կլաստերների ձևավորման առումով: Հաշվի առնե-

<sup>18</sup> [http://www.mod.gov.il/pages/general/Maavar\\_Kerem\\_Shalom.asp](http://www.mod.gov.il/pages/general/Maavar_Kerem_Shalom.asp)

<sup>19</sup> <http://www.pmw.org.il/>

<sup>20</sup> <http://www.joinmylife.co.il/en/>

լով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացածությունն Իսրայելում՝ նման խնդիրներն առաջադրվում ու կատարվում էին բավական ակտիվ ձևով, անգամ եթե դատելու լինենք բաց աղբյուրներով:

Դեռևս Երկրորդ լիբանանյան պատերազմի շրջանում ինտերնետում ստեղծվել էր հրեական և իսրայելամետ (նախաձեռնողն էր Համաշխարհային հրեական ուսանողական կազմակերպությունը - *World Union of Jewish Students*) *Giyus.org* կազմակերպությունը (հապավում է, որ բացվում է հետևյալ կերպ. Իսրայելի պետությանը՝ մասնակցություն և աջակցություն): Կազմակերպությունը ստեղծեց «Մեգաֆոն» հաստուկ ծրագրային ապահովումը: Բոլորին, ովքեր մտադիր են աջակցություն ցուցաբերել, առաջարկվում է տեղակայել այդ ծրագիրը: Այդ պահից օգտվողը սկսում է տեղեկություն ստանալ հրեաների համար կարևոր բոլոր քվեարկությունների, ֆորումների քննարկումների և այլ իրադարձությունների մասին ինտերնետում, որոնք պահանջում են հանրային և համաձայնեցված մասնակցություն: Միաժամանակ, ծրագիրը թույլ է տալիս ցանցի մասնակիցներին, որ իրենք էլ տեղեկություններ ուղարկեն: Այսպիսով, լուծվում է տեղեկատվական ճակատի մարտիկների բաշխված ցանցի կազմավորման գործընթացի ավտոմատացման հարցը: Ծրագիրը նաև թույլ է տալիս սկսել և անցկացնել մեդիա-կամպանիաներ, ընդլայնված բնույթի քարոզչական աշխատանք վարել՝ այլ ցանցերի ներգրավմամբ և այլն:

Չնայած *Giyus.org* նախագծի ստեղծման և օժանդակման հարցում պետական կառույցների անմիջական կապ կարծես չի նկատվում, սակայն ցանցում տեղեկություններ են հայտնվել այն մասին, թե իսրայելամետ մի շարք կազմակերպությունների հետևյալ բովանդակության նամակ է ուղարկվել Իսրայելի ԱԳՆ անունից. «Միբեյի բարեկամներ, մեզնից շատերն են ըմբռնում ինտերնետի՝ որպես նոր մարտադաշտի, կարևորությունն Իսրայելի իմիջի ստեղծման գործում: Եկել է ժամանակը բարեկամներ, մեզնից շատերը և համակարգել դրանք օնլայն ռեժիմում Իսրայելի անունից: Ծրագրային ապահովման իսրայելական կամպանիան ազատ տարածվող, անվտանգ և օգտակար ուտիլիտա է մշակել մեզ համար՝ «*Internet Megaphone*»: Հետևեք, խնդրեմ, <http://www.giyus.org/>-ին, օգտվեք «Մեգաֆոնից», և դուք կստանաք ամենօրյա նորություններ թարմ հղումներով կարևոր ինտերնետ-հարցումների մասին, առարկություններ պահանջող թեմատիկայով հոդվածներ և այլն: Մեզ անհրաժեշտ են «Մեգաֆոնի» 100.000 օգտվողներ, որպեսզի ստանանք անհրաժեշտ արդյունքը: Ուստի, խնդրում ենք, ուղարկեք այս նամակը Իսրայելին աջակցող բոլոր օգտվողներին: Դա արեք հենց հիմա: Իսրայելի համար: Ամիր Գիսին<sup>21</sup>:

Ինտերնետում գործում են հաքերների խոշոր ջոկատներ, ինչպես նաև

<sup>21</sup> <http://mila-pavlova.livejournal.com/293780.html>

անձինք, որոնք ի վիճակի են Բսրայելի թշնամիների դեմ ցանցային կառույցներում աշխատել այս կամ այն մեթոդով: Այսպես, արդեն 8 տարի գործում է այսպես կոչվող «Ինտերնետ պաշտպանության հրեական ուժեր» (*The Jewish Internet Defense Force (JIDF)* - <http://www.thejidf.org/>) խումբը, որը համակարգող գործունեություն է իրականացնում հակաիսրայելական ցանցային խմբերի դեմ պայքարում: Ցանցում առկա են նաև մի քանի նման բաց կառույցներ:

Մեկ այլ խումբ՝ «Օգնիր Բսրայելին հաղթել»<sup>22</sup>, կազմակերպել է բաշխված մի ցանց, որը պետք է գրոհի հակաիսրայելական կայքերն ինտերնետում: Գործողությունների բովանդակությունը հետևյալն է. Բսրայելի ցանկացած կողմնակից կամավոր քաշում և իր համակարգչում տեղադրում է «Հայրենասեր» անունը կրող ծրագիրը, որն, ըստ էության, «վիրուս» է, որը սկսում է գրոհել այն կայքերը, որոնք որպես թիրախ ընտրում է խումբը: Այս խմբին միացել է մոտ 10 հազ. մարդ, ինչը բավական լուրջ ցանց է *DDoS (Distributed Denial of Service)* տիպի գրոհներ անցկացնելու համար, որոնք կարող են երկար ժամանակով շարքից դուրս բերել անգամ խոշոր սերվերները: Գրոհների հիմնական նպատակներն այն սերվերներն էին, որոնցում զետեղված էին «Համասի» հետ կապված կայքերը:

### **Հետևություններ**

Լուրջ հակառակորդի դեմ տեղեկատվական պատերազմ վարելու Բսրայելի փորձը (հաշվի առնելով հակասեմիթականությունը, մասնակցությունը հակաիսրայելական քարոզչությանը իսլամական երկրներում և այլն) հնարավորություն է տալիս եզրակացություններ անել նաև հայկական կողմի համար: Փաստորեն, Բսրայելի ղեկավարությունը, հենվելով իր քաղաքացիների, ինչպես նաև սփյուռքի հրեաների հայրենասիրության վրա, կարողացավ ստեղծել կամավորների ցանց, որոնք գործում էին տեղեկատվական ճակատում: Արդիականացված տեխնիկական միջոցների, ինչպես նաև կամավորականների ուժերի ճիշտ համակարգումն ու ուղղորդումը օգնեցին ստեղծել լուրջ կառույց, որը մեծապես աջակցեց Բսրայելի գործողություններին: Բսրայելական պաշտոնական և ոչ պաշտոնական կառույցների գործունեության փորձի ուսումնասիրումը տեղեկատվական առումով թույլ կտա էականորեն կրճատել և՛ մարդկային, և՛ նյութական ծախսերը՝ Հայաստանի համապատասխան կառույցների համանման գործունեության համար:

<sup>22</sup> <http://help-israel-win.tk/>

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

### *Ռուբեն Մելքոնյան*

Հայտնի է, որ Հայությանը ներսից պառակտող ամենավտանգավոր երևույթներից են փոխադարձ անհանդուրժողականությունը, միմյանց հանդեպ խորթության արգահատելի «սովորույթը», որը ժամանակ առ ժամանակ ավելի ցայտուն է զգացվում: Այս երևույթի անքակտելի մասն են կազմում Հայության բաժանումներն ըստ ծագման, բնակության վայրի, դավանանքային, կրոնական, կուսակցական պատկանելության: Աշխարհասփյուռ Հայության տարբեր հատվածներում այս ամենն ունի ինչպես ընդհանրություններ, այնպես էլ յուրահատկություններ՝ ըստ միջավայրի և հանգամանքների: Հարկ է նշել, որ այս երևույթը տարբեր դրսևորումներով տարածված է ոչ միայն Հայության, այլև շատ այլ ազգերի մեջ, սակայն մեր պարագայում, կարծում ենք, խնդիրը ձեռք է բերել մեծ կարևորություն՝ կապված նաև աշխարհագրական և քաղաքական իրավիճակի հետ: Ավելորդ չէ շեշտել, որ մեզանում տարածում ունեցող «տեղային ազգայնականության» կամ «տեղային հայրենասիրության» նկատմամբ ազգային գաղափարախոսությունն ունի ընդգծված բացասական վերաբերմունք և բացառում է Հայության մեջ ցանկացած խտրականության արտահայտություն<sup>1</sup>:

Վերը թվարկված երևույթներից անմասն չէ նաև Թուրքիայի հայությունը: Ստեղծված իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար հարկ է համառոտ անդրադառնալ Ստամբուլի հայ համայնքի ոչ հեռավոր անցյալի որոշ մանրամասներին:

Պոլսահայ համայնքն այսօր կանգնել է բազմաթիվ լուրջ խնդիրների առաջ՝ դպրոց, լեզու, մշակույթի պահպանում և այլն: Հարկ է նշել, որ Թուրքիայի Հանրապետության վարած քաղաքականության հետևանքով համայնքում արտագաղթերը տարբեր տարիներին զանազան ինտենսիվությամբ շարունակվել են: Համեմատության համար փաստենք. 1920-ականներին Թուրքիայում կար շուրջ 300 հազար հայ, իսկ այժմ, ըստ պաշտոնական տվյալների, քրիստոնյա հայերի թիվը ընդամենը 60 հազար է<sup>2</sup>: Հայ համայնքի նվազումն անդրադարձել է նաև հայկական դպրոցների վրա. այսպես, եթե 1972-73թթ.

<sup>1</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս *Լայպան Մ.*, Ազգային գաղափարախոսության խնդիրները շուրջ, Երևան, 2008, էջ 37:

<sup>2</sup> *Kaplan S.*, 1915te ne oldu, İstanbul, 2005, s. 169.

ուսումնական տարում Ստամբուլում եղել է 32 հայկական դպրոց՝ 7366 աշակերտով, ապա 1999-2000թթ. ուստարում դպրոցների թիվը նվազել է 18-ի՝ 3786 աշակերտով<sup>3</sup>: Իսկ 2008թ. մայիս ամսվա տվյալներով՝ Ստամբուլի 18 հայկական դպրոցներում կա 3072 աշակերտ<sup>4</sup>: Ըստ պոլսահայ մանկավարժ Կարո Փայլանի. «Ամեն տարի 150-200 աշակերտ ենք կորցնում, և եթե այսպես շարունակվի, ապա առաջիկա տարիներին ստիպված կլինենք 6-7 դպրոց փակել»<sup>5</sup>: Իհարկե, հայ աշակերտների թվի նվազումը կապված չէ միայն արտագաղթերի հետ, այլ ունի հիմնավոր ուրիշ պատճառներ ևս:

Արտագաղթերի հետևանքով առաջացած այդ բացը պոլսահայ համայնքը լրացրել է տարբեր տարիներին գավառներից Ստամբուլ տեղափոխված հայության բեկորների շնորհիվ: Ընդ որում՝ ներգաղթած հայերը միշտ չէ, որ ունենին «իսկական հային» բնորոշ բոլոր հատկանիշները: Գավառահայերի փրկության գործով զբաղվել են Գարեգին Խաչատուրյան պատրիարքը (1951-1961թթ.), Շնորհք Գալուստյան պատրիարքը (1961-1990թթ.), որոնց ջանքերով շատ թրքախոս, քրդախոս և ուժացման եզրին հասած հայեր տեղափոխվեցին Ստամբուլ, իսկ նրանց երեխաները սովորելով հայկական դպրոցներում՝ կարողացան ինչ-որ չափով ինտեգրվել համայնքին: Նաև նրանցից է ձևավորված այսօրվա պոլսահայությունը:

Մակայն այսպիսի տարբեր շերտերից բաղկացած պոլսահայության մեջ միշտ էլ կարևոր և արդիական է եղել փոխադարձ ընկալման խնդիրը, պոլսահայ դիսկուրսում տարածված են եղել և այժմ էլ պահպանվում են ըստ ծագման վայրի հայերի բաժանումները կամ «իսկական պոլսահայ»-գավառահայ բաժանումները: Ընդ որում՝ իսկական պոլսահայը նշանակում է ավելի քաղաքակիրթ, ավելի մակարդակով, իսկ գավառացի՝ ցածր մակարդակի, հետամնաց, գավառական տարբեր բարքերի կրող և այլն: Մակայն, եթե իրատես լինենք, ապա ներկայիս պոլսահայ համայնքն իրականում կազմված է տարբեր տարիներին Ստամբուլ գաղթած գավառացի հայերի սերունդներից և, ըստ այդմ, փոխադարձ ընկալման խնդիրը նկարագրելիս ավելի ճիշտ կլինեք օգտագործել ոչ թե պոլսահայ-գավառահայ, այլ գավառահայ-գավառահայ բաժանարար բառերը: Իսկ պոլսահայ տերմինն ավելի նպատակահարմար է օգտագործել կամ պայմանականորեն, կամ դրա տակ հասկանալ ավելի շատ ստամբուլաբնակ հասկացությունը: Երևույթը ամենևին չտարածելով ողջ պոլսահայության վրա՝ հարկ եմ համարում նշել, սակայն, որ մշակութային և այլ կարգի տարբերությունների վրա հիմնված փոխադարձ խորթությունը ցայտուն է երևում ստամբուլաբնակ և հայաստանցի հայերի (որոնք Թուրքիա են գնում աշխատանք գտնելու համար) և անգամ ստամբուլաբնակ դարձած գավառահա-

<sup>3</sup> *Գոյումձեան Մ.*, Ակնարկ մը՝ Ստանպոլիայի Վարժարաններու Իրականութեան, Ստանպոլ, 2000, էջ 24:

<sup>4</sup> Unutmak mı Asimilasyon mu? Türkiye'nin Eğitim Sisteminde Azınlıklar <http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=409&DilId=1>

<sup>5</sup> Նույն տեղում:



յության տարբեր խմբերի միջև: Մեր անձնական դիտարկումները թույլ են տալիս պնդել, որ ներկայումս այս անջրպետի ամենակարևոր պատճառներից է դասակարգային տարբերությունը: Այսինքն՝ կարող ենք ասել, որ Ստամբուլում «տեղային ազգայնականությունը» զուգահեռ տարածված է և, միգուցե՝ նաև առաջնային է, «դասակարգային ազգայնականությունը»: Հենց դասակարգային տարբերությունն է հաճախ խոչընդոտ հանդիսանում, որպեսզի ստամբուլաբնակ հայության տարբեր խմբեր կարողանան ազատ շփվել միմյանց հետ, քանի որ նրանց կենցաղը, ապրելակերպը, մտածելակերպը և անգամ խոսվածքը տարբեր են: «Դասակարգային ազգայնականության» հետևանքով երբեմն գրանցվում են ամուսնալուծություններ տարբեր տարիներին Ստամբուլ տեղափոխվածների միջև, ինչը ցույց է տալիս, որ նրանց մեջ առկա տարատեսակ անջրպետները տասնամյակներն անգամ դեռ չեն կարողացել հաղթահարել:

Ի դեպ, խոսելով ամուսնությունների մասին կցանկանայինք անդրադառնալ ծպտյալ հայերի մեջ շարունակվող ներքին ամուսնությունների խնդրին և բերել մեկ օրինակ, որը, մեր կարծիքով, բավական խոսուն է: Այսպես, Խարբերդի գյուղերից մեկից Ստամբուլ տեղափոխված մի ծպտյալ հայի կամ այլ խոսքերով՝ կրոնափոխ «դոնմե» անվանվող կնոջ հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ նա ցանկանում է ամուսնացնել իր երկու որդիներին և հարսնացու է փնտրում: Մեր հարցին, թե արդյոք ցանկանում է հայ հարսնացուներ գտնել, նա պատասխանեց. «Ոչ, հայերը մեզ հետ չեն ամուսնանա»: Այդ դեպքում, հարցրեցինք, գուցե մուսուլման թուրք կամ քուրդ հարսնացու է փնտրում, որին հետևեց նրա պատասխանը. «Ոչ, ցանկանում եմ մեզ նման ընտանիքներից հարսնացուներ գտնել»: Փաստորեն, կարող ենք ասել, որ կրոնափոխ հայության շրջանում ներքին ամուսնությունների դրդող ազդակներից մեկը հնարավոր է համարել հայության մյուս խմբերին ինտեգրված չլինելու փաստը: Անգամ Ստամբուլում հաստատված կրոնափոխ կամ կրոնադարձ հայերը չինտեգրվելով պոլսահայությանը՝ ստիպված կամ ենթագիտակցորեն ձևավորել են (կամ գտնվում են դրա ճանապարհին) մի առանձին ազգագրական խումբ, որն իրեն տարբեր է համարում թե՛ հայերից և թե՛ թուրքերից: Միգուցե հենց այս ինտեգրված չլինելու հետևանքով է նաև, որ այսօր Թուրքիայի մուսուլման համշենահայերի մի մասն իրեն լրջորեն համարում է «հեմշին» ազգի ներկայացուցիչ, իսկ հայերենի այն բարբառը, որով խոսում է՝ «համշեներեն»<sup>6</sup>: Փաստ է նաև այն, որ մուսուլման համշենահայերի մեջ առկա նման դրսևորումներն այս կամ այն կերպ նկատվում են կրոնափոխված հայերի

<sup>6</sup> Ի դեպ, հարկ է նշել, որ իսլամացված համշենահայերին Հայության տարբեր խմբերի կողմից վանելու փաստեր արձանագրվել են ոչ միայն Թուրքիայում, այլև, օրինակ, 1944-ին Աջարիայից Միջին Ասիա քստրված կրոնափոխ համշենահայերի պարագայում: Ինչպես փոխանցում է համշենահայերի խնդիրներով տասնամյակներ զբաղվող հայագետ Սերգեյ Վարդանյանը, Միջին Ասիայի իսլամացված համշենահայերի ձգտումները՝ վերինտեգրվելու Հայությանը, ԽՍՀՄ տարիներին հանդիպում էին անտարբերության և սառնության Հայության կողմից, և 1980-ականներին Միջին Ասիա այցելած Վարդանյանին կրոնափոխ համշենահայերից շատերն ասել են, թե ինքն առաջին հայն է, որն իրենց հայ է համարում:

տարբեր խմբերի և սերունդների շրջանում ևս, և սրանք էլ հիմք են տալիս շատերին պնդելու, թե կրոնափոխվելուց հետո այդ մարդիկ դադարել են հայ լինել: Մակայն գիտականությունը պահանջում է յուրաքանչյուր նման խմբի մոտենալ յուրովի, քննել հանգամանքների ու իրավիճակի ազդեցությունը նրանց վրա և հնարավոր արդյունքներն այդ ամենի փոփոխման դեպքում:

Թուրքիայի հայերի միջև հաստատված խնդրահարույց հարաբերությունները վերջերս համայնքային մի ընտրության արդյունքում ձեռք բերեցին հրապարակային բնույթ: Այսպես, մարտի 22-ին Ստամբուլի Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնադրամի ղեկավար կազմի ընտրություններն էին: Հարկ է նշել նաև, որ հիշյալ հիմնադրամը տիրապետում է բավական մեծ ֆինանսական միջոցների, և բնական է, որ սպասվելու էր լարված պայքար: Եկեղեցու հիմնադրամը երկար տարիներ կառավարել է պոլսահայ համայնքի ներկայացուցիչ Ափիկ Հայրապետյանը, որը 85 տարեկան է և այս ընտրություններում կրկին առաջադրել է իր թեկնածությունը: Նրա դեմ իր թեկնածությունն էր առաջադրել նաև Մուրադ Բեշթեփեն, որին աջակցում էին Ստամբուլում հաստատված սասունցիները: Նշենք, որ նախընտրական շրջանում արդեն նկատվող լարվածությունն ուղեկցվում էր փոխադարձ մեղադրանքներով, սակայն սասունցիների և նրանց թեկնածուի դեմ կիրառվող ամենատարածված հակաքարոզչությունն այն էր, որ նրանք հայախոս չեն, անգամ հայ էլ չեն, այլ քուրդ, և պետք չէ եկեղեցին հանձնել քրդերի կառավարմանը: Փաստորեն, տասնամյակներով հրապարակայնորեն չբարձրաձայնված մտքերն օգտագործվեցին ընտրական քարոզչական տեխնոլոգիաներում: Այս մեթոդի ընտրությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, կա մի զանգված, որի վրա էլ հենց պետք է ազդեցություն թողնեին վերոնշյալ մտքերը: Նախընտրական շրջանում անգամ առաջացան տերմիններ, որոնք միտված էին էլ ավելի խորացնելու առկա անջրպետը. այսպես, հիմնադրամի ղեկավարության համար պայքարող «հին պոլսահայերի» թևն սկսեցին անվանել «սպիտակ հայեր»՝ ըստ երևույթին փորձելով շեշտել նրանց «ազնվական» ծագումը, իսկ մյուս թևին տրվեց գավառահայեր անվանումը: «Սպիտակ» և գավառացի հայերի բանավեճը լայնորեն արտացոլվեց համայնքային կյանքում և առաջ բերեց համակիրների բանակներ, որոնց շրջանակներում էլ շարունակվեց պայքարը: Ավելին՝ Սուրբ Երրորդություն հիմնադրամի ընտրությունների շուրջ բարձրացած աղմուկը դուրս եկավ համայնքային շրջանակներից, դրան անդրադարձան նաև թուրքական թերթերը: Օրինակ, «Հյուրիեթը» իր «Թուրքերով, քրդերով հայկական ընտրություններ» վերնագրով հոդվածում մանրամասն նկարագրում էր իրավիճակը<sup>7</sup>:

Մեր անձնական դիտարկումները և պոլսահայ ու թուրքական մամուլում տպագրված հոդվածները թույլ են տալիս պնդել, որ այդ ընտրությունների

<sup>7</sup>Türklü, Kürtlü Ermeni seçimi, Hurriyet, 4.5.2009

հետևանքով համայնքում առաջացան երկփեղկված տրամադրություններ: Օրինակ, «Ակօս» շաբաթաթերթը, որն ակտիվորեն լուսաբանում էր հիմնադրամի շուրջ ընթացող զարգացումները և քննադատում գավառացի հայ ու պոլսահայ բաժանումները, համայնքի տարբեր անդամների կողմից արժանացավ քննադատության, թե իբր խիստ չափազանցված և միտումնավոր է ներկայացնում հայության միջև եղած անջրպետը և հրահրում արհեստական լարվածություն<sup>8</sup>: Ուշագրավ է հատկապես այն, որ երկու կողմերն էլ դեմ էին արտահայտվում պոլսահայ և գավառացի հայ խտրական սահմանումներին և դա վնասակար համարում համայնքի շահերի համար: Պոլսահայ Արեթ Յամանն իր հոդվածում փոքր-ինչ հոետորական հարց է առաջ քաշում, որը ևս մտորելու տեղիք է տալիս: Այսպես, նա իրավացիորեն հարցնում է, թե ինչու մինչև այժմ համայնքում նման վեճեր և խտրականություն չեն եղել, իսկ հիմա դա որոշ թերթեր (նկատի ունի «Ակօսը») տարածում են<sup>9</sup>: Իհարկե, մենք համաձայն չենք հեղինակի հետ, քանի որ խտրական տրամադրությունները միշտ էլ եղել են Պոլսի հայ համայնքի մի հատվածի մեջ, ուղղակի դրանք նման հնչեղություն մինչ այդ չէին ստացել: Խտրական վերաբերմունքի ցայտուն օրինակներ կարող ենք հանդիպել տարբեր տարիներին գավառներից Ստամբուլի հայկական դպրոցներ սովորելու եկած հայերի մեջ: Օրինակ, ԱՄՆ-ում հաստատված մալաթիացի մի հայի պատմածը խորությամբ պատկերում է Հայության մեջ տարածված խտրականության տարբեր դրսևորումները: Այսպես, ըստ նրա. «Մեզ Սալաթիայում շրջապատի մուսուլմաններն ասում էին «գլավուր» հայեր, երբ տեղափոխվեցինք Ստամբուլ, հայկական դպրոցում մեր համադասարանցիները մեզ ասում էին «քրդեր»: Տարիներ հետո տեղափոխվեցինք Հայաստան, ուր մեզ անվանում էին «ախպարներ», իսկ ԱՄՆ-ում հաստատվելուց հետո, ի վերջո, մեզ սկսեցին անվանել «հայաստանցիներ»:

Ինչպես իրավացիորեն նշում է «Ակօս»-ի հեղինակներից Ռոբեր Քոփթաշը. «Ընտրությունները մեզ դեմ հանդիման հանեցին հայ համայնքի ներսում եռացող խտրականությանը»<sup>10</sup>: Կրկին ըստ Քոփթաշի, հին ստամբուլաբնակ հայերի կողմից գավառներից համեմատաբար ավելի ուշ Ստամբուլ տեղափոխվածներին չընդունելու համար, բացի դասակարգային պատճառներից, կան նաև կենցաղային հանգամանքներ: Օրինակ՝ հայերեն չիմանալը, թուրքերենի բարբառային կիրառումը, նույնիսկ հագնվելու ոճը: Այս ամենը հայության մի շերտի համար շատ կարևոր է, քանի որ ըստ տարածված տեսա-

<sup>8</sup> Çiçekeker A., Suni gündem: Beyaz Ermeni-taşralı Ermeni ayrımı, [www.hyetert.com/yazi3.asp?s=3&Id=434&Dilld=1](http://www.hyetert.com/yazi3.asp?s=3&Id=434&Dilld=1)

<sup>9</sup> Yaman A., Beyaz Ermeni tartışmaları, [www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=436&Dilld=1](http://www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=436&Dilld=1)

<sup>10</sup> Yaman A., Beyaz Ermeni tartışmaları, [www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=436&Dilld=1](http://www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=436&Dilld=1)

<sup>10</sup> Koptaş R., Mağdur Ermeni, gaddar Ermeni, Agos, 03.04.09

կետի՝ հայերը միայն քաղաքակիրթ, բարձրաշխարհիկ պետք է լինեն, իսկ գավառահայերը լուրջ վնաս են հասցնում արդեն ձևավորված հայի կերպարին<sup>11</sup>: Այստեղից է ծագում նաև նրանց քուրդ անվանելով՝ «իսկական հայի» կերպարը մաքուր պահելու ձգտումը:

Գալով «Ակօս»-ի և նրա ընդդիմադիրների վեճին՝ նշենք, որ կրքերն այնքան լարվեցին, որ Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնադրամի հին թիմը բոլորովին վերջերս դատի տվեց թերթին: Որպես հիմնավորում նշվում էր թերթի կողմնակալ լուսաբանումը: Հայցող կողմը «Ակօսից» պահանջում է ավելի քան 30 000 ԱՄՆ դոլարի փոխհատուցում: Անդրադառնալով այս խնդրին՝ Հրանտ Դինքի եղբայրը՝ Երվանդ Դինքը, հիշեցնում է վերջերս Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլի հայցն ընդդեմ պատգամավոր Ջանան Արըթմանի, որը նրան մեղադրում էր հայկական ծագում ունենալու մեջ, և սարկազմով նշում. «Նույնիսկ նախագահը «պատիվը վիրավորելու» համար բացած դատական հայցում որպես փոխհատուցում պահանջում էր ընդամենը 1 լիրա»<sup>12</sup>: Իրոք, ցավալի է, որ ներհամայնքային վեճն այսպիսի ընթացք է ունենում, սակայն, միևնույն ժամանակ, մտահոգիչ է, որ «Ակօս»-ի դեմ դատական հայցով հանդես եկած բացահայտ պանթուրքիստների, ազգայնամուլների, «էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության անդամների շարքին ավելացան նաև մեր ազգակիցները: Սակայն, ինչպես նշում է Երվանդ Դինքը, այս դատերը չեն փոխելու «Ակօս»-ի դիրքորոշումը<sup>13</sup>:

Անկասկած է, որ Հայության տարբեր խմբերի միջև փոխադարձ ընկալումը և լավ հարաբերությունները կարող են օգուտ բերել հենց Հայությանը, իսկ նոր բաժանարար գծեր գտնելն ու դրանք քարոզելը խաթարում են մեր առանց այն էլ երբեմուն միասնականությունը: Այս ամենով հանդերձ պետք է գիտակցել, որ նման երևույթներ տարածված են ոչ միայն Հայության և ոչ միայն Թուրքիայի հայերի շրջանում. մեր ամենօրյա կյանքում մենք բախվում ենք մշակութային և այլ տարբերությունների վրա հիմնված փոխադարձ խորթության և դրանից բխող այլ հետևանքների: Այստեղ մենք խնդիր չենք հետապնդում ճիշտ և սխալ կողմեր փնտրել կամ «մեղադրել» որևէ մեկին, քանի որ իրականում ստեղծված իրավիճակի հասցեատերը բոլորս ենք: Սակայն այս բարդ խնդրի լուծման կամ, ավելի ճիշտ՝ մեղմացման համար դեղատոմսեր մշակելն ու կիրառելն անհնար չէ, ուղղակի կամք ու գիտակցություն են պետք:

Ստամբուլի Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնադրամի մարտի 22-ի ընտրությունները և դրա արձագանքները շարունակվում են և կարծես հակ-

<sup>11</sup> Koptaş R., Güç siyaseti, Agos, 03.04.09

<sup>12</sup> Dink Y., Bu gençlere laf anlatmak çok zor..., Agos, 01.05.09

<sup>13</sup> Նույն տեղում:

ված էլ չեն մարելու, քանի որ վերաբերում են ոչ միայն նյութական, այլև ավելի խոր խնդիրների: Ճիշտ է, այդ ընտրություններն ավելի ուշ չեղյալ հայտարարվեցին՝ կապված մի շարք հանգամանքների, ապօրինությունների հետ, և ներկայումս սպասվում է ավելի լայն համահամայնքային ընտրություն, սակայն խնդիրը բաց է, և ինչպես նշում է Երվանդ Դինքը, իրենք այս խնդիրը տեղափոխելու են համահայկական քննարկման, քանի որ դրա տերը և որոշում ընդունողը, ի վերջո, հայկական աշխարհն է<sup>14</sup>:

<sup>14</sup> Նույն տեղում:

**«ԳԼՈԲՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր**  
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԲ» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ Արդարադատության նախարարության  
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.  
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ՝ [globus@noravank.am](mailto:globus@noravank.am), [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46  
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 26.06.2009թ.  
Թիվ 3 (7), 2009թ.  
Տպարանակը՝ 200:

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 5 մամուլ:  
Տառատեսակը՝ Sylfaen  
Տպագրվել է «Գասպրինտ» ՄՊԸ տպարանում